

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Այսօր ստեղծուող գրականությունը որքանով կը ցուցանե սփիւռքի իսկական ու հարազատ դեմքը: Արդեօք լեզուն, այս պարագային արեւմտահայերէնը, օրէ օր սփիւռքի ընդլայնուող սահմաններուն հետ, ճկուն ու հարազատ մշակումով կը ստեղծէ իր ժամանակն ու յիշողութիւնը, կը մտածէ ինքզինք, իր շրջապատը, առօրեան եւ վերջապէս կեանքը, կամ պինդ պրկումով մը տակաւին կը փորձէ վերապրիլ երէկուան իր կախարդանքը:

Հարցումներ, որոնք յաճախ մեր մտքերը կ'ալեկոծեն, որովհետեւ երբ մամուլին մէջ, գրական թէ այլ, կը կարդաս հայերէն, կեանքդ շարժումի մէջ դնող արեւմտահայերէնը, յանկարծ կ'անդրադառնաս, որ թուղթին վրայ ժամանակը կանգ առած է լեզուին մէջ, լեզուն բրածոյացած է ու յանկարծ օտարումի եւ մինակութեան վախը կը պրկէ ինքնութեանդ թելերը խաղցնող ու բերնիդ մէջ դարձող լեզուին շարժիչները: Այս բոլորէն անկախ, ամենէն ահաւորը, սակայն, անդրադարձումն է, երբ կը զգաս թէ ինչպէս լեզուին մէջ/հետ «ստեղծագործող» միտքն ալ սառած է, ու լեզու/միտք տափակ, խայծէ ու թրթռացումէ գուրկ կմախքի պէս ամուր փակած են քարին, որ յանկարծ չկորսուին, չաղաւաղուին, չզայթակղին կամ չզայթակղեցնեն:

Ճորճ Օրուէլ, որ իր գրականութեամբ պայքարած է ֆաշականութեան եւ մենատիրութեան դէմ, 1984 գիրքին մէջ կ'անդրադառնայ, թէ ինչպէս լեզուն հիմնարար միջոց կը հանդիսանայ կառուցելու մարդկային միտքը, կամ՝ սահմանափակելու անոր թռիչքը: Անշուշտ, Օրուէլ կը խօսի քաղաքականացուած լեզուին մասին, նշելով որ քաղաքական գաղափարախօսութեամբ ստրկացած միտքը չի կրնար յեղափոխութեան մասին խօսիլ, քանի որ չունի յեղափոխութիւնը ջատագովող բառամթերք: Անգլիացի հեղինակին յիշատակումը այստեղ պատահական չէ: Եթէ Օրուէլէն ուռկան մը նետենք դէպի այսօրուան մեր իրականութիւնը, զանց առնելով բացառութիւնները, կ'անդրադառնանք, որ սփիւռքեան մեր մամուլին մէջ (գրական, բայց մասնաւանդ այլ) օգտագործուող հայերէնը եթէ ոչ ֆաշական, բայց այլ գաղափարախօսութիւններու բառամթերքով կը մտածէ, կամ չի մտածեր, իսկ գրական մամուլն ալ անցեալի լեզուն որպէս գաղափարախօսութիւն ընդունելով, բառերը կը վերարտադրէ, սակայն չի ստեղծագործեր:

Եթէ կարենանք քիչ մը աւելի հանգիստ ըլլալ այսօրուան սփիւռքի պայմաններէն ծնած մեր ինքնութեան հետ ու որպէս գրող կամ մտածող պահենք մեր անկեղծութիւնն ու հարազատութիւնը, ու բաց աչքերով նայինք մեր ներկային ու անոր միջավայրէն բխող հարցերուն եւ տագնապներուն, գուցէ ուշ չէ սփիւռքեան գրականութեան մէջ նոր էջ մը բանալու, ժամանակակից մտածողութեամբ, լեզուամտածութեամբ, կարենալ բան մը ըսելու նախ մենք մեզի ու ապա (գուցէ) մեզմէ ետք եկողներուն, ժամանակի մը մասին, որ կորստեան եզրին է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական 1

Հատուած՝ *Վարդագոյն Փիղը* թատերախաղէն | Վահէ Պերպերեան..... 5

10 ՀԱՐՑՈՒՄ ՎԱՃԷ ՊԵՐՊԵՐԵԱՆԻՆ

Յիշողութիւնը իր լեզուն ունի | Խ. Տէր Ղուկասեան 10

Առանձնութիւն | Մարուշ Երամեան 17

Սէր | Յարութիւն Պերպերեան 24

Ուրեմն պատմութիւն կ'ուզես | Վեհանոյշ Թեքեան 29

Երբ լսողութեանդ ակերն են | Կարօ Արմենեան 36

Խմբագիր | Սոնիա Զիլեճեան-Աճեմեան
 Փոխխմբագիր | Վարդան Մատթեոսեան
 Գործավար | Արին Չեքիճեան
 Ձեւաւորում եւ էջադրում | Անոյշ Ակսերեան

Խմբագրական խորհուրդ

- | | |
|---------------------|---------------------|
| Մարուշ Երամեան | Արամ Պաչեան |
| Վիգէն Թիւֆէնքճեան | Սեւան Տէյիրմէնճեան |
| Յակոբ Կիլլիւճեան | Խաչիկ Տէր Ղուկասեան |
| Աւետիս Հաճեան | Սիրնա Տուզճեան |
| Շաղիկ Մկրտիչեան | Յարութիւն Զիւրքճեան |
| Արքմենիկ Նիկողոսեան | |



Կողքի նկարը. *Kind of Blue 60x96 Acrylic on Canvas 2010, գործ՝ Վահե Պերպերեանի*

Բերիաշենի երկրորդ պատերազմը (Մաս 2) Ալեստիս Հանեան	43
Հօրաքոյրը, որի քիթը կծել-չէր պոկել իր սիրածի կինը Արծուի Բախչինեան	54
մերօրեայ «հայը եւ հայր» ռուբէն խաժակ	61
Նիկոլ Աղբալեան, Կոստան Չարեան եւ Սիմոն Սիմոնեան Վարդան Մատթէոսեան	63
«Տղամարդու» եւ «կնոջ» «սերեր»ը Վիլյէթ Գրիգորեան	70

Հրատարակութիւն՝ Համազգայինի Կեդրոնական վարչութեան

Հասցէ՝

Պուրճ Համուտ
Շաղգոյեան կեդրոն, Բ. յարկ
E-mail: pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Ցրուումի կեդրոն՝

Համազգայինի Գրատարած,
Շաղգոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ

Հեռ. (01) 241263/4

Ֆաքս. (01) 260329

Փոստարկղ. 80 1096 Պուրճ Համուտ

E-mail: print@hamazkayin.com

Տպագրութիւն՝

Համազգայինի
«Վահե Սէթեան» տպարանի



Ինչպէս կրնաս հայերէն գրել եւ հարագատ հնչել, մանաւանդ երկխօսութեան պարագային, երբ մեր խօսակցական լեզուին կարելոր մէկ մասը Սփիւռքի մէջ, օտար բառեր են: Եթէ Ամերիկայի մէջ կ'ապրիս՝ անգլերէն են, եթէ Լիբանան կ'ապրիս՝ արաբերէն, եթէ Թուրքիա ես՝ թրքերէն, եւ այլն: Այն վայրկեանին որ լեզուն մաքրելու փորձ ընես, արդէն հարագատութեան մուխը կը մարես: Այնպէս որ յաճախ ստիպուած ես ստեղծած կերպարներդ այլակերպել, որպէսզի իրենց խօսած լեզուն աւելի համոզիչ ըլլայ: Սա ալ ըսեմ որ լեզուն իր յիշողութիւնը ունի, կամ պետք է ըսեմ՝ յիշողութիւնը իր լեզուն ունի:

ՎԱՀԷ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՎԱՐԴԱԳՈՅՆ ՓԻՂԸ* (ՀԱՏՈՒԱԾ)

ՎԱՀԷ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

(Յաջորդ օրն է: Ներկայացումը սկսելէն քանի մը վայրկեան առաջ կը լսուի մեղմ երաժշտութիւն: Ցոյակ բեմ կը բարձրանայ ու խօսքը ժողովուրդին ուղղելով, թուղթի կտորէ մը կը կարդայ:)

Ցոյակ.– Սիրելի ներկաներ,
Ներողամիտ եղէք քանի մը վայրկեան ուշացումին համար: Մինչեւ հիմա, տակաւին վերջնականապէս որոշած չէինք, որ թատերախաղը այսօր բեմ պիտի հանենք կամ ոչ: Ինչպէս վստահ եմ, որ գիտէք, մեր թատերախումբը քանի մը ամիս շարունակ քաղաքական այս ամենէն աննպաստ պայմաններուն մէջ, ռումբերու տակ փորձ ըրած է, այսօր բեմ հանելու համար այս ներկայացումը: Սակայն քաղաքական այս վերջին իրադարձութիւնները շուարումի մատնեցին մեզ: Միութիւնս սկիզբը մտադրեց յետաձգել ներկայացումը, սակայն տողոց տրամադրութիւնները շօշափելէ ետք, որոշեցինք ներկայացնել թատերախաղը: Ինչպէս արդէն գիտէք, մեր յաջորդ ներկայացումը տեղի պիտի ունենայ վաղը՝ Շաբաթ, միւս օրը՝ Կիրակի եւ յաջորդաբար ամէն Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի օրերը, եթէ անշուշտ պարագաները ներեն: Կը յուսանք որ վարչապետին հրաժարիլը նոր տագնապներու առիթ չտայ, կեանքը գտնէ իր բնականոն ընթացքը եւ մեր պատուական տղաքը՝ թատրոնի խենթերը, շարունակեն իրենց նուիրումի աշխատանքը: Շնորհակալութիւն: *(Կ'իջնէ բեմէն վար):*

(Վարագոյրը կը բացուի երաժշտութեամբ: Բեմը պարսպ է: Միայն հաստ տախտակներէ շինուած տոկուն կահաաղան մը կայ բեմին վրայ եւ պարանին տակ դրուած է աթոռ մը: Ռուբէն եւ Վաչէ արագօրէն ներս կը մտնեն ու կ'ուղղուին դէպի բեմին առջեւի մասը):

Ռուբէն.– *(ժողովուրդին ակնարկելով)* Յոս Են: Քեզի ըսի որ հոս կ'ըլլան:

Վաչէ.– Անհաւատալի է: Այսպէս կը նստին կը դիտեն:

Ռուբէն.– Այո: Երբեմն կը խնդան, երբեմն կը ձանձրանան, երբեմն ցած, շատ ցած ձայնով իրարու հետ կը խօսին, ոտք ոտքի վրայ կը դնեն, յետոյ ոտքերը կը փոխեն, բայց ընդհանրապէս այսպէս կը նստին ու կը սպասեն:

Վաչէ.– Իրապէս զարմանալի է: Կրնամ նկարել:

Ռուբէն.– Անշուշտ:

Վաչէ.– *(Ժողովուրդին)* Կրնամ ձեզի նկարել:

Ռուբէն.– Ընդհանրապէս չեն պատասխաներ:

(Վաչէ կը սկսի լուսանկարել):

Ռուբէն.– Երբեմն արարողութենէն երկու-երեք ժամ առաջ կու գան, դուրսը կը նստին, կը սպասեն դռներուն բացուելուն, որպէսզի լաւ նստարաններ ապահովեն: Երբ ամբաստանեալը ներս բերուի, յանկարծ քար լռութիւն կը տիրէ: Երբ դահիճը ամբաստանեալին յանցանքները կը կարդայ, սրահին մէջ կամաց-կամաց պրկուած մթնոլորտ մը կը սկսի տիրել, յետոյ կը սկսին կատողի, կը պոռան, կը հայհոյեն, երբեմն ամբաստանեալին վրայ կը թքեն, լոյիկ կը նետեն, մինչեւ որ պարանը ամբաստանեալին վզին անցնի: Յետոյ բոլորը միասին «մահ, մահ, մահ, մահ» կը սկսին մրթմրթայ: Նախ շշուկի պէս կը սկսի, յետոյ վարակիչ կը դառնայ, մինչեւ որ բոլորը, գրեթէ նոյն ձայնով, նոյն ոճով կը սկսին մահապատիժին գործադրութիւնը պահանջել: Երբ աթոռը ամբաստանեալին ոտքերուն տակէն կը քաշուի, դարձեալ քար լռութիւն կը տիրէ: Բոլորը հեւ ի հեւ կը սպասեն մահապատիժին վերջին ցընցումներուն: Յետոյ ծափահարելու կը սկսին, կամաց կամաց ոտքի կ'ելլեն եւ խուճ-խուճ կ'երթան: Լաւ, կը բաւ՛ նկարես:

Վաչէ.– Յուզումն ես:

Ռուբէն.– Անշուշտ *(Պայթիւն):*

Վաչէ.– Պայթումները նորէն սկսան: Յուսամ կը յետաձգեն մահապատիժը:

Ռուբէն.– Չեմ կարծեր:

Վաչէ.– Պայթումները նորէն սկսան: Յուսամ կը յետաձգեն մահապատիժը:

Ռուբէն.– Չեմ կարծեր:

(Կը լսուի փողերով լեցուն երաժշտութեան ձայն: Ներս կը մտնէ Աբօ, դահիճի տարապով, հետը բերելով Սիմոնը, որուն ձեռքերը ետեւ կապուած են: Կը լսուի ծափահարութիւն եւ աղմուկ: Երբ աղմուկը կը դադրի, Աբօ կը բանայ թուղթի կտոր մը եւ կը սկսի կարդալ:)

Աբօ.– Ժողովուրդ,
Մահապարտը, որ այսօր ձեր աչքերուն առջեւ պիտի ստանայ իր արժանի պատիժը, ամբաստանուած է՝
Պետութիւնը վարկաբեկել փորձելու,
Պետութեան դէմ խափանարարական արարքներ ծրագրելու հակաընկերային քարոզչական աշխատանք տարած ըլլալու եւ հակաբարոյական կեցուածքի մէջ գտնուելու յանցանքով: Արդ, ան զանազան առիթով մերժած է կլլել իր դեղահատները: Իր ազդեցութիւնը գործածած է համոզելու համար իր շուրջինները, որ չընդառաջեն զօրա-

կոչին: Քարոզած է սեռային սանձարձակութիւն եւ նոյնիսկ խրախճանք մը կազմակերպած է նախագահին վախճանած գիշերը: Մերժած է սեւ փողկապ կապել, եւ վերջապէս, յայտարարած է, թէ ինք հարստանալու եւ իր շուրջիններուն հետ մրցակցութեան մէջ մտնելու նպատակ չունի: Նման անձ մը, անբաղձալի մակարոյծ մըն է մեր ընկերութեան համար եւ վստահ ենք, որ ժողովուրդը միաձայնութեամբ ու մեծ հաճոյքով պիտի վաւերացնէ ամբաստանեալին մահապատիժը: *(Պայթիւն):*

(Կը լսուի ծափահարութիւն, աղմուկ եւ աղաղակ) Ամբաստանեան, վերջին խնդրանք մը ունին:

Սիմոն.— Կ'ուզեմ Թոմասսօ Ալպինոնիի Ատաճիոն մտիկ ընել: Լուսինը կ'ուզեմ: Արեւը կ'ուզեմ: Վերջին անգամ կնոջ մը վիզը համբուրել կ'ուզեմ: Ջութակ նուագել սորվիլ կ'ուզեմ: Կ'ուզեմ յոյի ըլլալ: Կ'ուզեմ 25 հատ պրզտիկ բերել: Մարիամ Աստուածածնին կուրծքին պտուկը համբուրել կ'ուզեմ:

Աբօ.— Լո՛՛ւ, կը բաւէ:

Սիմոն.— Կ'ուզեմ ձանձրանալ..

Աբօ.— *(Պարանը Սիմոնին վզին անցնելով)* Կը բաւէ:

Սիմոն.— Խօսիլ կ'ուզեմ: Կ'ուզեմ շարունակել:

(Կը լսուի ժողովուրդին դժգոհ ձայներն ու սուլոցները: Կը լսուի «մահ, մահ, մահ, մահ» կանչը, որ երթալէն կը բարձրանայ: Սիմոն կը շարունակէ, բայց ձայնը կը խեղդուի: Աբօ արագ հարուածով մը կը հրէ աթոռը ու Սիմոն կը կախուի: Քար լռութիւն: Սիմոն քանի մը երկվայրկեան կը ցնցուի, յետոյ կ'անշարժանայ: Մինչ այդ Վաչէ կը շարունակէ նկարել: Յանկարծ աղիողորմ ճիչ մը արձակելով բեմ կը մտնէ Նինա ու կը վապէ Սիմոնին վրայ: Կը գրկէ ոտքերը, կու լայ, կը հեկեկայ):

Աբօ.— *(Ժողովուրդին)* Հաւատացէք, որ ես իմ առօրեայ կեանքիս մէջ ճանճ մ'ալ չեմ կրնար սպաննել: Քալած ատենս զգոյշ կ'ըլլամ, որ միջատի վրայ չկոխեմ: Բայց... մարդ ըսուածը որքան պատասխանատուութեան տակ մտնէ, այդքան զիջումներ կատարելու պարտաւորուած կ'ըլլայ: Սկիզբը ես իբրեւ հիւանդապահ բանտին մէջ գործ գտայ. յետոյ ամուսնացայ, երկու մանչ զաւակ ունեցայ, երկուորեակ, ստիպւած քիչ մը աւելի լաւ վճարող գործ մը փնտռեցի: Այդ շրջանին բանտապահներուն ամսականը աւելի էր, բանտապահ ըլլալու համար դիմում ըրի, ընդունեցին: Երկու տարի ետք, ինծի այս պաշտօնը առաջարկեցին, ես ալ, բաւական մտածելէ ետք տեսայ որ աւելի խելքի պառկելիք է, ելայ այս գործը առի: Իրականութեան մէջ ըրածս զիջումի հետ կապ չունի: Վճարումը այդքան մեծ բան չէ, բայց առ-

նըւազն հոգեկան գոհացում մը կայ, որ դժուար է ամէն տեղ գտնելը: Դիւրին գործ չէ: Երբ նոր սկսայ, երագիս մէջ ամէն օր հարիւրաւոր մարդիկ կը կախէի: Գիշեր ցերեկ կը մտածէի մահապարտին վերջին ցաւերը մեղմացնելու համար նոր ձեւեր գտնելու մասին: Ժամանակի ընթացքին անդրադարձայ, որ ժողովուրդին ծառայութիւն մըն է մատուցածս: Չէք կրնար երեւակայել, թէ ինչ զգացում մը կ'արթնայ մէջս, երբ ժողովուրդին խանդավառութիւնը կը տեսնեմ: Հոս, ես դերասանապետն եմ: Այլեւս գոհին եւ իր պարագաներուն մասին չեմ մտածեր: Դերս լաւագոյն ձեւով խաղալու մասին կը մտածեմ: Տղաքս այնքան հպարտ են ինձմով, որ կ'երագեն մեծնալէ ետք գործս ընել: Տունը՝ պզտիկ խաղալիքէ կախադաններ շինած են եւ գիշեր ցերեկ ատով կը խաղան: *(Պայթիւն):*

Վստահ եմ որ շատեր արգահատելի կը գտնեն գործս, բայց համոզւած եմ, որ օրինաւոր կերպով մարդ սպաննելուն մէջ սխալ բան չկայ: Վերջի վերջոյ, Աստուած մեր բոլորին մահապատիժը կը գործադրէ, բայց բոլորս ալ կը պաշտենք զինք: *(Պայթիւն):*

(Արօ կահաադանէն կը հանէ Սիմոնը ու կը պատկեցնէ գետին: Նինաս Սիմոնը գրկած կը մնայ):

Արօ.— *(Վաչէին)* Լաւ նկարներ նկարեցի՞ր:

Վաչէ.— Բաւական *(պօրաւոր պայթիւն):*

(Արօ եւ Վաչէ խօսակցելով դուրս կ'ելլեն: Կը տիրէ ծանր լռութիւն):

Սիմոն.— Հօրաբրոջս խոհանոցի սրճագոյն գոգնոցը կ'ուզեմ: Վարչապետին ինքնաշարժին վրայ հասունցած լոլիկ նետող ցուցարարը կ'ուզեմ ըլլալ... *(Մինչ այդ Նինաս քրքջալու կը սկսի):* Մայրս կ'ուզեմ: *(Պայթիւն: Սիմոն կը սկսի շարժի)* Վերջին անգամ մայրս կ'ուզեմ տեսնել... *(Սիմոն կը շարունակէ մրթմրթալ, կը բաժնուի Նինայէն եւ լոյսերը հետը կ'հետէ կը մարին: Երբ դարձեալ լոյսերը կը վառին, Սիմոն կահաադանէն կահուած օրօրոցին վրայ նստած կ'օրօրուի: Կը լսուի պայթիւններ, երաժշտութիւն: Ռուբէն կանգնած է բեմին ետեւի կողմը):*

Սիմոն.— Անկարելի է Ալֆոնս: Անկարելի է: Աննպատակ ապրող մարդ չկայ աշխարհի վրայ: Ամէն մարդ նպատակ մը ունի: Իրականացնելիք երազ մը ունի, կամ ամնուազն յոյս ունի, որ փափաքը ուշ կամ կանուխ պիտի իրականանայ: Համաձայն չեմ:

(Ռուբէն չի պատասխաներ: Կը լսուի պայթիւն մը եւ բեմին ետեւի վարագոյրը կ'իյնայ, մէջտեղ հանելով Մասիար: Շուարած մթնոլորտ մը կը տիրէ բեմին վրայ: Խորէն սրահին մէջէն վապելով կը մտնէ եւ Տոլակին՝ որ ժողովուրդին մէջ նստած է, քանի մը խօսք կ'ընէ: Ռուբէն կռնակը ժողովուրդին դարձուցած մէկու մը հետ կը խօսի, որ քուլիսներուն ետեւն է: Արօ բեմ կը մտնէ: Տոլակ եւ Խորէն բեմ կ'ելլեն, ցած

ձայնով բողոքը կը փսիսան, մինչ այդ, Մինոն իր դերը կը փորձէ շարունակել: Ցուլակ վերջապէս կը կանգնի ժողովուրդին առջեւ ու խօսք կ'առնէ):

Ցուլակ.– Ներողամիտ եղէք այս ընդհատումին համար, բայց կարծեմ ստիպւած պիտի ըլլանք ներկայացումը յետաձգելու, ըստ երեւոյթին, քաղաքական վիճակը վատթարացած է եւ զինադադարը ջնջուած: Խուճապի մասնաւոր պատճառ չկայ, բայց պէտք է ըսեմ, որ հայկական հիւանդանոցին վրայ ռումբ մը ինկած է եւ քանի մը հոգի վիրաւորւած են: Կը խնդրենք որ առանց խուճապի մատնուելու ձեր տուները երթաք եւ կը խոստանանք որ ձեր տոմսերը այլ ներկայացումի մը ի զօրու պիտի ըլլան: Միայն կը խնդրենք որ ձեզմէ անոնք որ արիւն կրնան տալ, դուրսը՝ անցքին մէջ սպասեն, որովհետեւ հիւանդանոցը արիւնի պէտք ունի: Խնդրեմ նկատի առէք այս հարցը, որովհետեւ վստահ եմ, որ ձեր արիւնով կրնաք կեանքեր փրկել: Երթաք բարի: Շնորհակալութիւն:

(ՎԵՐՉ)

* *Վարդագոյն փիղը* Վահէ Պերպերեանի հեղինակած թատերախաղն է, երկու արարով: Առաջին անգամ ներկայացուած է 1986ին, «Փորձառական թատրոն»ին կողմէ Լոս Անճելըսի մէջ: Որպէս հրատարակութիւն լոյս տեսած է 1987ին, Լոս Անճելըսի մէջ:

10 ՀԱՐՑՈՒՄ ՎԱՋԷ ՊԵՐՊԵՐԵԱՆԻՆ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԼԵԶՈՒՆ ՈՒՆԻ

Խ. ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Լուսանկար՝ Պերճ Արապեանի



Վահեին իմ առաջին պատկերս 1970ականներուն Համագայինի Նշան Փայանճեան ճեմարանի բակին մեջ, երկար մազերով, Վ. Սէթեան տպարանը աշխատող հիփփի մըն է, որ Չօիրապ Եագուպեանին հետ *Գիբորի* բեմականացման մեջ պեզազ Արթինին դերը կը խաղար: Յետոյ *Ասպարէլ*ին մեջ սինեմայի մասին իր գրութիւնները մեծ հետաքրքրութեամբ կը կարդայի: *Նամակներ Չասթարէն* լոյս տեսաւ 1996ին, *Յանուն Հօր և Որդւոյ*՝ 1999ին... Այդ տարի կրկին հանդիպեցանք Հայաստան (ուրիշ ո՛ր պիտի ըլլար...), Վահէն արդէն բեմադրիչ էր, նկարիչ եւ գրող, եւ որպէս այդպիսին ան սփիւռքահայ առանձին երեւոյթ է:

Ինչպէ՞ս կրնաս վերլուծական ակնարկով մը ամփոփ կերպով ներկայացնել այս եռակի արուեստագետի վարձագումդ իր բեկումնային պահերով:

Կարծեմ այսօր ուր որ եմ, կամ աւելի ճիշդը ինչ որ եմ, այդ յիշածներուդ բնական զարգացումին հետեւանքն է: Շատ փոքր տարիքէս երաժշտութիւնը, նկարչութիւնը, գրականութիւնն ու դերասանութիւնը հմայած են զիս եւ միշտ դժուարութիւն ունեցած եմ մէկուն կամ միւսին յանձնուելու: Հայրս միշտ կ'ըսէր որ այդ սիրածներդ մէկը պիտի գատես եւ կեդրոնանաս, այլապէս ո՛չ մէկուն մեջ ալ պիտի յաջողիս վարպետ դառնալ: Ատոր համար ալ երաժշտութիւնը գոհեցի, բայց տարիներ ետք անդրադարձայ որ բնաւ պետք չունէի ինքզինքս չարչարելու որպէսզի մէկը կամ միւսը գատեմ, որովհետեւ այնպէս մը չէր որ թէ՛ ատաղձագործ կ'ուզէի ըլլալ, թէ՛ բժիշկ եւ թէ՛ օդաչու: Վերջին հաշուով, բոլորն ալ արուեստի տարբեր երեսներն էին եւ ուշ կամ կանուխ տեղ մը կը նոյնանային: Ինծի համար բոլոր արուեստներուս մեջէն ամենէն աւելի աշխատանք պահանջողը ինքզինքս ստեղծելը եւ վերաստեղծելը եղած է միշտ: Օսքար Ուայլտը հոյակապ խօսք մը ունի՝ «ես իմ հանճարս կեան-

քիս մէջ դրած են, ինչ որ արուեստիս մէջ դրած են միայն տաղանդս է»։ Այս խօսքը միշտ ալ միտած է զիս որ ամենն անելի ես իմ վրաս աշխատիմ։

Ամեն արուեստ կեանք է ինքնին և ինքնիրմով առաջին հերթին։ Բայց նաեւ փնտռտուք է։ Քու պարագայիդ ինչպէ՞ս կը սահմանես/ներկայացնես այդ փնտռտուքը քու կեանքիդ վարձացման ենթակայական ոլորտին մէջ։

Դժուար հարցում է, որովհետեւ չեն գիտեր թէ ըրած արուեստներուս մէջ որքանը փնտռտուքի արդիւնքի է, որքանը այդ փնտռտուքէն գտածս բաժնելու եւ որքանը պարգապէս արդիւնք է այն իրողութեան որ այսքան տարի վերջ փախուստ չունիմ, պիտի ստեղծեմ, որովհետեւ նոյնիսկ եթէ ուզեմ ուրիշ բան ընել, չեն կրնար։ Հաւանաբար սկզբնական տարիներուս այս ամբարտաւանութիւնը ունէի որ արուեստովս մարդոց պիտի դաստիարակեմ, կամ աշխարհը փոխեմ, բայց հիմա կարծեմ Ֆելլիսիին հասած եզրակացութեան հասած եմ։ Արուեստագետին հարցնել թէ ինչո՞ւ կը ստեղծագործէ, կը նմանի հաւուն հարցնել թէ ինչո՞ւ հաւկիթ կ'ածէ։ Բայց անշուշտ եթէ փորձեմ հարցումիդ պատասխանը պատկերով մը տալ՝ պատկերը հաւանաբար այս է՝ կեանքի աղբակոյտին մէջ, ձեռքերս սոթած բաներ կը փնտռեմ, եւ գտածս թեթեւ մը կը ցօղուեմ եւ շուրջիներուս ցոյց կու տամ։

Արուեստի ստեղծագործութիւնը նաեւ նպատակ է ինքնին եւ ինքնիրմով։ Այդուհանդերձ, սփիւռքեան գոյա-

վիճակի մէջ արուեստը ձգտած է հաւաքական նպատակի մը, որ, համաձայն Սփիւռքի դասական յարացոյցին, եղած է ազգային ինքնութեան կորուստին մտահալածանքը և հայրենադարձութեան փրկչական ենթադրութիւնը։ Բայց քու արուեստդ ծաղկեցաւ յետանկախութիւն ժամանակաշրջանին, որ նաև այդ յարացոյցին տագնապի ծննդոցն է։ Հետեւաբար, ենթակայականէն անդին հաւաքական ինչ ենթադրեալի հիման վրայ վարձացած է ստեղծագործութիւնդ – եթէ նման ենթադրեալ մը նկատի ունեցած ես անշուշտ։

Անկեղծ ըլլալու համար, որքան ալ փորձած եմ քարոզչութիւն չընել եւ կարելի եղածին չափ հեռու մնալ յորդորական մթնոլորտէն, միշտ տեղ մը հասած եմ ուր, շուրջս նայելով, անդրադարձած եմ որ քիչ մը ուսուցողական ճամբայ բռնած եմ։ Ատոր անդրադառնալուս պէս, անմիջապէս փորձած եմ ետ դառնալ, կամ ճամբաս շեղել։ Բայց պետք է ընդունիլ, որ ատիկա դիւրին չէ եղած, որովհետեւ երբեմն պարգապէս նիւթիդ կամ կերպարներուդ հայկականութիւնը կամ նոյնիսկ հայերէն լեզուով գրելը արդէն որոշ յորդորականութիւն մը կը պարտադրէ։ Վերջին հաշուով, այն կերպարները որ ստեղծած են, որոշումներ պետք է առնեն, եւ կ'ուզես որ խելքը գլուխ, հայկականութեան հետ յարիր ընթացող որոշումներ առնեն։

Ինչ տինամիքով իրարու հետ առնչուած եւ փոխապդած են թատրոնը, նկարչութիւնն ու գրականութիւնը գեղարուեստական ստեղծագոր-

ծուծեանդ մէջ: Որեւէ մարդ ունեցած է առաջնահերթային նախապատուութիւն, կամ, այլ խօսքով, եղանկ է որոշիչ կամ մեկնակէտային:

Ինչպէս կ'ըսէի, շատ պզտիկ տարիքէս արդէն ինծի համար անկարելի էր այդ արուեստներէն մեկուն կամ միւսին առաջնահերթութիւն տալը: Ամէն մէկ արուեստի մարդ տարբեր պահանջ մը գոհացուցած է: Կարծեմ միշտ մէջս սքիզոֆրէնիք բան մը եղած ըլլալու է: Մէկ Վահէն թատրոնի լոյսերը, ժողովուրդը, ծափահարութիւնը կը փնտռէ, միւս Վահէն իր աշխատանոցին առանձնութիւնը, լռութիւնը կամ թուղթ-մատիտը: Տարօրինակը այն է, որ յաճախ երբ արուեստանոցիս մէջ եմ, թատրոնի իրարանցումը կը կարօտնամ, իսկ երբ ժողովուրդին մէջ եմ՝ տանս առանձնութիւնը: Բայց ինչպէս ըսի, նախապատուութեան հարց գրեթէ չկայ: Բոլորն ալ իմ պզտիկներս են, բոլորն ալ հաւասարապէս կը սիրեմ, եւ այդ վայրկեանին որուն որ աւելի կարօտնամ անոր հետ ժամանակ կ'անցնեմ:

Նամակներ Չաաթարէն առաջին գրական գործդ է որ կը հրատարակուի: Նիւթը դիպուկ է Սփիւռք-Հաստան յարաբերութիւններու իր յրատակ առնչութեամբ: Գրական փորձեր ունին հրատարակուած առկէ առաջ: «Չաաթար» երեւակայական վայրը չի կրնար Լիբանանը չիշեցնել. «մանա-յիշ»ը որ հայացուցած ենք որպէս «պախթարով հաց», բայց նաև Թէլ Չաաթար... Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ այդ նիւթը որպէս առաջին գրական ստեղծագործութիւնը:

Նամակներ Չաաթարէն վէպէն առաջ առաւելաբար թատրոն գրած եմ: Վարդագոյն փիղը հրատարակուած էր, ուրիշ գործեր բեմադրուած էին, անտիպ երկու վէպեր ունէի, մէկը հայերէն, միւսը անգլերէն, բայց Չաաթարը առաջին հրատարակուած վէպս էր եւ պէտք է ըսել, թէ հաւանաբար քիչ մը աճապարանքով հրատարակած եմ: Գիտես, երբ երիտասարդ ես, անհամբերութիւն մը կ'ըլլայ մէջդ: Անցեալները երբ Audio-bookի համար կարդալու սկսայ, անդրադարձայ որ որոշ մասեր կան որ քիչ մը աւելի աշխատանք պէտք ունէին, թէ լեզուի եւ թէ մտքերու յստակացման առումով: Հակառակ ատոր, գործը կը սիրեմ, որովհետեւ շատ օրկանիք ձեռով մէջտեղ եկաւ եւ լաւ կառոյց ունի: Այդ տարիներուն AIM թերթը հայերէն գրական բաժին մը սկսած էր հրատարակել, եւ ես թերթօսի պէս, ամէն թիւի մէջ նամակ մը կը գրէի Չաաթարէն: Քաղցկեղէն նոր հրաշքով ազատած էի, եւ Չաաթար ապաստանած նամակներ կը գրէի: Հոյակապ փախուստ մըն էր իմ վիճակիս մէջ գտնուող մեկու մը համար, որ ժամանակին մեծ մասը հիւանդանոցը կամ տունը, անկողնին գամուած կ'անցնէր: Ճիշդ ես, վէպը լիբանանեան զապթարի զօրաւոր հոտ ունի, որովհետեւ Լիբանանը շատոնց ձրգած ըլլալով հանդերձ հոգիով դեռ հոն էի, եւ վէպը առաջին լուրջ փորձս էր Լիբանանէն ամբողջովին հեռանալու:

Յետոյ եկաւ Յանուն հօրը, որ բարեկամ մը ըսաւ՝ իր նիւթի համարձակութեամբ առանձնապատուկ է: Ամանդական հայ հայրը, անոր թաքնուած եւ

յանկարծ յայտնաբերուող սեռային գրգռումն ու «ամօթ»ը, հոր ժառանգությունը՝ գրադարանը, հայերեն գիրքերը... Ինքպինքը որպես սփիւռքահայ տղամարդ կը տեսնեն հոն: Հարցումը նաեւ կը կարեւորեն, որովհետեւ վէպի վերջաւորութեան որդին կը նոյնանայ հոր կերպարին հետ: Սփիւռքահայ տղամարդու ճակատագիր...

Չսայթարը երբ հրատարակուեցաւ, Վահէ Օշականին հետ օր մը նստած կը գրուցէինք, ինծի ըսաւ թէ՛ «Վահէ, ֆրանսացիները կ'ըսեն որ ամէն մարդ իր մէջը մէկ հատ գիրք ունի, գրողը երկրորդ գրքէն յայտնի կ'ընէ»: Ըրածը մարտահրաւերի պէս բան մըն էր, եւ Վահէն այնքան կը սիրէի եւ կը յարգէի, որ առանց ժամանակ կորսնցնելու սկսայ *Յանուն Հօր*ին վրայ աշխատիլ, որովհետեւ մըտքիս մէջ արդէն յստակ էր պատմութիւնը: *Յանուն Հօր*ը որքան որ հեռու է ինքնակենսագրութիւն ըլլալէ, նոյնքան ալ մօտ է իմ կերպարիս, որովհետեւ մէջը թատրոն կայ, Լոս Անճելըսի մէջ կը պատահի, հայրը գրքի խենթ, էջերու մէջ կորսուած մարդ մըն է, եւ աղջիկը ձեռով մը սուրբ հոգին է: Եւ այո, վէպը գրած ատենս արդէն յստակ էր որ տղան հօրը շարունակութիւնը պիտի ըլլայ: Իր հօր նոր *մոտէլը*, քիչ մը աւելի երիտասարդ տեսակը, որ որքան ալ գիրքերէն փախի վերջ ի վերջոյ պիտի չկարենայ հօրը ժառանգութենէն փախիլ: Ատր ճակատագիր կարելի է ըսել: Հաւանաբար:

Յանուն Հօրը նաեւ զուտ Սփիւռք է Յայն իմաստով որ, ի տարբերութիւն Նամակներուն, հայրենիքը չկայ



Լուսանկար՝ Կրմեն Քելեշեանի

հոն: Բայց Սփիւռքը իր ամբողջութեան մէջ որպէս ապգային մշակոյթի եւ ինքնութեան ժառանգորդ, որպէս աշխարհագրական տարածութիւն եւ որպէս համահայկական իրականութեան մէջ վարքի, բարքի եւ առօրեան սպրելու քաղնականութիւն՝ ներկայ է բեմական գործի մէջ: Միայն զուարճալին չէ անոնց քաշողականութիւնը, այլ՝ Միջին Արեւելքէն աշխարհագրականօրէն արեւմտականացող Սփիւռքը դիտելու, ընկալելու, ուսումնասիրելու ստեղծագործ կարողութիւնը: Ինչպէ՞ս եղաւ այդ:

Սիրեցի «Միջին Արեւելքէն աշխարհագրականօրէն արեւմտականացող Սփիւռքը դիտելու» բաժինը, որովհետեւ ուղղակիօրէն իմ կեանքիս բնական ընթացքին մաս կը կազմէ եւ *Յանուն Հօր*ը առաջին արեւմտականացած գործն է: Նախապէս գրած բոլոր կտորներս ալ ֆիզիքապէս Արեւմուտքի մէջ ապրող բայց հոգեպէս տակաւին Արեւելք ապրողի արտադրութիւններ էին, ինչպէս օրինակ՝ *Վարդագոյն*

փիղը եւ Աւապսիրունը: Իսկ երբ մենախօսութիւններու սկսայ, արդէն արեւմուտքցին էր ընդհանուր պատկերը դիտողը եւ նօթեր առնողը: Պետք է խոստովանիմ, որ յաճախ մտածած եմ, որ արդեօք ինչ տեսակ մէկը պիտի ըլլար Միջին Արեւելք մնացած Վահէն եւ ինչ պիտի զգայի եթէ տարիներ ետք, օր մը Լիբանանի մէջ իրեն հանդիպէի: Ասիկա լաւ նիւթ կ'ըլլայ զարգացնելու:

Բենական գործունէութեանդ ու գրականութեանդ մասին խօսելով չեմ կրնար չանդրադառնալ անոնց հասարակաց առաջին յայտարարին՝ լեզուն, Սփիւռքի լեզուն, արեւմտահայերէնը: Բենին վրայ այդ լեզուն ամէնօրեայ խօսակցական լեզուի հարապատոյթիւնը ունի, որքան ալ որ անոր օտարացումը յստակ է ոչ-հայերէն բառերու օգտագործումով: Սակայն, վէպերուդ մէջ արեւմտահայերէնը մշակուած է, բայց կը պահէ իր հարապատոյթիւնը: Անօրեայ խօսակցութեան եւ գրական մշակումի մէջ տարութերող արեւմտահայերէնի ապագան, եւ ընդհանրապէս Սփիւռքի մէջ արեւմտահայերէնով գրողի ու ընթերցողի ապագան ինչպէ՞ս կը տեսնես:

Մտող վերքին վրայ դրիր: Ասիկա ըսփիւռքահայ գրողին, կամ գոնէ իմ ամենէն մեծ ցաւս է: Ինչպէ՞ս կրնաս հայերէն գրել եւ հարազատ հնչել, մանաւանդ երկխօսութեան պարագային, երբ մեր խօսակցական լեզուին կարելոր մէկ մասը Սփիւռքի մէջ, օտար բառեր են: Եթէ Ամերիկայի մէջ կ'ապրիս անգլերէն են, եթէ Լիբանան կ'ապրիս՝ արաբերէն, եթէ Թուրքիա ես՝ թրքերէն, եւ-

այլն: Այն վայրկեանին որ լեզուն մաքրելու փորձ ընես, արդէն հարազատութեան մուխը կը մարես: Այնպէս որ յաճախ ստիպուած ես ստեղծած կերպարներդ այլակերպել, որպէսզի իրենց խօսած լեզուն աւելի համոզիչ ըլլայ: Սա ալ ըսեմ որ լեզուն իր յիշողութիւնը ունի, կամ պետք է ըսեմ՝ յիշողութիւնը իր լեզուն ունի: Եթէ դուն այսօր Լիբանանի մէջ պատահած դէպք մը պիտի պատմես, նոյնքան դժուարութիւն պիտի չունենաս հարազատութիւնը պահելու, որքան պիտի ունենայիր եթէ Պուէնոս Այրեսի մէջ պատահած դէպք մը պատմէիր, որովհետեւ Պուէնոս Այրեսի մէջ պատահած կերպարներէն մէկը կրնայ ըլլալ արժանթինցի է, կամ հայ է եւ հայերէն չի գիտեր խօսիլ, բայց դուն *պրո*ով հայերէն պիտի խօսիլ տաս:

Լեզուին մասին հարցուցի նաև որովհետև յաջորդ և դեռևս անոխայ գործող անգլերէն է: Փրփրձ, անխուսափելի, թէ՛ Կարօ Փօլատեանի ծանօթ գործին խորագրի հետեւումով՝ «կը հրաժարիմ հայերէնէ»...

Չէ, բնաւ հրաժարելու նպատակ չունիմ, բայց կարծեմ տեղ մը կու գայ որ անխուսափելի կը դառնայ ապրած երկրիդ լեզուն գործածելը, այնպէս ինչպէս Քունտերան ֆրանսերէն սկսաւ գրել, Նապոքովը՝ անգլերէն: Այս նոր վէպիս անգլերէն լեզուով ըլլալը ինծի համար դաւաճանութեան պէս բան մըն էր, բայց ուրիշ ելք չունէի, մանաւանդ որ երկարատեւ ուսումնասիրած էի ժամանակաշրջանը եւ անդրադարձած, որ հայերէն լեզուով ատոր տակէն ելլելը անկարելի պիտի ըլլայ ինծի համար:

Հայաստանը դուրս չի մնար քու շրջապատոյտներէդ: Վահէ Պերպերեան նկարիչը, գրողն ու դերասանը ինչպէ՞ս ընկալուած են հոն: Այլ խօսքով, եւ որպէս հետեւում այս հարցումին, արեւմտաբեւեյահայկական փորձառութենէդ ինչ դասեր քաղած ես – Հայաստան թէ Լոս Անճելըս: Մշակութային համարկումը կան «ինտեգրացիա» ն կարելո՞ւ է:

Ես ինքզինքս շատ բախտաւոր կը զգամ որ մեծ թիւով հայաստանցի համակիր ունիմ եւ Հայաստանի բոլոր ներկայացուցիչներս բերնէ բերան լեցուն կ'ըլլան սփիւռքահայ եւ տեղացի հանդիսատեսներով: Ասոր համար պետք է խոստովանիմ որ ահագին բան կը պարտիմ համացանցին: 20 տարի առաջ, երբ առաջին անգամ ելոյթ ունեցայ Հայաստանի մէջ, սարսափա-

հար էի, որովհետեւ եկող հայաստանցիները բնաւ գաղափար չունէին որ ճկ եմ կամ ինչ կ'ընեմ: Եկած թեւերնին ծալած, խոժոռ դեմքերով դիմացս նըստած էին որ «Հայտէ, խնդացճճր մեզի նայինք»: Հիմա արդէն ամէն ինչ փոխւած է, նախ որովհետեւ եկողը արդէն ծանօթ է ինծի, իսկ եթէ ծանօթ չէ կրնայ դիւրութեամբ YouTubeի վրայ ծանօթանալ: Աւելին. հիմա իրենք շատ աւելի մօտէն ծանօթ են Սփիւռքի մշակոյթին, իսկ ես ալ իմ կարգիս, արդէն ծանօթ եմ հայաստանեան մշակոյթին եւ ինծի համար շատ աւելի դիւրին է հաղորդակցիլը: Երբ Լոս Անճելըսի մէջ կ'ապրիս, դիւրին է համոզուիլը, որ արեւմտահայարեւելահայ տարբերութիւնը կամաց կամաց արդէն չէզոքանալու վրայ են եւ ուշ կամ կանուխ երկուքը պիտի նոյնանան:



He Who Lives by Love 30 Acrylic on paper 2010
Գործ՝ Վահե Դերմերեանի

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

Ա. ՍԵՆԵԱԿՆԵՐ

ոչ չեն ճնշեր պատերը
կը խորտակուին շառաչով
ասդին անդին կը քշուին
հովին հեծած ագռաւներուն
բազկերակի դոփիւնին եւ
քունքերու թոմ-թոմներուն
կշռոյթով

եւ իրենց հետ կը տանին
պատին զամուսն նկարներ
զամերէն արիւնելով
գիրքերուն էջերը տաք
գրադարանին յօրանջը
պատուհաններուն սարսափահար
նայուածքը

Բ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

նամակներս կորսուեցան
cyber space անհունին մէջ մոլորած

շաղակրատանք հեռաձայնէն
լսող չկար
լռութիւն կար
լուռ կ'արտասուէր

նամակները յիշատակի պէս պահելու
երբեմն նաեւ՝ կարդալու

բայց անհունին ալիքները
այդ ալ տարին
աւլելով

Գ. ԱՄԵՆ ՕՐ

օրերը իրենց անունը փոխեցին
դարձան
ամենօր

Դ. ՍԵՐ

սերը կար բայց դուն
չկայիր

այդպես է որ դուն
եւ բացակայութիւնը
սեր դարձաք

կատարեալ է շրջանակը
հիմա

Ե. ՅՈՒՇ

յուշեր արեան մէջ
չգիտակցուած չիմացուած չապրուած
եւ արիւնող

եւ նորերը անվերջ նորերը
հողը թաց ցեխոտ
նոր-յուշը անձրեւի պէս ամառնային
անհասկնալի անտեղի խարազանող

մեղք մեղքեր թողութիւն
դ՛ր կաթիլը որո՞ւ համար
խսկ նորերը
շունչ տալու նոր-յուշին
որ չմեռնի խեղդամահ
ինքն իր մէջ

կային հեքեաթները. կար կարուչկարը եւ կային երեք խնձորները, հիմա
արդէն փայլքը կորսնցուցած ու կոնծած բազմաթիւ անկումներէն. բայց
կային խնձորները եւ անկումը կար:

վերջացան

մնաց անապատը իր աւելցող աւագներով

հէքեաթը անբառ
յիշեց անապատը

բայց անապատը չյիշեց զինք
ինք որ մոծաւանջն էր անապատին
եւ անապատը չյիշեց զինք

2. ԳԻՇԵՐ

կու գայ միշտ ծածուկ անլսելի անտես
կարծես ես «միւս» կինը ըլլայի

այս պարտեզը գիշերները կը ծաղկի
-ողկոյզները մութին է որ կը հասնին-
մեղր կը ծորի

զինարբուքի ձայները շանտ հեռու են
լռութիւնը կը հեւայ
այստեղ հողը կը դողայ
այգեստաններ հրկիզուած

ամեն գիշեր
սենեակը կը խճողուի
պարոյկներով գունաւոր
որոնք կու գան հեռուներէն
կը հաւաքուին

օրը երկտակ հանդերձի պէս
ինքն իր վրայ կը փշի

ոսկեգոյն պատասխաններ
քնքուշօրէն փայփայտուած
արդէն չկան
կամ
կան
քարանձաւի խոնաւութեան
ժանգ կապած

արեւն անգամ ափսոսանքով կը յիշէ
պատուհաններէն տեսածը

հիմա միայն մուրը արծաթ

ոտաբոյիկ քայլերը անարձագանգ
պատեր ծանր՝ նկարներով
անկողինը՝ պարապուրթեամբ

արծաթ վարսը դալուկ դէմքին
պարեգօտը թափանցիկ
գեղեցկութեան ուրուագիծ
գօտին՝ դարպաս տակաւին

բայց ոչ շշուկ ոչ ոտնաձայն
մուրը միայն
հիացիկ

Է. ՄԱՐՄԻՆ

բայց մարմինն այս ան իմն չէ
այլ թափառող յուշերուն
պատին գամուած շուքերու
փսփոտքին բնօրինակ
որ տունըն այս բոյն դարձուց

երկու մարմին խաչածել
– հէքեաթ գաղտնի –
թելը կոտրած միս-մինակ
խաչելութեան վերածուած

համբոյրը որ
ժամանակը կը ջնջէր
կը շոգիանայ օրերու ապակիին
կը մնայ որ մատովս
սիրտ ծակող նետը գծեմ

* * *

գիշերը գալարուելով կը հոսի շուրջս
կարծես ես ժայռ ըլլայի
այս հոսանքին դէմ նետուած

սիրեցէք միմիանց ըսաւ արարիչը
եւ բառերը զիրար հրմշտկելով
embryo-ի ջուրերուն մէջ
եկան իրար մօտ համոտեսցին զիրար
յուծուեցան
բաժնուեցան
նոր գոյգեր կազմեցին

հիմա կ'ըսեմ իրենց
եկէք ինձի
եկէք ու սիրեցէք զիս
embryo-ի ջուրերուն մէջ որ մարմինս է
ուր ես ալ չկամ
դու էք եւ մարմինս ահա՛

բայց մուռը կը շարունակէ հոսիլ մէջս
կարծես մարմինս ըլլար հունը
ու ես՝ ժայռը հոն նետուած ...

Ը. ՍՅՈՅԻ¹ ԳԻՇԵՐՆԵՐԸ

«վայելքի տնքոցներն են
երբեմն խախտող
յռութիւնը

խելայեղ քնքշանքի քամին
կը շոյէ
մուռ կարմիր ճեղքը
խմեր ենք երանութեան գաւայթը
ու մարմինը ճապուկ
հաւաքեց իջնող եղեամը

¹ Ռուբուկո Սյո (980-1020?), ճարնցի բանաստեղծ:

փնտռել լեռը
որուն յեներ էր
վայելքի ակնթարթը

դարձեալ մինակ տոչորում
ծիծեռնակները տուն կը շտապեն
ամբողջ մարմնով կը զգամ գիշերը

հողը կը հառաչէ
սերէն խենթացած
գիշերը կը խօսի ամպերուն

համբոյրը որ տեւեր էր
դարձ դար
ցամքեր է արդէն

կը մոռնամ տխրիլ»

Թ. ՃԱՂԿՈՒՄ

մորթո՞ մագաղաթ ու սերս՝ փետուր
կարմիրը որդան՝ ցաւը մեր միջեւ
մեզ կապող-հատող փուշերու պսակ
նարօտի փոխան

աղմուկներու մէջ՝ լռութիւնդ գգուանք
երակներէս ներս
արիւնս փոխած
արդէն ես չէի մորթո՞ ծաղկողը
մենութիւնս էր
բանը յաւիտեան

եւ հիմա միայն ծաղկած մատեանը
պտուղ քաղցրահամ

Ժ. APHRODITE

յուշիկ բաց դուռը
յուշայիճերէն ճայեր չթռչին
ջուրը չճողփայ
չլուայ յանկարծ ոտնահետքերը սերերու գաղտնի

Օ մատղած էի
գաղտնի էր ամէն հովի փափսուք
կամբոյր էր ամէն անծանօթ խորհուրդ
եւ անծանօթ էր մարմինս ինծի

պէտք էր որ ըլլար գիշեր եւ կամ մութ
տեսնելու սերդ ճերմակ լուսավառ
որ գայի կենալ շեմիդ կիսաբաց

հիմա ավիին եմ ուր դուն դեռ չկաս
լուսնաշղարշով մերկութիւնս ծածկած
սպասումով տաք

մատներդ նուրբ են նուրբ մորթիս վրայ
շունչդ կուրծքերուս գաղտնիք կը տաղէ
ու կը կէտադրէ կուրծքերուդ խաղով

հասունացումը արդէն հասուն է

ՍԷՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Դուն միշտ կենդանի
քերթուածն ես, սէր,
զոր կը շօշափեմ
եւ խոր կը շնչեմ:

Բայց մեծ պատկերդ
ներաշխարհիս մէջ
լուռ կը կտրատուի,
ժամանակին հետ կարծես կ'աղօտի,
եւ ես կը փորձեմ
պատառիկները անոր բազմաթել
վերամիացնել:

Քեզ միշտ փնտռած եմ
տարբեր դէմքերու, տարբեր աչքերու
պատառին վրայ,
եւ քեզ գտած ու կորսնցուցած եմ,
քեզ միշտ երզած եմ
տարբեր ձեւերով
այլ անուններով:

Կրակ ես
կեանք ես,
խռովք, հրաշք ես
եւ տառապանք ես,
քու ձգողութեան
ալիքներուն մէջ
զիս բանտարկած ես:
Յոյս եւ
երագ ես,
անհուն հմայք ես,
անձկութիւններուս

Եւ սպասումիս հեւքը կը պահես
խօսքերովդ անշէջ:

Քեզ դարեր առաջ
մէկ այլ կեանքի մէջ
հանդիպած եմ եւ
թրուպատուրի
բառերով խոռով
երգած եմ այսպէս՝

տիրանամ,
շրթներուդ ես տիրանամ,
զով հով ըլլամ եւ մտնեմ
ծիծերուդ մէջ քնանամ:

Շնչամ,
ունկերուդ մեղմ շնչամ,
բառեր բերեմ կենդանի,
քեզ գերեմ ու զովանամ:

Լիանամ,
աչքերուդ մէջ լիանամ,
բանաս մարմինդ սիրուն,
զայն սիրեմ ու արբենամ:

Նուաճեմ,
սիրտ ու հոգիդ նուաճեմ:
Յոգեթով ու հոգեզմայլ
երգերով քեզ կախարդեմ ...:

Անհոգ խնդուքով պիրկ աղջիկները
ես դեռ կը տեսնեմ
քաղաքի զուարթ մայթերուն վրայ.
Եթէ արեւ կայ՝
կանաչ, լաւ խուզուած մարգագետինին,
հրապարակի արձաններուն մօտ,
կիսամերկ եւ

լոյսը ծծող իրենց մարմնի
 իւրաքանչիւր բջիջով,
 բայց չեն գտներ
 միւս երամը՝ վտանգուած,
 որոնց երկար ծամերուն մէջ
 ինկած տերեւ կար
 եւ խոնաւութիւն՝ իրենց աչքերուն:

Վայր յարածուփ, յաճախ հանդարտ
 կամ փոթորկուն, գուրգուրայի,
 հետախուզուած այնքան անգամ,
 որուն եզրերուն, կորութիւններուն
 անձկութիւնը կ'անհետանայ
 եւ կամ կ'աճի ...
 որուն կեդրոնէն
 շօշափելէ ու փայփայելէ ետք
 ամէն մէկ կածան, կիրճ ու ճեղք թաքուն՝
 անթարթ իջած են ընդերքը երկրի:
 Վայր որ նոյն ատեն
 կը շաղախէ քեզ իր կաւին մէջ նուրբ,
 չեն մնար անտուն,
 կը միաձուլուիք՝
 տրուած անանուն իր կախարդանքին:

Յիմա դուն գիտես պիտի մոռցուին,
 անհետ կորսուին
 յիշողութեան լուռ խամրող աշխարհի
 երկրամասին հետ՝
 սերերդ բոլոր,
 որոնք սեւ-ճերմակ լուսանկարներ
 դարձած են արդէն
 եւ բաց սրճագոյն երանգներ կ'առնեն:
 Կենդանի, ապրող
 պահեր կը կորչին –
 զգայարանքներ
 բոյրեր ցանուցիւր,
 որոնց ամէն մէկ
 երանգը յատուկ

իր հասցեն ունէր,-
դրուագներ անթիւ,
ցաւի, հաճոյքի փորձառութիւններ
ապրուած խորին անձկութիւններով,
կամ ինքնամոռաց
ապրումով ազնիւ:

Մէր, կը գրեմ քեզ այստեղ,
որ չկորսուիս,
որ չկորսուիմ,
եւ մնաս խարիսխ,
որուն կապուած են
քիւր պատկերներս
ապրուած օրերու:

Արդ, միշտ կը կրկնեմ՝
սէր, դուն կենդանի
քերթուածն ես,
որով ես կ'ապրիմ
եւ խոր կը շնչեմ:



Mistakes Were Made 30x22 Acrylic on paper, 2010
Գործ՝ Վահե Պերպերեանի

ՈՒՐԵՄՆ ՊԱՏՄՈՒԹԻ՞ՒՆ Կ'ՈՒՉԵՍ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Թոռնիկիս՝ Արմենիկին

Ուրիշ ճար չկայ, ողջ մնալու համար պետք է յաջողիլ անդնդախոր ճորերուն գլխուն բարակիկ զառիվերներէն՝ հարիւր անգամ Մարիամ Աստուածածինի միջնորդութիւնը խնդրելով բշե: Եւ եթէ Սուրբ Կոյս Մարիամը գթայ քեզի, քառասուն վայրկեան ետք կը հասնիս փոքրիկ գիւղ մը որ ունի գեղեցկագոյն բնութեան բոլոր տեսարանները եւ երկար անուն մը՝ Մագրաա Քֆըր-զըայէն:

Գիւղը՝ երեք յարկ էր – հող ու տնակներ, սրճարաններ ու եկեղեցի: Բլուրներ, անտառներ ու պտղատու այգիներ:

Երկինք եւ պսպղուն աստղեր:

Ամէն ամառ կը հասնէինք եւ բլուրներու սրտի զարկը կը լսէինք: Երեք ամիս, ամէն օր արեւը կ'արթննար մեզի աչք կ'ըներ, կը ցատկէինք անկողինէն եւ մըր-ցումի մէջ էինք թէ մեր երկուքէն ո՛վ պիտի աւելի բաներ ըներ այդ օրը: Երբ արեւը ճերմակ էր, ամառնային եղանակներով կը վազվզէինք: Երբ ցեխի կամ թրիքի վրայ կոխէինք, աղբիւրին տակ զով-զով կը լուացուէինք:

Բայց նախ՝ առտու կանուխ, ժամը եօթը չեղած՝ չորս քառակուսի մեթր խորութեամբ ու տարածութեամբ աւազանին սառի պէս ջուրին մէջ կը նետուէինք, հոգ չէ թէ մէջի քանի մը գորտերը կռկռային: Յետոյ կը դեգերէինք պարտեզին ութ յարկերէն քանի մը հատին վրայ, այստեղէն կը փրցնէինք եւ թաց անձեռոցով սրբելէ ետք տեղւոյն վրայ կ'ուտէինք խնձոր, քիչ մը կեռաս, կլոր սալոր (հաւկը-թածեւերը կովերուն համար էին), տանձ ու դեղձ: Ո՛վ որ մեր գիւղի դեղձէն կերած չէ, դեղձին իսկական համը չի գիտեր: Կար նաեւ պզտիկ աւազան մը անկողինի չափ, ան ալ բովի բանջարեղէններուն համար էր: Կը քաղէինք լուբիա, լոլիկ, վարունգ, պիպեռ եւ ընկոյզ: Յիմա պիտի հարցնէք որ՝ ճերմակ թուփն ալ որ այնքան համով կ'ըլլայ՝ ուրկէ՞ կը ճարէինք: Մեր տունէն մինչեւ հրապարակ հասնող ճամբու կէսին աւերակ տուն մը կար, անոր պարտեզին մէջ, ճիշդ ճամբուն եզերքը հարսի պէս կայնած էր թուփի ծառը: Կարճահասակ հարսի պէս, ճմռթկուած էր հագուստը բայց: Մեզի ափ ափ հասուն թուփ կը հրամցներ: Քաղցրահամ, փափուկ, զուսպ ժպիտներով սպիտակ թուփեր: Ես ազատած եմ այդ աւերակէն, ես հոն եմ, կ'ըսէր:

Ճերմակ ու սեւ թուզն ու կարմիր ու ոսկի գիրուկ խաղողները Մատամ ԹԵՐԷ-գային քովեն կը գնեինք: Բոպիկ, նիհարկուկ, նեփնեղ աչքեր, մինինիկ քիթ, բարակ շրթունք: Ամեն բանով բարակ, քչախօս կին որ հուրի փերիի պէս կը մտնէր կ'ելլէր բլրան գագաթը թառած՝ քար քարի վրայ հպարտօրէն շարուած, յաւիտենութեան դէմ մրցող իր բնակարանէն: Ընդարձակ եւ պարապ, հիւրասենեակը երեք խսիրէ այժոռ միայն, գետինը՝ բաց կաթնագոյն սալիկները փըրըլ-փըրըլ պարահանդէսի համար հոյակապ սրահ, Յոլիվուտի ֆիլմերը յիշեցնող: Տան երեք կողմերը լայն թանձր պատշգամ, հոն ալ այժոռ չկար, բայց կար յաւիտենական բնակիչ մը՝ Մարիամ Աստուածածինի խորանիկը, անշուշտ կապտագգեստ: Լայնաշունչ պատուհաններ ու բարձրահասակ առաստաղ: Ամբողջ մթնոլորտին մէջ բան մը կար որ կը կոչուէր մաքրամաքուր դատարկութիւն: Պտուղները՝ պարաններով հիւսուած լայն ամաններով կը բերէր խոհանոցէն, ուր կարծես բան մը եփած չէ: Մաքրութիւնը կ'ունենայ տեսք, կ'ունենայ բոյր, բայց լսողութիւն չունենար: Մենք մաքրութիւնը կը լսեինք անգամ: Այնքան բծախնդիր էր որ թերեւս կշիռքին նժարներն իսկ կը լուար:

Եթէ տակաւին կայ այդ տունը, կը հաւատամ թէ հագուագիւտ վայրն է աշխարհի մէջ ուր Քորոնան գոյութիւն չի կրնար ունենայ, չի կրնար մօտենայ, հեռուներն ալ չի կրնար պահուըտի: Օդին սրսկած մաքրութիւնը իր թոյնն է, մէկ երկվայրկեանէն կը սմբեցնէ: Բնակավայր մը՝ այնքան լուսաւոր էր եւ օդասուն, գիւղական ճանճ մը իսկ չկար:

Մեր տունն ալ ճանճ, մժեղ, մեղու չկար. քանի որ երեք շաբաթը անգամ մը պարտեզը Ռըշ կ'ըլլար, կը հականեխուէր: Դուռ պատուհանները ամուր կը փակեինք այդ քիթ ծակոդ հոտով, բարակ սուրերու պէս արձակուող առատ սրըսկումին դէմ: Յետոյ մէկ օր պէտք չէ այդ ծառերուն քով երթայինք, երկու օր պտուղները պէտք չէ ուտեինք՝ թոյներուն էն գօրաւորն է կ'ըսէին. ամեն տարի գիւղի անգօր նորահարսերէն մէկը այդ թոյնը կը խմէր որ մեռնի: Ալլա երրիամու, Աստուած հոգին լուսաւորէ կ'ըսէին կը կնքէին հարցը:

Եթէ կնոջ իրաւունքի եւ անիրաւութեան անմահականացու հարցէն շեղիլ ուզեմ, պիտի հասնիմ հոն ուր մեր պատանութեան՝ ամեն օր զգլխիչ պահ մը կ'ունենայինք: Հէյրան մնացած մտիկ կ'ընէինք մօրս մօրեղբօր, Պոլիսէն տարի մը առաջ հասած եօթանասուն տարեկան, գեղադէմ դերասանի արտաքինով, եռանդուն Ստեփան Տայիին:

Չարմիկներս կու գային, մեր խաղընկերները կու գային գիւղին միւս ծայրէն, ծալապատիկ կը նստէինք հսկայ կեռասի ծառին տակ, ատալիաներուն եւ աղբիւրին քովը: Տային կը նստէր քանըփայի եւ բազկաթռոյ միջեւ հասակ ունեցող մաշած ծածկոցով խորը ինկոդ բազկաթռոյն մէջ: Նախ կը դառնար Մատամներուն. էն առաջ անուշապուրի հարցը պէտք է լուծուէր: Կ'ակնկալէր որ անու-

շապուր պատրաստեն Մատամները (մայր մորաքոյր մեծմայր), որ իր պատմութեան ակարտելուն՝ ուտէինք անուշապուրը: Կաթնապուր չըլլամ: «Մաղ կեանքիս մէջ կերեր եմ կաթնապուր, անուշապուրը ինչ է որ նազ տուգ կ'ընէք կոր: Մարդ սրտին կէօրէ պիտի ապրի»:

«Պատեմ շէքեր, հոն դիմացս նստէ նայիմ, դուն փէք աղուոր հարցումներ կը հարցունես կոր»: Պատեմ շաքարը ես էի, քոյրս՝ Չամիչ, եղբայրս Ֆընտըխ, միւս քոյրս Լէպլէպու, Էն փոքրը Ֆըստըխ: Չարմիկներս միայն ճաշերու անուններ ունէին՝ Թարխանա, Իմամ պայընտի, Քէօֆթէ, Սուճուխ: Մեր միւս պատանի խաղընկերները՝ Պատուելի, Պոռոզան, Սրբուհի, Գեղանի, Քահանայ, Սուրաթսըզ, Նաթաշա, Բոմիօ: Բայց թագաւորը անուշապուրն էր որ փառքով-գօրքով պիտի հասներ երբ Տային էյլէմիշ ընէր իր եւարուները:

Մեր Տային կը լարէր իր երեւակայութիւնը ու կը հիւսուէր մանուածապատ պատմութիւն մը հերոսներու, քաղաքներու տարօրինակ, չլուած անուններով քաղաքներ՝ Ոսկեպար, Մարմրան, Տընկուշ, Չինչին, ուր միայն փիլաւ կ'ուտէին:

(Ասիկա վաթսուն տարի առաջ էր, երբ ճէյ Քէյ Բոուլինկին «Յերրի Փոթըր»ի աշխարհահռչակ գիրքերը չկային):

Տղոց տարիքը պահուան համաձայն թիւ կը փոխէր: Միայն անհնարին դէպքեր չէ որ կը յօրինէր Տային, իր դէմքին արտայայտութիւնը պատումը կը ցուցնէր. յատկապէս աչքերով կը հասկցնէր պահուան առթած զգացումը: Թեւոր եւ պաս բացականչութիւններ, երբեմն եզրակացութիւնէն ետք բացատրութիւն: Ինքը կը հարցնէր, ինքը կը պատասխանէր: Երբեմն մեզի ալ առիթ կու տար, ինչ որ պատասխանէինք՝ ճիշդ կը գտնէր: Ամենէն ակելի Սուրաթսըզին առիթ կու տար պատասխանելու: «Է եղամ մի, ատիկա ինտոր կ'ըլլայ կոր. ան վախըթները օթօ չիկար որ գործածէին, Էշնվ կ'երթային»:

Ինչո՞վ կ'երթան թող երթան, միայն թէ Տային շարունակէ պատմութիւնը ուր հինգ վայրկեանը մէյ մը, մէկը միւսին հետ կապ չունեցող դէպք մը կը պատահի, տարօրինակ արարած մը կը յայտնուի: Հարաւէն հրէշին կինը կը հասներ, փորին մէջ նոր կլլուած կէտճուկ մը որ դեռ կը շարժէր: Հրէշը գիտէք ինչ է. հուր՝ կրակ, Էշ՝ գիտցած հայվանդ: Խուսք խուսք կրակ կ'ելլէ հրէշին կնկան ականջներէն: Արեւմուտքէն Կենճ Դրոն դուրս կը քաշէր ճենկիզ Խանին սուրը, կը հասներ ճր՝ հրէշին կինը բարձր լերան գագաթը հասեր է: Կենճ Դրոն հագիւ ոտքը լերան կը դներ՝ մէյ մըն ալ լեռը քալել կը սկսէր, բայց մրջիւն մը տեսածին պէս՝ լեռը կը կենար: Տային յատուկ սէր ունէր մրջիւններու նկատմամբ: Անոնք պզտիկ արարածներ էին որ մեծ գործեր կը կատարէին: Անօթի չէին մնար:

Գիշերը՝ երկու որսի շուներ պահակ կը կենան, որ քնանայ Կենճ Դրոն: Աղուէսը կու գար կ'ուտէր Մաճպուրին բոլոր հաւերը, յետոյ գայլը կու գար կ'ուտէր աղուէսը, խորամանկ արջը իբրեւ թէ աչքերը գոց է չի տեսներ կոր, հայտէ, մէկէն կը յարձակի բզիկ բզիկ կ'ընէր գայլը: Փիղը կու գար մէկ թաթով կը

ճգմեր արջը: Բայց լռիկ մնջիկ մրջիկները խելացի էին, պզտիկ հալին մի նայիք, անոնք շատ խելացի են, կու գան փիղին յետոյքէն կը սկսին կրծել հագարներով, մեղուները կու գան, ճանճերը, ագռաւները: Փիղը պզտիկ պոչիկով ինչպէս անոնց սատկեցնէ: Կը մտնեն կը մտնեն կ'ուտեն միսը: Յնդիկ ալ չկար որ ազատեր փիղը: Քանի որ լէշը այդքան կը հոտի, գիւղին մարդիկը մէկալ գիւղերը կ'երթային: Այդ գիւղին անունը ինչ է եղեր՝ Պիլմէճէմ:

Յետոյ տասնըմէկ տարեկան Սմբիկը (կէս ժամ առաջ տասներեք տարեկան էր) Շաշ Տօնձին հետ գնդիկ խաղցած պահուն կարմիր խնձոր մը կ'իյնայ ճիշդ Սմբիկին գլխուն, բայց գլուխը չ'արիւնի, ինչո՞ւ ... լարուած կը սպասենք պատասխանին, եւ ճիշդ այդ պահուն ոտքի կ'ելլէ. Էհ, մնացեալը վաղը: Մնացեալը վմո՞ղը: Գլուխը մեծ է, խնձորը պզտիկ է, անոր համար չ'արիւնի: «Վերերէն բան մը իյնայ նէ՛ քարի պէս է, կը ջարդէ»: Տայի, ինչ կ'ըլլայ շարունակէ: «Յատէ նայիմ, դուք մտածեցէք: Վաղուան ալ պատմութիւն պէտք է: Ես պոյայի քիւփ չեմ»:

Յաջորդ օրը քով քովի թխմուած ենք անհամբեր: Շարունակած պատմութիւնը երբեք կապ չունի նախորդ օրուանին հետ: Անմիջապէս կ'ուզենք հասկնալ երէկուան պատմութեան շարունակութիւնը: Մինչ այդ Տային մոռցած կ'ըլլայ իր հնարածը, բայց մեջէն կ'ելլէ: Տարօրինակ պատահարները լուծում չ'էին գտներ, բայց մեր հետաքրքրութիւնը հարցումներու շարան մը կ'ըլլար:

Չախչախ թագաւորը առաւ Փրթունին ոսկիները: «Ինչ Չախչախ թագաւոր, անոնք մեռան, փայտոսցան»:

Գնդուլիկին գնդակը ո՞վ գողցեր է եղեր: «Սա կեանքին մէջ ամէն ինչ ուզածնուդ պէս չըլլար, եաւրուներս. Գնդուլիկը առանց գնդակի մնաց, իր ախմախութիւնն էր»: Բայց Գնդուլիկը կաղ էր, հազիւ կը քալէր, չէր կրնար վազել: «Իր գնդակը կը սիրէր նէ՛ այն ատեն ամուր թող բռնէր ասդին-անդին թող չի նետեր»: Բայց ան գնդակը պահած էր: Տային չէր յիշեր, բայց մենք կը յիշէինք որ Գնդուլիկը զգոյշ էր: Անմիջապէս պիտանի դաս մը եւս կու տար: «Պահել կայ՝ պահել կայ. անանկ տեղ մը պիտի պահես որ մէկուն խելքէն միտքէն չ'անցնիր»:

«Յետոյ բացուեցամ ադ քարայրին դուռը: Ազատեցամ Մէյմէյ գառնուկը». «Ինչ քարայր» ...Ուրեմն սարդերը կերան պզտիկ գառնուկը: «Ոչ ոչ ոչ, երկրաշարժ եղաւ, անանկ երկրաշարժ մը եղաւ որ երկինքն ալ շարժեցաւ, փլաւ քարայրը: Գառնուկին մաման կաղալով եկաւ, ազատեց ծագը»: Բայց մայրը մեռած էր, յիշեցուցի Տայիին: Գլուխը կախեց յետոյ շեշտակի նայեցաւ Նաթաշային, որ մայր չունէր. «Ես անանկ կ'ըսեմ ամմա դուք պէտք չէ հաւատաք քի մայրը մեռած է»:

Այս «շարունակական» պատմութիւններէն ո՞չ մէկուն մէջ նախկին տիպարի մը կամ վայրի մը անունը չկրկնեց: Կային՝ Թուրքերես, Գիլվէնար, Ոսկիմատ, Երվըխ Սագօ, Միշմիշ, Յէյրան-Եէյրան-Փայլան երեք քոյրեր – մէկը Եփեսոս

հարս գնաց, մեկը Թեսաղոնիկե, մեկն ալ իշտե Պոլիսը մնաց: Կային քաղաքներ՝ Եճապոն, Մարմրան, Տրնկուշ, Չինչին (ուր միայն փիլաւ կ'ուտէին):

Բայց ոչ, միշտ ալ պառաւ մը կար որ ջրհորին մեջէն կամ փոսին մեջէն կամ գերեզմանին մեջէն դուրս կու գար, կամ ալ սեւ ծառերուն վրայէն վար կ'իջներ. անունը Թերսուրաթ: Ետեւը պահած կ'ըլլար ձեռքերը. մեկ ձեռքին՝ բարակ օձ, միւսին՝ կարմիր խնձոր: Չսիրածին առջեւ օձը կը հրէր, հաւնածին՝ խնձորը կու տար բայց մեկ պատառէն ետ կ'առնէր. օձն ալ քովը կու գար եալվար-եախար կ'ըլլար որ իրեն ետ առնէ: Այդ Թերսուրաթին անունը երիտասարդութեան Եւա է եղեր: Պալատի մեջ կ'ապրի եղեր, ամուսինին խնձոր տուեր թունաւորեր է. պալատէն դուրս դրեր է: Յուրի փերի մը հասեր է, հոգ տարեր է որ չի մեռնի, մէջ մը որ աղէկցեր է մարդը՝ անիկա անհետացեր է: Ամուսինն ալ փերուշան՝ աշխարհին մեկ ծայրէն միւսը կը թափառի: Եթէ զաւալը մարդ մը տեսնէք մեջտեղերը, իշտե Թերսուրաթին ամուսինն է: Բայց Սատանան ադ Եւային կատարեալ տգեղցուցեր է, հալած պէքմեզը տաքտաք դեմքին թափեր է: Թերսուրաթին աչքը ապակի ըլլալուն «թամամ ադ պատուհանին ապակիէն» միշտ թուզի տերեւով աչքը կը ծածկէ եղեր: Այնքան պիչիմսիզ է որ տեսնալուդ պէս ափալ թափալ հեռու գիւղերը կը փախիս: Բայց ջրհոր չեղած տեղը չ'երթար. Իիինչո՛ւ չ'երթար հարցուցէք: Ինտո՛ր պիտի լոզնայ: Գիշերը երբ բուերը ճչան, ագռաւները կռնչան, գայլերը ոռնալ սկսին, ըսել է որ Թերսուրաթը կը լոզնայ կոր:

Օր մըն ալ պատմեց որ միլիոն առաւել վաթսուն անգամ միլիոն տարիներ առաջ կենդանի մը կար, որուն գլուխը եթէ հոս է ճիշդ սա սանդուխին ծայրը, մարմինը՝ ութը յարկ վար պարտեզն ալ կ'անցնի մինչեւ ադ տոթթոր օլաճախին պալթոնը: Պոչն ալ, սա վարի հաւուզը կամ ետ, ադ մեծ հաւուզին մեջ միայն պոչը կը բաւէ: Անունը՝ Քշանքեօրիշ:

Ինչ տեսակ ձայն ունէր, Տայի: «Ես այն ատեն չիկայի որ ձայնը լսէի: Ծառերը աստեղէն երկինք կը հասնէին. ծառերը իմացեր են որ Քշանքեօրիշը՝ արեւը պընակ մը կերակուրի պէս՝ լրփ պիտի ընէ ուտէ եղեր: Ծառերը նամակ գրեր են արեւին, զեփիւռը տարեր տուեր է. արեւը աս կարդացածին պէս՝ Ես քու խնրդ կ'անիծեմ ըսեր է: Լուսինն ալ խեղճը ինքզինքը ազատէ ըսելով՝ արեւին ֆիթ տուեր է հա տուեր է: Արեւը իր բոլոր պիւթակագները բացեր է, հարիւրհազար հատ եւ Քշանքեօրիշը ճրգըր-ճրգըր այրեր է: Ամնա եօթուկէս ժամ տեւեր է մինչեւ որ այրի վերջանայ: Ադ հայվանին մոխիրը բլուր դարձեր է: Միւս օրը առտուն արեւը կը տեսնէ որ տարչինի գոյն երկար թեւերով թռչուններ կան մոխիրներուն վրայ: Աղուորներս, ձեր տեղը հոս չէ կ'ըսէ, ամէնքը մեկ Յայաստան կը ճամբէ: Ան թռչունները կախարդական հիւներ ունին, ուր որ երթան գիւղ կը շինեն, քաղաք կը շինեն, լեցուն ընտանիքներ կը շինեն: Բայց աս ալ գիտցէք՝ աս թռչունները միւսներուն պէս չեն, ասոնք ձայն չունին, բայց միշտ կ'աշխատին: Պզտիկ աչքեր ունին կը կարծես, բայց ադ աչքերուն տակը կրակ կայ: Դուն մի ըսէր որ՝ ադ

մոխիրին մեջ քիչիչիկ մը կրակ մնացեր է ան ալ աչքերուն տակ պահեր են որ իրենց լոյս տայ, քանի որ միայն գիշերները կը թռին որ որսորդները իրենց չի տեսնեն: Անանկ դիմացկուն թելեր ունին, աշխարհի չորս կողմը կը թռին կայծակի արագութեամբ: Աս ալ ասանկ էֆենտիմ:

Անբախտ ժողովուրդ մը կայ եղեր: Գիշեր-ցերեկ կ'աշխատին, արիւն քրտինք կը մտնեն. եփերկար սեփսել մարդիկ կու գան ամէն ինչ կը փախցնեն կը տանին, օրօրոցին մեջի պեպեքներն ալ կը տանին: Ան պեպեքներէն մեկուն անունը Արաքսի է եղեր: Ասիկա միտքերնիդ պահեցէք, յետոյ կը գիտնաք ինչու կ'ըսեմ կոր: Ադ սել վահշիները կ'աւրեն կը ձգեն, պիւթիւն մեմլէքէթը խարապ կ'ընեն: «Մեմլէքէթ»ը ինչ է Տայի: «Մարի, մեմլէքէթին հայերէնը ինտոր կ'ըլլայ կոր»: Յայրենիք: Մէյ մը կէս մը փլած պատին տակէն չէօքմիւշ եղած անկողինէն Յարութիկը աշուկները կը բանայ կը տեսնէ որ ամէն բան գետին ինկեր է, տունը մէկը չիկայ. պիտի լայ բայց ոյժ չունի, շատ անօթի է. կամացուկ մը վախվխելով կը քալէ, տակը չիչ ըրեր է բայց չի գիտեր ուր են իր վարտիքները, պտըտիկ-պտըտիկ կը քալէ, իրենց պարտեզին մէջը կը տեսնէ կարմիր լոլիկ մը կայ կարմրուկ հասուն, փրցնելը խածնելը մէկ կ'ըլլայ: Մէյ մըն ալ թունուհ, հոտած, տասը քիլօ խաշուած փաթաթէսի չափ փորով մարդ մը կու գայ, ուռած մատներով բարակ չորցած ճիւղը բռնած վրան կը յարձակի, վայ կեաւուր կ'ըսէ, անանկ տէքքիկ մը կը զարնէ, Յարութիկը գետին կ'իյնայ. մարդուն աչքերը կաս կարմիր են, ձեռքով ոտքով անանկ կը ծեծէ Յարութիկին ան...անկ ...կը ծե...ծէ... Ստեփան Տայիին աչքերէն խոշոր կաթիլներ սկսան իջնել, մեզի նայեցաւ ամենագորովագութիւն նայուածքով: «Ինչու կը ծեծէ»: Է, հայվան է կը ծեծէ հա կը ծե ... աչքիս մեջ փոշի մտաւ մէ վարկեան էրթամ լուամ: Վերադարձին՝ ցուցամատը վեր բարձրացուց Տային, բարձրացուց նաեւ ձայնը. - բայց Յարութիկը քաջ տղայ էր, քաջ տղաները միշտ պահապան հրեշտակ կ'ունենան: Էկուր նայէ որ իրեն մամային դրացին, դեղին մազերով կինը դուրսը լուացք կը փռէ կոր եղեր, տեսեր է, փախցուցեր է ադ ճանավարին ձեռքէն: Յարութիկը քովը պահեց: Երմակ սաւաններուն մէջը փափուկ-փափուկ պառկեցուց: Յաւու ոսկորի ջուրով մածունով չորպա եփեց: Ամէն շաբաթ օր անուշապուր եփեց Յարութիկին համար: Անհամբեր Շաբաթ ըլլալը կը սպասէր. այդ օրը երկու պնակ անուշապուր կ'ուտէր Յարութիկը: Շատ պզտիկ էր բայց խելացի էր, կարծես քի մեծերուն չափ բաներ գիտէր: Իրեն մաման անտառին մէջ կորսուեր է կ'ըսէին: Յոն վայրի կենդանիներ կան, անոր համար ելեր երկինք գացեր է:

Ադ աղուոր դրացին ուրում էր, Յարութիկին ձեռքը կը բռներ որ ամէն գիշեր խաչ հաներ: Մի վախնար, մամադ արդէն երկինքէն միշտ կը նայի կոր քեզի-աման տեսէք, կ'ըսէ կոր մամադ հիրիշտակներուն, Յարութիկս ինչ աղուոր կը մեծնայ կոր:

Արաքսին, պեպեք Արաքսին ինչ եղաւ: «Արաքսին ալ իր քոյրն է եղեր. Յան, իր քոյրիկն էր»: Ինչպէս գտաւ աղբարիկին: Կայնեցաւ Տային, կեռասի հաստ ճիւղին յենեցաւ. առաջին անգամ ըլլալով պատասխան չտուաւ: Եաւրուներս ըսաւ. կոկորդս կը ցաւի կոր. հոս պիտի կենանք: Վաղը կը շարունակեմ:

Այդ վաղըն չհասաւ: Այսինքն վաղըն եկաւ բայց շարունակութիւնը չեկաւ: Բայց ո՞վ կը հաւատայ որ շարունակուեցաւ:

Անկէ ետք կը խուսափէր Տային մասալներու պահերէն:

Արդէն երկու շաբաթ ետք, Յոկտեմբերը սկսելուն պէս տան մէջ պատրաստութիւնը կը սկսէր ներգաղթի: Ետ քաղաք պիտի երթայինք ամէն մէկս իր տան մէջ իր ծնողքին հետ: Մէկ դասարան բարձր. գրեթէ նոյն դասընկերներով: Կը տխրէինք որ յաջորդ ամառը շատ շատ ուշ կը պիտի հասնի:

Տայիին հին նկարներու տուփին մէջէն, տարիներ ետք լուսանկար մը գտայ՝ գեղադէմ Տայիին քով նոյնքան բարձրահասակ, բայց քիթը բերանը ծռմռած, մէկ աչքը վեր մէկը վար, առանց յօնքի, ճաղատ երիտասարդ մը: Ետեւը գրուած է՝ Արաքսին մէկ հատիկ տղան Ինկարը:

Տայիին աչքերուն մէջ անցեալը, ներկան եւ ապագան կար:

Իր խոշոր աչքերէն կայծակներ եւ կայլակներ կ'իջնէին, որովհետեւ վճիտ կապոյտ էին աչքերը: Պսպղուն էին նայուածքն ու պատմութիւնները, որովհետեւ միշտ գրկեր էին տաքուկ արեւի տարբեր մէկ տեսակը:

Իր կոկորդի ցաւը անցեալէն, մանկութենէն ի վեր քրոնիկ դարձած՝ միշտ պատճառ մը ունէր ցաւելու: Ինք ալ ձեւը գտած էր, գէթ երեւութապէս, ցաւը հեռացնելու:

Իսկ պատմութիւնը ապագային համար է: Յմայիչ է յուզիչ է, կախարդական է գերիբական է. ինչ որ է՝ մաքրագտում է. տիտանմողէզներուն՝ տայնոգորներուն վրայ կայնած փիւնիկ է:

Նիւ Երրգի, ԱՄՆ

ԵՐԲ ԼՍՈՂՈՒԹԵԱՆԴ ԱԿԵՐՆ ԵՆ

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

որ կը համրանան
եւ հնչիւններդ
կը դադրին

քեզ առինքնելէ

ու կը մտնես

քու հին
անյայտ
անարտայայտ
գոյութեանդ

սահմաններէն

դաժանօրէն իրաւագրկուած

դուն պիտի կրնաս անցնիլ անդին
պիտի կրնաս

կոխկռտել բոլոր տարտամ շեմերը գիտակցութեան

եւ գրոհել

դէպի ներս
եւ դէպի դուրս

տես
տիեզերքն է որ անամոթաբար կը լռէ շուրջոյ
քու էութիւնդ իր տիղմին մէջ

թաղելով

եւ քեզ թաթխելով իր պղտոր ապուրին

տիեզերքն է

որ քու շուրջոյ կը թաւալի
իր յերկրածոյ գանգուածով

մոռնալով քեզ

չիշելով

եւ յուսալով որ դուն եւս տարիներուդ փլուածքին հետ պիտի մոռնաս
քու ինքնութեանդ եզրերը

կանգնիր ոտքի

այս քու մարմինդ որդուն շունն է որ կարենայ տնօրինել քու ելքդ
այս աշխարհէն

կանգնիր ոտքի

կ'ըսեմ քեզի

դուն խուլ չես

դուն կը լսես բոլոր ներքին ձայները այս պատեանին գոր ալիքները

շարտեցին

դուն կը նախազգաս բոլոր գիրերը

պայթիւնավտանգ

դուն կը նախատեսես աղէտը թռչուններու սողուններու զեռուններու անօրինակ ելոյթներով

կը նախալսես գարուններէն մինչեւ ձմեռը երկարող դաժան ստեղնաշարը որ իրականութիւնը կը մրճահարէ ականջիդ տակ

օր ու գիշեր
առանց սուր կողմերը հարթելու

ահա նորէն
կը ճչայ

կը ճչայ ճշմարտութիւնը գանկիդ մէջէն

լեռնէ ի լեռ
արծագանգելով

եւ քու մեռնող ականջներուդ

պատերը բզկտելով պատռելով

դուն կը նախապրիս բոլոր վերջին առնչութիւնները
այս մարմնին

եւ հակառակ

եւ հակառակ այդ բոլորին

դուն վերստին կու գաս աշխարհ կիսատ թողուցած առաջադրանքներդ
մէկիկ մէկիկ իրենց լրումին հասցնելու

համաճարակները քեզի համար չեն
անոնք շատ հեռու

են

քեզ կարենալ վարակելէ ու ճարակելէ

դուն հոս ես քու մեծ առաքելութեանդ համար

եւ դեռ գործ ունիս ընելիք

Չայր մեր
որ յերկինս ես

թող սուրբ ըլլայ Քու անունդ
Քու արքայութիւնդ դեռ պիտի գայ
և այն ինչին համար որ Դուն կամեցար ստեղծել մեզ
պիտի անպայման կեանքի կոչուի նորէն ու նորէն ու նորէն

երկնքի մէջ եւ երկրի

զիացն մեր հանապազորդ տուր մեզ այսօր

հանապազօրեայ մեր հացը որուն թթխմորն է մեր ոգին
Դուն երբեք մի գլանար
մինունար որդիներուդ եւ դուստրերուդ

եւ ներէ մեզի բոլոր մեր անհատուցելի պարտքերուն համար

ինչպէս որ մենք պիտի ներենք բոլոր այն պարտական հոգիներուն
որոնք արժանի են Քու սեղանիդ

Չայր

փորձութիւններդ ամեն տեղ են
Քու ստեղծած այս անսահման դրախտիդ մէջ

մեր պարտքն է զինուիլ անոնց դէմ

այն հզօր զէնքերով զորս
դուն դրիր մեզմէ ամեն մէկուն էութեան մէջ

զաղտնօրէն
ստիպելով որ մենք փնտռենք եւ գտնենք զանոնք եւ տեր կանգնինք
մեր

վիրաւոր ժառանգութեան

եւ յաղթահարենք զմեզ

մենք որ չարն ենք և բարին միաժամանակ

միայն մենք

կրնանք կերտել յաղթանակը

զոր Դուն

կը պահանջես մեզմէ

Աստուծոյ ամէն մէկ օրը

հիմա կը խօսիմ քեզի

դուն որ հասած ես եսիդ վերջին արարին

այն որ կար

եւ դրուն մէջ քու ինքնութիւնդ ապրեցաւ

այսքան տարի

պիտի դադրի այլեւս

եւ պարպուի

երբեմնի իր յաւակնութիւններէն

զիտեմ

քեզ ի մի բերողը այս վերջիններն էին

բայց այլեւս յանցաւորներ մի փնտռեր

յստակ է

որ դուն

այլևս չես պատկանիր այս հողին

չես պատկանիր ինքզինքիդ

եւ չես լսեր ըսածս

կը լսես միայն քու ձայնդ ներքին

որ արդէն բաժնուած է ու հեռուն

դուն դուրսն ես այլևս

դուն կտրուած ես հին արգանդէն
եւ

գտած ես

ամբողջութիւնդ

եւ ինչ հրաշք

ազատ ես

Մըքլէյն, ԱՄՆ



Her Self 30x24 Acrylic on canvas 2019
Գործ՝ Վահե Պերպերեանի

ԲԵՐԻՎՇԵՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԱԻԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ

(Շարունակուած նախորդ թիւէն)

Ե.

Տուրեանի հետեւելով, նախարարները իրենց դաւադրութեան աշխատանքը կը մշակէին խիստ գաղտնի պայմաններու մէջ: Դաւաճանութեան հետքերը ծածկելու համար, Տուրեան սկսած էր նոյնիսկ կեղծ ժողովներ գումարել «Էշ նահատակներով»:

Տուրեան հետեւեալ ձեւով կը գործեր. իր բարեկամին՝ «Պրոֆեսորին» տունը, ժողովներ կը կազմակերպէր որոնց հաւանական դաւադիրներ կը հրաւիրուէին թաքուն միջոցներով, երկար ժամանակ իրենց հետ կապը սերտած ըլլալէ ետք, վստահութիւն ներշնչելու համար տիրող սարսափի պայմաններուն մէջ: Ով որ հրաւերը ընդունէր, անգիտակցաբար՝ սեփական ձեռքով իր մահկանացուն կընթած կ'ըլլար: Ժողովէն ետք, Տուրեանն ու Պրոֆեսորը՝ մէկը միւսէն առանձին, ենթադրեալ դաւաճաններուն անունները կը փոխանցէին գաղտնի սպասարկութեան: Այսպէսով, Տուրեան կրցած էր ծխամպ ստեղծել, Մուրատեանին դէմ իր իսկական ծրագիրը ծածկելու համար:

Պապիկի նման մարդ էր Պրոֆեսորը ու բերիաշէնցիներու կողմէ սիրուած: Չինք մօտէն ճանչցողները, սակայն, տարբեր ձեւով տրամադրուած էին իրեն հանդէպ: Ամէն օր կայարան կ'երթար Մոսկուայէն գնացք սպասելով, որքան ալ կէս դարէ աւելի անցած ըլլար, որ Սովետական Միութեան մայրաքաղաքին հետ երկաթուղային կապ չկար: Բերիաշէնի մասին 2010ին Ակսել Ագեանի յայտնաբերուած զեկոյցէն այս հատուածը այստեղ յիշենք.

Պրոֆեսորը, արեւմտեան ոճի տարագ հագած, ամէն օր կու գար կէսօրուան ատեններուն եւ ժամերով կը սպասէր գնացքի մը գալուն ոտքի վրայ, հաստ ակնոցներուն ետեւէն լեռնաշղթայով փակուած հորիզոնը ուսումնասիրելով: – Պրոֆեսոր, Էսօր էլ գնացքի չենք սպասում, Մոսկուայից լուր չենք ստացել, – կ'ըսէին իրեն կայարանին պաշտօնեաները եւ բանուորները:

Օրեր առաջ, Ասքանազ ըսած էր Ակսելին, որ Պրոֆեսորը հիւլէական ֆիզիկոս էր, առաջին սերունդէն, որ Բերիաշէն փոխադրուած էր սկզբնական շրջանին, Մոսկուայի հրահանգով: Այդ սերունդէն միակն էր, որ մնացած էր: Միւսները երկրաշարժէն քանի մը տարի ետք սաստիկ մաքրագործումնե-

րուն շրջանին անհետացած էին: Ուրիշներ, անոնք որոնք դեմ էին Բերիայի պատկերը Ստալինի ձախին տեղափոխելու տեսակետին, սպաննուած էին «Դիմանկարներու Յակամարտութեան» ժամանակ:

Երկաթուղիի կայարանը միշտ քանի մը հոգի կ'ըլլար, որոնք տարիներէ ի վեր կը սպասէին, որ Մոսկուայի գնացքը գայ: Քանի մը ծերեր կը սպասէին պատերազմի գացած զաւակներու կամ ամուսիններու վերադարձին: Կէս դարէ աւելի էր, որ երթելեկութիւն չէր եղած այս կայարանին մէջ, բայց չէին հաշտուեր այս կացութեան հետ: Մինչեւ 1953ի երկրաշարժը, այս գաղտնի երկաթուղիի ճիւղը կ'օգտագործուէր գիտնականներու եւ հանքերու արտադրութեան փոխադրութեան համար:

Կ'ըսէին թէ Պրոֆեսորը քառասունականներուն աշխատակցած էր Սախարովի եւ Կուրչատովի հետ: Թէեւ ինքը ճամբորդներուն մէջ չէր Մոսկուայի ուղղութեամբ, ելլող առաջին գնացքի օրը անհամբեր կը սպասէր:

Պրոֆեսորը կայարանին մօտ կ'ապրէր: Ամենատես կոյրերու պէս, առանց սայթաքելու մութ փողոցներուն մէջէն հասան Պրոֆեսորին տունը: Երբ օդին սկսած էր առատութեամբ հոսիլ, ներկաները Ակսելին ըրին նոյն հարցումները՝ ինչ տարի էր, եթէ Պերիան Ստալինը սպաննած էր, եթէ Միացեալ Նահանգներ կենցաղը շատ տարբեր էր կամ եթէ երբեք պանան կերած էր: Մէկը կը պնդէր, որ մինչեւ հիմա սովետական գիտութիւնը այնքան յառաջդիմած ըլլալու էր, որ հնարաւոր դարձած էր մարդոց կեանքը երկարել մինչեւ 200 կամ նոյնիսկ 300 տարի, եւ որ հաւանաբար Ստալինը թաքնուած էր Կոմունիստական Կուսակցութեան կողմէ, որ թշնամիներէն պահպանուի: Մէկը քիթին տակէն ըսաւ, որ այս մարդուն այլեւս օդի չհրամցնէին, եւ քանի մը հոգի մը խնդաց, բայց ուսուցիչներէն մէկը ըսաւ.

– Իմ պապիկի գիւղում շատ էին երկարակեաց մարդիկ, նա էլ 90ը անց է մահացել, առանց բժիշկի կամ ներկայիս հնարաւորութիւնների, ոնց չլինի որ Սովետը, իր բոլոր գիտնականներով եւ միջոցներով, դա կրկնապատկի, դա ինձ շատ հնարաւոր մի քան է թւում:

Ուրիշներ յայտնեցին այն կարծիքը, թէ Երրորդ Յամաշխարհային Պատերազմ եղած էր, եւ որ թերեւս Բերիաշէնէն դուրս գտնուող աշխարհը քանդուած էր, կամ ալ հիւանդագին մարդոցմով բնակուած էր հիւլէական ապականումի հետեւանքով.

– Մեր խոպանցիների նման,– ըսաւ գինով մը (խոպանցի կ'ըսէին ուրանի հանքի կողքին ապրող գիւղացիներուն, որոնց մէջ մեծ թիւով այլանդակներ կային): – Արտաքին աշխարհի օդը թունաւորուած է:

Մեծամասնութիւնը սակայն լռելեայն կը կասկածէր այս իրողութեան ճշմարտութեան վրայ, բայց միւս կողմէ անուղղակի կերպով հարց կու տային, թէ ինչո՞ւ, եթէ իսկապէս արտաքին աշխարհը բնականօրէն կը շարունակուէր, Բերիաշէնը խզուած մնացած էր անկէ:

– Ո՞նց մեզ դեռ չեն գտել,– հարցուց ցած ձայնով ուսուցիչ մը Ակսելին, որ մատնիչներու սարսափէն լռութեամբ կը հետեւէր գերիապաշտ խօսակցութեան:

Բերիաշենի բոլոր ծայնասփիւռները հանրային տեղեր էին – գործարաններու մէջ, հիւանդանոցներու մէջ, դպրոցներու եւ բանտի միջանցքները – եւ ծայնասփիւռի անհատական սեփականութիւնը արգիւտուած էր: Շատեր ունէին, սակայն, գաղտնի, նախապատմական ծայնասփիւռներ, որոնք անօգուտ էին, որովհետեւ բնակարանները ելեկտրական հոսանք չունէին, ռազմական խնայողութեան համար: Այդ գիշեր, Պրոֆեսորը արդիական ռատիօ մը ցոյց տուաւ, որուն միւս ներկաները հիացումով կը նայէին:

– Սա բոլոր գիտութիւնների աղբիւրն է, բայց դրա կարիքը չունենք, – ըսաւ: – Ինչ պիտի փոխուի, որ իմանանք ինչ տարի է կամ եթէ Միկոյեանը ողջ է թէ ոչ, դա ո՛ւմ է ծառայելու: Պրոֆեսորը պնդեց, որ Բերիաշենը հայութեան ուժի գաղտնիքը գտած էր: – Մենք դարերով հպարտանում էինք, որ պատմութեան առաջին քրիստոնէայ ազգն ենք եղել եւ ես հարց եմ տալիս՝ դա ինչ օգուտ էր. Աստուծոյ հայերէն աղօթում էինք, բայց Աստուած հայ չէր: Եւ ակեցուց՝ – 1918ի անկախութիւնը մեզ սով բերեց եւ ռուսների գիրկը հըրեց, եւ նրանք մեզ ի՞նչ արեցին, Արեւմտեան Հայաստանը եւ Ղարաբաղը թուրքերին տուեցին:

Ներկաները վախով կը նայէին իրարու:

– Այսքան ժամանակ անկախ հայկական իշխանութիւն դարերով չենք ունեցել,– ըսաւ Պրոֆեսորը, խանդավառուած: – Բայց մի՛ յուսահատուէք, չի կարող յաւերժապէս այսպէս լինի, մի օր մեզ գտնելու են:

Ուրիշ ներկաներ սկսած էին նեղանալ եւ անհանգիստ կ'առաջարկէին, որ մեկնին:

– Պրոֆեսոր, շարժուենք, գնացքը շուտով գնալու է,– ըսաւ թուաբանութեան ուսուցիչը:

– Ոչինչ, շշակ պիտի հնչեցնեն, երբ պատրաստ լինի մեկնելու, կը հասնենք հինգ թոպէից, մենք այստեղ կարելոր խօսակցութիւն ենք վարում: Դուք երբեւէ ձեզ հարց չէ՞ք տուել, թէ մեր ելեկտրականութիւնը ո՞րտեղից է գալիս: Իրօք շատ քիչ ունենք, բայց կառավարական տանը լոյս է լինում, դա ո՞նց է մեզ հասնում, երբեք չէ՞ք մտածել:

«Ճիշդ է», մտածեց Ակսել, «Բերիաշեն ելեկտրատականութիւն չ'արտադրեր՝ ուրկէ՞ կու գայ»: Դիմացի գրադարանի մոմի լոյսին տակ, տեսաւ լուսանկար մը, ուր Պրոֆեսորը, երիտասարդ ու նիհարակազմ, Միկոյեանի եւ ուրիշ մեկուն կողքին կեցած էր:

Կայարանին շշակը լսեցին եւ բոլորը ոտքի ելան, որ փողոց վազեն:

– Արսէն, Գրիգոր, Ասքանագ, Ակսել, Վալոդ, Բարգէն, շնորհակալ եմ որ իմ տունը այցելեցիք,– ըսաւ Պրոֆեսորը:

Միւսները լուրջեմբ ելան փողոց, բայց Ակսել չհասկցաւ թէ ինչո՞ւ տրամադրութիւնը յանկարծ դառնացաւ: Մոմերու բոցի տկար լոյսին տակ տեսաւ Պրոֆեսորի հաստ ակնոցներուն ետեւ դեղին, գայլի աչքերը:

– Ո՞նց ես կարծում փրկուել է, երբ բոլոր պաշտօնակիցներին մաքրել են,– ըսաւ ուսուցիչներէն մէկը Ակսելին: – Նա է բոլորին մատնել, ուզում էր հասկացնել, որ մեր բոլորին անունները յիշում է:

Բոլորն ալ գիտէին, որ Պրոֆեսորը մատնիչ էր, բայց Տուրեանի ներկայութիւնը վստահութիւն կը ներշնչէր՝ Բերիաշէնի հին եւ ազդեցիկ ընտանիքներէն էր: Տուրեան եւ միւս երկու իսկական դաւադիրները (Օ. եւ Ս.) այս ժողովներու ընթացքին երբեք իրենց բերանը չէին բանար: Մուրատեանի եւ ոստիկանութեան հետ համաձայնուած գործողութիւն մըն էր, հաւանական հակառակորդներ թակարդի մէջ ձգելու համար:

Այս ժողովներէն անմիջապէս ետք, Տուրեան եւ իր երկու ընկերակիցները միւս մասնակիցները կը մատնէին, ինչ որ վաւերացուած կ'ըլլար Պրոֆեսորի



ամբաստանութիւններով: Պրոֆեսորը, սակայն, սկսած էր կասկածի, որ իրմէ գաղտնի, իսկական դաւադրութիւն մը տեղի կ'ունենար, եւ որ զինք կ'օգտագործէին իբրեւ խամաճիկ:

Վերջին ժողովին, երբ բոլորը սեղան նստեցան, Պրոֆեսորը իւրաքանչիւրը անունով ու մականունով ողջունեց: «Գրիգոր Դաւթեան, յայտնի բժիշկ Պօղոս Դաւթեանի արժանաւոր զաւակ, փա՛նք քո նուիրեալ ընտանիքին... Վիզէն Պարգեւեան, քո գրիչը միշտ բեղուն լինի...»: Մեղրանոյշ թամատայութեան նպատակը յստակ էր՝ ամբողջ այս բանաստեղծութիւնը առ ի տեղեկութեան համար էր, որ բոլորին կրնար եւ պիտի

մատնէր եւ որ եթէ անոնց մէջ մատնիչ կար, կառավարութեան ականջին հասնէր իր հաւատարմութիւնը:

* * * * *

Այդ ժողովին նոյն գիշերը, ինչպէս ամէն Երեքշաբթի գիշեր գարնան ժամանակ, Գրիգոր Դաւթեան կը հանդիպէր իր կնոջ՝ Սաթենիկին, ու միասին կ'երթային Յրասարի վանքի տակ գտնուող պարտէզը, ուր կը նստէին բարտիներու շուկին տակ, լռութեան պահ մը բաժնելու, լռութիւն՝ որ նոյնիսկ եթէ անպայման ուրախութեան համազօր չէր, գոնէ տխրութիւնը կը ծածկէր: Երբ Սաթենիկ ընկճուած կը զգար, սովորութիւն ունէր քանի մը տուն բանաստեղծութիւն արտասանել: Այդ գիշեր, Գրիգոր եւ Սաթենիկ նկատած էին, որ իրենցմէ ոչ հեռու մէկը նստած կը ծխէր բայց անլուսին գիշերուան մութին մէջ չկրցան նշմարել թէ ո՛վ էր:

Այդ մարդը մօտեցաւ հարցնելու Գրիգորին, թէ սիկամ ունէ՞ր: Չունէր:

– Ո՞նց չունես:

– Չունեմ...

– Բա քո հարեւանին հետ քո ունեցածը բաժնել չես ուզում... Էս քո կինը շատ սիրուն է, միթէ Է՞դ էլ չես բաժանի...

Ու կնոջ ձեռք նետեց: Գրիգոր մարդուն վիզէն բռնեց եւ բռունցքը բարձրացուցած էր, երբ մէկը սուլեց ու մօտեցաւ: Գաղտնի ոստիկան էր:

- Էս ի՞նչ է պատահում Էստեղ:
- Այս բարեկամը չի ուզում մի հատ սիկամ տալ ինձ, ասում է թե Մուրատեանը մեզ քաղցից ուզում է սպաննել...
- Ես տենց բան չեմ ասել:
- Սո՛ւտ է, սո՛ւտ, – մըմրաց Սաթենիկ, սարսափած: – Էս բարեկամը գուցե սխալ է հասկացել...
- Ոստիկանը Գրիգորի ու իր կնոջ անձնաթուղթերը ուզեց:
- Ուրեմն տե՛նց, բարեկամ... Մուրատեանը մեզ քա՛ղց է պատճառում...
- Տենց բան չեմ ասել, սո՛ւտ է ասում Էս հարբած մարդը...
- Միթե դուք ստում էք, – պատասխանեց ոստիկանը: – Այստեղ ի՞նչ էք անում Էս ժամերին:
- Բերիաշենում ժամ չկայ, – պատասխանեց Դաւթեան:
- Ո՞նց չի լինում, ըսաւ ոստիկանը: Ինչո՞ւ կառավարութեան պաշտպանութեան որոշումները քննադատում էք:
- Չեմ քննադատել:
- Բա ի՞նչ էր այդ հարցականը, եթէ ոչ ծածուկ ամբաստանութիւն կամ լկտիւնութիւն, Բերիայի իմաստութիւնը ծիծաղի առարկա՞յ էք դարձնում:
- Ո՞վ ինչ ըսաւ Բերիայի մասին, պարզապէս հաստատեցի կառավարական քաղաքականութիւնը:
- Դու ո՞վ ես Բերիայի անունը տալու համար:
- Ես Բերիայի անունը չեմ տուել:
- Բա ի՞նչ ես անում... Ու ասա, մի պահ առաջ դու Պրոֆեսորի տանը չէի՞ր: Ի՞նչ հարցեր էք արծարծել: Ասա՛ բարեկամ...
- Դաւթեան դեղնեցաւ: Սաթենիկ վախէն սկսաւ լալ:
- Այս հարցը լուծենք, խնդրում եմ, կինս..., – ըսաւ Գրիգոր թել մը ձայնով, այլեւս դողալով:
- Կինդ մոռացիր, ըսաւ ոստիկանը: – Այս հարցը լուծելու ենք: Իմ հետն ես գալու, ըսաւ ոստիկանը:
- Այդ պահուն, մինչ Սաթենիկ լացը կը փորձեր խեղդել, փոքրիկ բոց մը լուսաւորեց մատնիչին նիհար դեմքը, իր բարակ շէկ պեխերը եւ ջուրի գոյն աչքերը:
- Բա՛, եկ տես որ լուցկի ունէի էլի, – ըսաւ մատնիչը բարձր ծիծաղով մը:
- Գրիգոր կնոջ մօտենալ անգամ չփորձեց վախէն քալելով ոստիկանին առջեւ, որ իրեն հետեւելով առանց ձերբակալելու ոստիկանատուն տարաւ, մինչ Սաթենիկ սարսափահար մութին մէջ նստած ցած ձայնով վախէն կու լար ու կու լար: Գրիգոր դաւաճանութեան համար դատապարտուեցաւ եւ շաբաթ մը ետք կախեցին Կեդրոնական Բանտի ներքին բակին մէջ:

Յաջորդ ամտու Պրոֆեսորը թունաւորուած գտան, սրահին մէջ ինկած: Կառավարութիւնը հարցը լուծեց՝ թունաւորումը նախորդ գիշեր Պրոֆեսորի կողմէ

մատնուած ու ձերբակալուած դաւադրական ժողովին մասնակիցներուն վերագրելով: Բայց իրականութեան մէջ, այդ գիշեր Ս.ն թունաւորած Էր Պրոֆեսորին տարած կոնտակի շիշը: Պրոֆեսորը կոնտակը երբեք չէր բաժներ եւ Ս. գիտէր, որ միշտ բաժակ մը կը խմէր այս ժողովներէն ետք, ջիղերը հանդարտեցնելու համար նախքան ոստիկանատուն երթալը մատնութեան: Դաւադիրները համա-ձայնած էին, որ Պրոֆեսորին մահը պիտի նշէր յեղաշրջումին սկիզբը Մուրատեանի դէմ: Բայց Օրջոնիկիձէ գործարանին խռովութիւնները եւ Աբեղեանի սպանութիւնը անակնկալ մը եղան դաւադիր նախարարներուն համար:

* * * * *

Օրջոնիկիձէ գործարանի միջադէպերէն անկախ, գրեթէ նոյն պահուն, քանի մը փողոց անդին, կառավարական շէնքը շրջապատուած Էր դաւադիրներու բանակին կողմէ: Մուրատեան՝ իր հաւատարիմ մատնիչներէն մէկուն թելադրութեամբ, ճիշդ ատենին նահանջելով դէպի Շահումեան հրաձգային զօրաբաժնի խարխուլը, որ դաւադրութեան չէր միացած՝ քանի մը վայրկեանի տարբերութեամբ յաջողեցաւ փրկուիլ: Խոպան գետի ափին գտնուող զօրանոցին մէջ շարուած էին քաղաքին յիսուն հրասայլերը, որոնք անգործածելի կը համարուէին:

Անոր համար, Տուրեան եւ միւս դաւադիր նախարարները անակնկալի եկան, երբ իմացան, որ հրասայլերու շարասիւն մը կը յառաջանար քաղաքը շրջանցող մայրուղիէն դէպի կառավարական տուն: «Անկարելի է՝ այդ ժանգոտած կառքերը շուտուանից փճացած լինելու էին, ո՞նց են աշխատացրել», կ'ըսէր ու կը կրկնէր Տուրեան: Անոր կողքին, Շահումեան զօրաբաժնի գունդերը սկսան արշաւի գործողութիւն, շրջանաձեւ դիրքեր գրաւելով, յեղաշրջումին ուժերը ճզմելու համար: Թէեւ դաւադիր նախարարներուն չորս զօրաբաժին միացած էր, միայն թեթեւ հրետանիով զինուած էին. Կալաշնիկով հրացաններէն դուրս միայն օժտըւած էին երկու թնդանօթով եւ խրամային հրասանդ մը, որ օգտակարութիւն բերաւ կռուի երկրորդ հանգրուանին, երբ դաւադիր նախարարներուն ուժերը քաշուեցան կառավարական տունէն:

Առանց ընդդիմութիւն գտնելու, S-34 թանկերու թափօրը շարուեցաւ կառավարական պալատին առջեւ, հրանօթները շէնքին ուղղուած: Վեց թանկ ալ շարուեցաւ հակառակ ուղղութեամբ, յետսապահ դիրք բռնելով դէպի քաղաք:

Գրեթէ նոյն ատեն, Օրջոնիկիձէ գործարանին հիւսիսային կողմը հրդեհ սկսած էր: Շահումեան զօրաբաժնի հրամանատար Գուրգէն Շահմելիքեանին հետ խորհրդակցելէ ետք, Մուրատեան որոշած էր, որ անյարմար պիտի ըլլար երկրորդ ճակատ բանալ բանուոր ապստամբներուն դէմ: Չօրավար Շահմելիքեան ըսած էր, թէ իր զինուորները պարտիզանական մարտավարութեան հմուտ չէին: «Դա Ստալինգրադի նման մի գործողություն է լինելու», համարած էր զինուորականը ու զգուշացուցած, որ թերեւս նախընտրելի ըլլար քաղաքական լուծում գտնել ժողովրդային դժգոհութեան:

Ուժերու մեծ անհամեմատության նկատմամբ, Տուրեան իր զինուորներուն հրամայած էր, որ ընդդիմութիւն չցուցաբերէն:

Յանկարծ մեծ պայթում մը կառավարական պալատի արեւմտեան կողմը շէքը շրջապատող Մուրատեանական բանակը անակնկալի բերաւ: Մուխին ու աղմուկին ընդմէջէն հարիւր հոգինոց շարասիւն մը ճամբայ բացաւ, գնդացիի կրակով իրենց կողքին պաշտպանութեան վահան մը ստեղծելով եւ Շահումեան զօրաբաժնի ճակատի մէջտեղէն նահանջելով դէպի Օրջոնիկիձէ գործարան: Դաւաղիւր նախարարները ընդառաջած էին բանուոր ապստամբներուն միանալու խորհուրդին, որ Տուրեան տուած էր: Եթէ յանձնուէին, պնդած էր Տուրեան, Մուրատեանը դաւաղիւրներուն «Բերիաշէնի ամենաբարձր բարդիներից կախելու է»: Իսկոյն, Մուրատեան կոչ ըրած էր դաւաղիւրներուն, որ անձնատուր ըլլային, Մոսկուայի մէջ աքսորի խոստումով: Միայն մէկ դաւաղիւր պատրաստակամութիւն յայտնած էր առաջարկը ընդունելու, թէեւ ինքն ալ գիտէր, որ կէս դարէ աւելի էր, որ Բերիաշէնը աշխարհէն կտրուած էր: Բայց վախէն տարուած, մարդը կ'ուզէր հաւատալ. «Գնացքի փապուղին եթէ բանալ տայ կ'անցնենք Երեւան ու Թիֆլիսի վրայով կը բարձրանանք Մոսկուա»: Տուրեան իր ատրճանակը աջ կողմէն քաշեց եւ մարդուն ճակտին կրակեց: «Մրան այստեղ թողնենք», ըսաւ, սպաննուածին շապիկին վրայ գլխազիրներով գրելով. «Սա է դաւաճաններին ու վախկոտներին ճակատագիրը»:

Փախուստի գործողութեան ընթացքին, դաւաղիւր ուժերու զինուորներուն մեծ մասը սպաննուեցաւ: Վիրաւորները, որ պալատին դիմաց Լենին հրապարակի վրայ ինկած էին, մեռան Շահումեան զօրաբաժնի հրետանիի կրակին տակ, որ կրակէ անձրեւի պէս Բերիաշէնի կեդրոնին վրայ տեղաց մինչեւ մահուան բացարձակ լռութիւնը տիրեց:

Ընդամենը յեղաշրջումը տեւած էր մօտաւորապէս տասներկու ժամ: Արեւամուտը չէր սկսած, երբ Մուրատեան ետ իր գրասենեակը մտաւ: Խառնարան էր. պետական փաստաթուղթեր գետինը ցրուած էին, որոնցմէ մաս մը այրած էին աթոռներու եւ ուրիշ իրերու կողքին խարոյկի մը մէջ, որ սրահին մէջտեղը վառած էին: Լենինի, Բերիայի եւ Ստալինի պատկերները պատռտած էին: Բերիայի նկարին աչքերը փորած էին: Եւ քարուքանդ եղող քաղաքի ղեկավարին առաջին հրահանգը եղաւ Սովետական եռեակին դիմանկարները ետ իրենց տեղերը կախել իրենց օրինաւոր հերթականութեամբ՝ Ստալինը մէջտեղը, Լենինը՝ աջին, իսկ Բերիան՝ ձախին:

2.

Օրջոնիկիձէ գործարանի հարաւային բաժինը ապստամբ բանուորները յաջողած էին պաշտպանել մեղմ հակայարձակումի փորձէ մը, որ Մուրատեանին հաւատարիմ Շահումեան զօրաբաժնի ուժերը ըրած էին թեթեւ հրետանիով, ինչ որ հաւանաբար թշնամի դիրքերու ուսումնասիրութեան գործո-

ղութիւն մըն էր. բանակը պարզապէս կ'ուզէր ապստամբներուն տեղակայումն ու քանակական տուեալները ստուգել:

Մինչ մուրատեանական ուժերը զբաղած էին նախարարներուն յեղաշրջումը ճնշելով, Օրջոնիկիձէ գործարանի ապստամբները դիմադրութեան աշխատանքներու ձեռնարկեցին: Կարելի չէ բացարձակ վստահութեամբ հաստատել, թէ կանխամտածուած ծրագիր կար թէ ոչ, բայց ամենայն հաւանականութեամբ Մարտիրոս Շահինեանի կողմէ Աբեղեանին դէմ յարձակումը վայրկեանական, ինքնաբուխ որոշում մը եղած ըլլայ: Վերապրելու կորովը զինք մղած էր նման յանդուգն քայլ առնելու, քանի որ ան, իբրեւ Յինգերորդ Բաժնի բանուոր-տնօրէն եւ մասնաւոր նիւթերու պատասխանատու (այսինքն՝ ռազմական կարեւորութիւն ունեցող) գիտէր, որ այդ օրը Աբեղեան եկած էր բոլորը մահապատիժի դատապարտելու համար: Ու Շահինեանի գործընկերները այդ մտավախութիւնը կը բաժնէին:

Շահինեան գործարանի կառատան մէջ շարուած աւրուած տրամվայները եւ *աւտոբուսները* շէնքին հարաւային մասը հիւսիսայինէն բաժնող բակին մէջ շարել տուաւ, ամրութիւններու յանպատրաստից համալիր մը ստեղծելով: Երկրորդ փուլի մը ընթացքին, գործարանը շրջապատող փողոցներն ալ պաշարեց, հսկայ հանրակառքերը շարելով գլխաւոր դարպասէն մինչեւ դիմացը գտնուող դպրոցին մուտքը: Այստեղ երրորդ շարք մը *տրամվայներ* շարել տուաւ, այսպէսով հանրակառքերուն միջեւ ներքին միջանցքներ ստեղծելով, խրամի համազօր արժէք ունեցող, ուր Մոլոտով ռումբերով եւ բոցարձակներով զինուած բանուորներ պահուլըտած էին: Շահինեան կիներու եւ երեխաներու խումբ մըն ալ նշանակեց սնունդի եւ շտապ օգնութեան ծառայութիւններ մատուցելու համար: Այդ օրերուն բերիաշէնցիներուն միակ կերակուրը սոխ եւ գետնախնձոր էր:

Տուրեան եւ իր զօրքին վերապրողները Օրջոնիկիձէ գործարանի հիւսիսային բաժնին մէջ պաշարուեցան, կառավարական պալատէն մօտաւորապէս երկու քիլոմէթր անդին: Հսկայական ճարտարարուեստական համալիր մըն էր, ուր երկայն միջանցքներ մուտք ու բարձր առաստաղներով սենեակներ կը տանէին, անծայրածիր լաբիրինթոսի վերածելով: Պարտիզանական կռիւի համար իտեալ կառոյց մըն էր, պաշտպանութեան դիրքերը ամրացնելու յարմարութիւններով, որեւէ յարձակողական ուժի համար հզօր ծուղակի վերածելով:

Անգէն յառաջապահ խումբի մը գլխուն եւ սպիտակ դրօշ պարզելով, գործարանին մէջ Չաւէն Տուրեան մօտեցաւ Մարտիրոս Շահինեանի հանրակառքերով կազմուած ափյափոյ շինուած պատնէշը, ուժեր միացնելու առաջարկով:

«Պատահում է, որ ձեզ պէս մարդիկն էլ, որ դաժան ու բիրտ մի իշխանութեան սերունդներով են ծառայել, կարող են հերոսանալ», ըսած էր Շահինեան, ընդունելով Տուրեանի աջակցելու առաջարկը: Փորձառու զօրավար էր եւ իր բանակի կարգին զինամթերք ալ բերած էր: «Կեանքում մի շիտակ ու մեծ բան են անում ու անմահանում պատմութեան էջերում... Ո՛վ գիտի ինչպիսի մարդ էր Հայկ Նահապետը կամ Վարդան Մամիկոնեանը, կամ Չօրավար Անդրանիկը, որ Երեւանը

անգամ ուզել է մմբակոծել» ըսաւ Շահինեան: «Դէ եկուր տես, որ նա մեր մեծագոյն հերոսներից է»:


Տուրեանի ուժերը կրցած էին փրկել խրամային հրասանդը կառավարական պալատի շրջափակումը ճեղքած պահուն: Այդ հրասանդի օգնութեամբ, դաւադիր նախարարներուն բանակի եւ ապստամբ բանուորներու միացեալ ուժերը կրցան մէկ շաբաթով պաշտպանել Օրջոնիկիձէ գործարանի հարաւային կողմը: Կառավարութեան գորամասերը Շահինեանի տրամվայներով եւ աստորուսներով կազմած պարիսպը ըսկիզբը հեգնական ոգիով «Մաժինոյի գիծ» կը կոչէին, բայց շաբաթ մը կատաղի պաշտպանութենէ ետք, յարգանքով սկսած էին «Մարտիրոսի գիծ» անուանել զայն:

Պատերազմական պարէնի սակաւութեան պատճառաւ, ըմբոստները քաշուեցան դէպի Խոպան: Իրենց վերջին դիրքը եղաւ Ակոբովի Տունը, երեք յարկանի ապարանք մը, ուր Տուրեան եւ Շահինեան, շուրջ քառասուն ըմբոստ զինուորներով եւ կամաւորներով միասին կառավարական բանակի յարձակումները զսպեցին երեք օր, մինչեւ որ Տուրեան, Վարդանեան անունով իր զինուորներէն մէկը եւ Օ. կրցան անցնիլ դէպի Զրասարի վանք եւ այնտեղէն Արտաշեսեան քարայրներ: Փախուստի ծրագիրը դրական աւարտի տանելու համար, սակայն, Տուրեան պէտք ունէր Ակսել Ագեանի օգնութեան, միակ Բերիաշէնի բնակիչը, որ արտաքին աշխարհէն եկած էր:

Բայց Ագեան կը գտնուէր կառավարութեան իշխանութեան տակ մնացած Բերիաշէնի բաժնին մէջ: Յատուկ գործողութիւններու համար մարզուած Տուրեանի զինուորներէն խմբակ մը յաջողեցաւ Մուրատեանական պաշտպանութեան գիծերէն ներթափանցել եւ Ագեանն ու իր կինը փոխադրել Ակոբովի Տուն: Տուրեանի մարդիկը Ագեանին տան մէջ գտան Արտաշեսեան քարայրներուն ուղեցոյցը՝ A Guide to King Artaxes Cave System:

Ագեան այլեւս չէր փափաքէր վերադառնալ արտաքին աշխարհ: Իր փախուստի փորձին ընթացքին, չորս տարի առաջ, ծծմբային թթուով արկածի հետեւանքով կուրցած էր եւ առանց Տիանայի տեղ չէր կրնար երթալ: Ծնողքն ալ մահացած էր եւ ընտանեկան կապեր չունէր որպէսզի զինք Միացեալ Նահանգներ փոխադրէին:

Տուրեան ուսումնասիրեց Արտաշեսեան քարայրներուն ուղեցոյցը: Կամացկամաց, յիշեց ցամաքային ականներուն գաղտնի քարտեսները, զորս Բերիաշէնի



առաջին օրերուն՝ 1940-ականներուն, իր մեծ հօր կողմէ դեկավարած ուժեր տեղադրած էին: Մանկութեան յաճախ այնտեղ կ'երթար զարմիկներուն հետ խաղալու, Հրասարի վանքի կողքին գտնուող ջրամբարին անմիջապէս ետեւի կողմը:

Ակորովի Տան մէջ, ապստամբները գտած էին Բերիաշենի պետական տպարանէն տուփ մը, լեցուն չբացուած գիրքերով՝ *Աւետարան ըստ Բենարլենի*, մոռցուած ձախողութիւն մը մարքսիստ-լենինիստ *Արդի Կոսակարան* մը գրելու, զոր հետապնդած էր նախորդ կառավարութիւնը: *Արդի Կոսակարան*՝ *Աւետարան ըստ Բենարլենի*, գրած էր Մարքսիստ-Լենինիստ Մատերալիստական Գիտութիւնների Ինստիտուտի փիլիսոփաներու եւ ֆիզիկոսներու խումբ մը, Պարգել Տիրատուրեանի գլխաւորութեամբ:

Այս գիրքերէն էջեր պատռելէ ետք, սոխի կեղեւներ եռացուցին ու կարմիր մելան պատրաստեցին, եւ ապա այդ էջերով ձեռագիր թռուցիկներ կազմեցին, ժողովուրդին դիմելով, որ միանար ապստամբներուն: Ստորեւ կ'ընդօրինակենք անոնց կոչը, որ միայն կրնայ պատրաստուած ըլլալ Ագեանի տուած տեղեկութիւններուն շնորհիւ, եւ հատուածներ *Աւետարան ըստ Բենարլենի*էն.

Բերիաշենի ժողովուրդը կես դարից ավելի ապրել է խավարում յեւ թշուառ պայմաններում դաժան բռնապետության տակ:

Բերիաշենի Ազատագրության Միացյալ Բանակը կոչ է անում մեր բոլոր հայրենակիցներին մեր մղած պայքարին միանալու:

Խորհրդային Միությունը փլուզվեց 1991 թվին:

Ստալինը մահացել է 1953 թ. մարտի 5-ին:

Բերիան գնդակահարվել է իբր դավաճան 1953 թ. դեկտեմբերի 23ին:

Հիրոշիմայի ու Նագասակու պայթուումներից հետո ոչ մի ուրիշ միջուկային ռմբակոծում տեղի չի ունեցել:

Հայ ժողովուրդը հսկա աղետ է անցկացրել 1915 թվին թուրքի ձեռքից վոր կոտորեց Արեւմտյան Հայաստանի վողջ բնակչությանը, որի զոհ գնացին մեկ ու կես միլիոն հայրենակիցներ Մեծ Եղեռնին:

Աշխարհի մեծ մասը այսօր ապատ է:

Կոմունիստական պետությունները կործանվել են:

Մեծ թվով տեխնիկական առաջադիմություններ նշել է մարդկությունը Մեծ Հայրենական Պատերազմից հետո:

Ազատություն: Ճշմարտություն: Արդարություն:

Բերիաշենցիք՝

Բերիաշենի Ազատագրության Միացյալ Բանակը այսօրվանից պայքարելու է մեր ժողովրդի ազատության համար: Մեր պայքարը միայն դադրեցրնելու ենք երբ տապալենք Իգոր Մուրատյանին եւ նրա բռնապետական կառավարությանն ու վերամիանանք Ազատ ու Անկախ Հայաստանին ու համայն աշխարհին:

Կեցցե՛ք Բերիաշենի Ազատ Ժողովուրդը

Կեցցե՛ք Հայաստան

*Կեցցե՛ն Հայ Ժողովուրդը
Բերիաշենի Ազատագրության Միացյալ Բանակ*

Բերիաշենի Ազատագրության Բանակը Բեմարյենի Աւետարանի թուղթերով կրկնագիրներ պատրաստեց, թուղթերը փշուր-փշուր ընելով, ջուրով խառնելով եւ խմորը թուղթին մէկ կողմը փռելով: Միւս կողին վրայ, կոչը ձեռագիր գրուեցաւ: Թերթին միւս կողմը տակաւին կը մնային տպուած Աւետարանին էջերը, զորս կ'ընդօրինակենք իրենց պատմագրական արժէքին համար: Ակոբովի Տան մէջ գտնուած օրինակները հաւանաբար ցրուած չէին, որովհետեւ մուրճ եւ մանգաղի զինանշանը հակառակ տպուած էր, վրիպումի հետեւանքով: Հաւանաբար այդ սխալին համար մեզի անծանօթ տպագրիչը շատ ծանր գին վճարեց, թերեւս նոյնիսկ իր կեանքով: Հակառակ տպուած մուրճ եւ մանգաղը, որ թռուցիկներուն ետեւի կողմի, կեղծ Աւետարանի իւրաքանչիւր էջին վրայ տպուած էր, ապստամբներուն անպաշտօն զինանշանը դարձաւ: Այդ ժամանակ, կարճատեւ փորձ մը եղած էր առաջին շրջանի Աբեղեանական խեղագրութիւնը վերահաստատելու, զոր Մուրատեան կասեցուցած էր երբ 1968ին իշխանութեան գլուխ անցած էր:

Միայն քանի մը տասնեակ թռուցիկ կրցան պատրաստել ու Շահինեանի փոքր զաւակը՝ ութը տարեկան Մելիքը, դրկեցին որ քաղաքին մէջ բաժներ, մուլթ գիշերին, շէնքերու դռներուն առջեւ ձգելով: Երեխան յաջողած էր ապահով կերպով ռազմական դիրքերը կտրել ու Ակոբովի Տունը վերադառնալ, ուր ապրստամբները յաջողեցան երեք օր դիմադրել թշնամիին, որ իր կենդանի ուժով եւ սպառազինութեամբ մեծ համեմատութեամբ կը գերազանցէր Բերիաշենի Ազատագրության Միացյալ Բանակը:

Ստորեւ կուտանք մեզի հասած հատուածներ «Աւետարան ըստ Բեմարյենի» էջերէն:

(Շար.2)

ՀՕՐԱՔՈՅՐԸ, ՈՐԻ ՔԻԹԸ ԿԾԵԼ- ՉԵՐ ՊՈԿԵԼ ԻՐ ՍԻՐԱԾԻ ԿԻՆԸ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

Հատուած Յիշատակարանը անտիպ վեպից

Ինչպէս ակնարկուեց, իմ պապ Ժորեսը որդուն իր հօր պատուին դրել էր Սամուէլ, չնայած որ իր եղբայրն արդէն ունէր Սամուէլ անունով տղայ:

«Թող սիրտը կրկնակի փառաւորուի», – ասել է պապս:

Մէկ տարի չանցած՝ պապս ու տատս էլի գաւակ են ունեցել, այս անգամ՝ աղջիկ, չնայած, աւելորդ է ասելը, որ կ'ուզէին՝ էլի տղայ լինէր նորածինը:

Բնական էր ենթադրել, որ նորածնի հայրը հիմա էլ մօր անունը կը դնէր աղջրկան, բայց պապը դիմել է պահանջելու պէս, որ էլի իր պատուին պէտք է անլանակոչել առաջին աղջիկ թոռանը:

Ու հօրաքրոջս անունը դրել են Սամուէլինա, որին կրճատ ասում էին, բնականաբար, Սամո...

Միայն հայրս երբեմն, երբ բարկանում էր վրան, նրան դիմում էր գերպաշտօնական «Սամուէլինա Ժորեսովնա»ով...

Դասական հայ հօրաքոյր ու դասական հայ կինարմատ չէր հօրքուր Սամոն՝ մեղրականաչագոյն աչքերով, առատ գանգուրներով, կտրուկ շարժուձեւերով այդ պուճուկ-մուճուկ կինը: Թխուածք չէր պատրաստում ու պահածոներ չէր փակում («գահլա չունենմ»), ոչ մէկի չէր համբուրում («ես կեանքումս ոչ մէկի պաչած չկամ»), եղբօր երեխէքին չէր փաղաքշում («ես ուծեու-մուծեու բաներ չեմ սիրում»), սիրուն շորերի յետեւից չէր ընկնում («ես շորի մեռած չեմ»), ծաղիկներ չէր սիրում («անպէտք բաներ են»)... Ու ամէն մեղքիս վրայ՝ միայնակ մայր էր: Շատ յետոյ ես իմացայ, որ քսան տարեկանում, երբ յատուկ լաւիկը չի եղել, բայց վատիկն էլ չի եղել, կապուել է իրենից երեսուն տարի մեծ մի ընտանիքատէր պաշտօնեայի հետ: Ասում են, որ երբ տատիկս նրան կշտամբել է ապօրինի կապի համար, հօրքուր Սամոն ասել է.

– Ձեր գո'րծը չի, կ'ուզեմ՝ մի տղամարդու տակից դուրս կը գամ, միւսի տակ կը մտնեմ...

Այդ խօսքի վրայ պապիկս մի շառաչուն թաթալոջ է տուել աղջկան, որը նոյն օրն իսկ թողել-հեռացել է իր նման այսպէս կոչուած ազատամիտ ընկերուհու մօտ (որն էլ, ըստ որոշ չար լեզուների, այդ պաշտօնեայի գործընկերոջ սիրուհին

Էր) ու տաս ամիս անց տուն է վերադարձել՝ նորածնուհին գրկին: Պաշտօնեան սկսել է սիրուհուն ու աղջկան հեռուից հեռու քիչումիչ տիրութիւն անել (ասել է թէ՛ քիչումիչ փող տայ), մինչեւ որ մի գեղեցիկ օր նրա կինը՝ դռքով, խոշոր ոսկոր, ժամանակին սպարտակիադայում սկաւառակ նետելու մրցոյթում արծաթե մետալի արժանացած կէս ռուս մի վագրուհի, փողոցում յարձակուել է Սամուէլինայի վրայ, տապալել գետնին, պոկել նրա գանգուրները ու անցորդների աչքի առաջ կծել-համարեա պոկել է քիթը: Բարեբախտաբար, հօրքուրի քիթը լրիւ չի պոկուել, բայց մազ է մնացել, որ հասած տանձի պէս ընկնի դեմքից՝ մի քանի վայրկեան աշուձախ տարուբերուելով: «Պաշտօնեան, որի սիրուհու քիթը կծել-չէր պոկել իր տան վագրուհին»: Յօրաքոյրը, որի քիթը կծել-չէր պոկել իր սիրածի կինը, ուշաթափուել է, բայց անցորդները շտապ «շտապ օգնութիւն» են կանչել: *Լեզենդն* ասում է, որ հիւանդանոցում հօրքուր Սամոյի տուտուզից մի քիչ դմակախառը միս են վերցրել ու դրանով կարկատել են մազից կախուած քիթը: Էդ պատճառով էլ նրա քթի ձախ կողմում նկատելի էր մի մեծ սպի, որը նա ողջ կեանքում ի գուր փորձում էր դիմափոշիով քօղարկել...

Ըստ *լեզենդի* շարունակութեան՝ յիսնամեայ պաշտօնեան բոլոր կապերը խրճել է քթագրկութեան շենին հասած իր ջահել սիրուհուց, քանի որ նրա դռքով վագրուհին քրեական պատասխանատուութիւնից կաշառքով ազատուելուց յետոյ ամուսնուն սպառնացել է կծել եւ այս անգամ պոկել վերջինիս պատասխանատու անդամը...

Յօրքուր Սամոն, գրկուելով ֆինանսական աջակցութիւնից, դստեր հետ մի քիչ հաշտուած պապիս միջնորդութեամբ աշխատանքի է անցել մի պրոֆտեխնոլոսումնարանում որպէս *լաբորանտ*, որտեղ հերթագրուել է բնակարան ստանալու, մի քանի տարուց ստացել է մի միսենեականոց ու կենտրոնի հայրական տընից մեծ *մուննաթներով* տեղափոխուել է Երեւանի ծայրամասերից մէկի մի նորակառոյց շէնք...

– Ես՝ Երեւանի կենտրոնում ծնուած-մեծացածս, պտի գնամ ինչ-որ չուերում ապրեմ, իսկ գիւղերից եկածները գան, հօրս տանը տիրուհի դառնամ,– մի քանի անգամ ասել էր Էստեղ-Էնտեղ:

Մօրս հասել էին Էս խօսքերը, բայց նա աւանդական հայ ընտանիքի սրբատուրք օջախը պաշտպանելու համար հազարերորդ անգամ լռել է: Այսինքն, որ խօսեր էլ՝ ինչ...

Շաբաթուայ եօթ օրից գոնէ հինգը հօրքուր Սամոն իր ներկայութեամբ պատուում էր հայրական օջախը, քանի որ աշխատավայրը (մեր բախտից) կպած էր մեր տանը: Գալիս էր ու ամեն անգամ ինչ-որ բաներ էր տանում: Մկան պէս ամեն անգամ մի բան կրելու նրա սովորութիւնը յատկապէս մեծացաւ պապ ու տատի մահից յետոյ, երբ գալիս էր ու յայտարարում, որ «մաման Էսինչ բանն ինձ էր տալու» կամ «պապան ասեց, որ իր մեռնելուց յետոյ Էսինչ բանն ինձ պտի մնայ»...

Յօրթուրի աղջիկը՝ Էլմիրան, նոյնպես դասական հայ հորաքրոջ աղջիկ ու դասական հայ կինարմատ չէր: Մեզ՝ իր զարմիկներին, վերելից էր նայում: Կեանքում հետներս մի խաղ չէր խաղացել: Ժամերով չաչանակում էր հեռախօսով: Տեղի-անտեղի ռուսերեն էր խօսում, չնայած ռուսական դպրոց չէր ավարտել: Չոռով-չառով ավարտեց բուժքոյրական ուսումնարանը, փորձեց բժշկական ընդունուել, բայց չներեցին ոչ իր գիտելիքները, ոչ հօրթուր Սամոյի ծանօթութիւններն ու բնականաբար՝ ֆինանսները: Հաշտուելով կամ չհաշտուելով իր կրթութեան հետ՝ Էլմիրան իր ողջ վրէժխնդրութիւնը թափեց հանրութեան սըրբանների վրայ՝ օրական տասնեակ քամակներ ծակծկելով ու այդպէս վաստակելով իր հաց հանապազօրեան:

– Բա իմ աղջիկը սաղ կեանքում բուժքոյր մնա՞յ, – ամեն անգամ մեզ հանդիպելով թնկթնկում էր հօրթուր Սամոն, կարծես մենք էինք մեղաւոր, որ ժամանակին կաշառք չէինք տուել ու նրան ընդունել բժշկական ինստիտուտ:

Մօրս խօսք չէր հասնում, հայրս էլ սովորաբար *տոն* չէր տալիս, բայց ի վերջոյ մի անգամ չդիմացաւ ու մի քիչ խիստ ասաց.

– Սամուէլինա, հերիք չի՞ բողոքես... Էմուլիկը կարծես դժգոհ չի իր կեանքից, չէ՞... Էդ էր ու Էդ: Յօրթուր Սամոն կարծես դրան էր սպասում:

– Դէ ի հարկէ, Սամուէլ, ձենդ տաք տեղից ա գալիս, քնոնք էրկուսն էլ բարձրագոյն ընդունուեցին կամ դուք ընդունել տուիք, չգիտեմ...

Դա հնչեց մարտահրաւերի նման: Մայրս արեց, ինչ որ միշտ էր անում՝ լռեց, իսկ հայրս դարձեալ *տոն* չտուեց:

Յօրթուր Սամոն այդպէս էլ չուզեց ընդունել, որ ես ու քոյրս մեր ուժերով ենք ընդունուել բարձրագոյն... Բայց երեւի մտքում ուրախ էր, որ իր աղջիկը աջուձախ սրսկումներ անելով շատ ակելի է վաստակում, քան ես ու քոյրս՝ մեր բարձրագոյն կրթութեամբ...

Էլմիրան իսկապէս դժգոհ չէր, որ բարձրագոյնաւարտ չի: Յօրթուր Սամոն երագում էր, որ նա գոնէ հարուստի հետ ամուսնանայ, մինչդեռ Էմուլիկը մօտենում էր երեսունին ու դեռ ոչ մէկի չէր հաւանում: Ի սարսափ հօրթուրի՝ Էմուլիկի ընտրութիւնը կանգ առաւ իրենից հինգ տարի մեծ, ոչ սիրուն, ոչ գէշ, մի շատ սովորական տղամարդու վրայ՝ աշխատավարձի յոյսին մնացած, իրենց պէս միսենեականոցում ապրող մէկի, որի հետ ծանօթացաւ աշխատանքի բերումով: Մի շաբաթ Էլմիրան ծակծկեց նրա տուտուզը, իսկ վերջին ծակոցից յետոյ ամուսնութեան առաջարկ ստացաւ: Առանց երկար-բարակ մտածելու՝ համաձայնուեց ու առանց հարսանիքային ձեւականութիւնների տեղափոխուեց նրա մօտ՝ ի մեծ դժգոհութիւն հօրթուրի, որը կեանքում երբեք չընդունեց փեսային, իսկ նրանց միակ տղային մի կերպ էր սիրում՝ համարելով, որ թոռը «հօր քթից է թռած» ու հօր պէս խնթոջ է...

Էլմիրայի հետ կապ առանձնապէս չկար, իսկ ամուսնութիւնից յետոյ առհասարակ չտեսանք: Մի անգամ պատահաբար քաղաքում տեսայ ամուսնու հետ,

հազիւ բարեւեց ու ամուսնու հետ էլ չծանօթացրեց: Դրանից ես ոչ մի կաթիլ չտառապեցի, ինձ հարիւր տարի պետք է՝...

Յիսուն տարեկանում հօրքուր Սամոն ընկաւ խոր ընկճախտի մէջ: Գալիս էր մեր տան մի անկիւնում նստում, սիգարետը վառում (երկարամեայ ծխող էր) ու նընուոցը դնում.

– Փո՛ւչ աշխարհ... փո՛ւչ... ես իմ սեփական հօր տնից մի բաժին չունեմ...

Ծնողներս, ինչպէս միշտ, ընթացք չէին տալիս, բայց մի օր էլի հօրս նետարդերը չդիմացան.

– Սամուէլինա ժորեսովնա,– վճռական սկսեց նա,– դէ հերի՛ք դողո՞ւս, *կոնկրետ* ասա՝ ուզածդ ի՞նչ ա...

Վերջապէս հասաւ հօրքուրի ուզած պահը: Նա սիգարետը նետարդային շարժումով ճմռթեց մոխրամանի մէջ, ոտքի ելաւ ու ասաց.

– Ուզածս էն ա, որ էս տունը ծախես, իմ փայը ի՛նձ տաս,– ու յաղթական նայեց հօրս:

– Հա բա՞,– հեզնեց հայրս,– քեզ քո մի սենեակը հերիք չի՞...

– Ես յոգնել եմ աշխատելուց,– յայտարարեց հօրքուրը,– ես ուզում եմ ունենալ մի հատ էլ միսենեականոց բնակարան, որը վարձով կը տամ ու դրանով կ'ապրեմ...

– So լաւ է՞, էս ի՛նչ խելօքն ես,– հեզնանքը շարունակեց հայրս,– ախր գոնէ տղայ ունենայիր ամուսնացնելու ու ուզէիր նրա համար մի սենեակ առնես, էլի կը հասկանայի...

– Էդ արդէն ոչ մէկի գործը չի, թէ ես ինչ կ'անեմ... օրէնքով ինձ էս բնակարանից փայ ա հասնում, ես կարող եմ դատարանով ստանալ, եթէ դուք ձեր յօժար կամքով ձեր բաժինը չտաք, Էդա՛ւ...

– Կը տա՛նք, կը տա՛նք...

Այս անգամ բացականչողը մայրս էր: Հօրքուրն ու հայրս զարմացած շուռ եկան նրա կողմը: Առաջին անգամ մայրս խառնուեց քոյր ու եղբօր վեճին:

– Իսկ քեզ իսկի խօսք էլ չի հասնում,– գոչեց հօրքուր Սամոն:

– Եթէ օրէնքից ես խօսում, իմացած էղի, որ հենց Թամարին էլ խօսք հասնում ա, քանի որ նա էլ ա էս տանը գրանցուած,– նրանից բարձր բղաւեց հայրս, ու ես ինձ լաւ զգացի, քանի որ կեանքումս առաջին անգամ լսեցի, որ պապան պաշտպանեց մօրս:

– Բայց նա ժամանգական իրաւունք չունի, իսկ ես ունե՛մ,– Է՛լ աւելի բարձր գոռաց հօրքուր Սամոն:

Մայրս չդիմացաւ բարձր ձայներին ու սենեակից դուրս եկաւ: Ես հետեւեցի նրան ու խոհանոցում սրտի կաթիլներ տուեցի: Ժորեսովնան ու ժորեսովիչը մի քիչ էր *չախա* տուեցին, մինչեւ որ հօրքուրը գնաց՝ արտասուլաթոր աչքերով ու դուռն ամուր շրիկացնելով:

Թւում էր, թէ մի քանի օր չի գայ: Բայց յաջորդ օրն իսկ եկաւ: Ու փոխեց ռազմավարութիւնը. ձայնը չէր բարձրացնում, բայց ժամերով ընկճուած տեսքով կուչ

Էր գալիս աթոռին, հրաժարվում էր գրուցել, ուտել կամ խմել, բողոքում էր, որ ճնշումը բարձր է ու բքում էր ու բքում՝ ասես նպատակ էր դրել մեզ խեղդել իր ծխում... Մի քանի անգամ էլ «շտապ օգնություն» կանչել տուեց՝ չվստահելով մօրս ճնշման գործիքին ու իր դեղերին...

– Դուք ինձ սպանելու էք,– ամեն անգամ ասում էր նա՝ «ուշքի գալուց» յետոյ:

Մի անգամ պատահաբար լսեցի, թե ինչպես է մայրս համոզում հօրս՝ ծախել մեր բնակարանը:

– Սա՛ն ջան, երեւի թե լաւն էլ դա կլինի, կը պրծնենք... Մեզ պետք ա՛ կենտրոնում էսքան մեծ բնակարանում ապրելը: Մի հատ միսենեականոց առնենք Սամուէլինայի համար, մի հատ էլ երկու սենեակ կենտրոնից հեռու՝ մեր չորսի համար: Ժանուկիկը կ'ամուսնանայ-կը գնայ, տունը կը մնայ Ժորեսին...

– Վերջը եղպես էլ անելու ենք,– հոգոց հանեց հայրս:

Ես տխրեցի: Քսան տարեկան էի, աչքս բացել էի եղ թաղամասում, չէի ուզի տեղափոխուել ինչ-որ անկապ տեղ: Բայց ինձ խօսք հասնում էր...

Եղաւ հօրքուր Սամոյի ուզածի պես: Մէկ տարուայ քաշքշուքից յետոյ մենք երկսենեականոց մի բնակարան առանք Երեւանի նորակառոյց թաղամասերից մէկում, որն ամէն ինչով զիջում էր նախկինին, իսկ հօրքուր Սամոյի համար հայրս բնակարան գտաւ քաղաքի հակառակ ծայրին գտնուող մի թաղամասում: Զօրքուրն, ինչ խօսք, դժգոհ մնաց, քանի որ եղ թաղամասից նա մեծ օգուտ չպիտի ունենար, բայց եւ հասկանում էր, որ եղած փողին Էդքան էլ հազիւ հասներ: Նա նոր բնակարանը մի քիչ վերանորոգեց ու վարձով տուեց, աշխատանքից էլ դուրս եկաւ, պուպուկի պէս նստեց իր տանը ու արդէն մօտ քսան տարի է, ինչ այդպէս է ապրում՝ չաշխատելով, միւս բնակարանի վարձի հաշուին...

Նրա խորը ընկճախտն անցաւ, նա հասաւ իր *մուրապին*, բայց մենք չհասանք մեր մուրագին: Զայրս խզեց նրա հետ ամէն կապ ու մեզ էլ արգելեց զանգել կամ այցելել նրան: Նոյնիսկ նրան չյայտնեց մեր նոր բնակարանի հասցէն, որ չլինի մի օր վեր կենայ, գայ՝ յիշելով ուրիշ իրեր, որոնք իբրեւ թէ իրեն են կտակել... Ընդհանուր ազգականներ էլ գրեթէ չկային, որոնցից նա կարող էր իմանալ մեր հասցէն... Բայց ինքն էլ չէր գժուում այդ կապի բացակայութիւնից:

Զօրքուր Սամոյի *մուրապն* արդե՛ծք հարազատներից կտրուելն էր:

Քանի որ նա ապրում էր մի ծայրամասում, որտեղ մենք չէինք լինում, անցած տասնհինգ տարիների ընթացքում չտեսանք նրան, բայց մի անգամ նրա մասին լսեցի, մի անգամ էլ պատահաբար հանդիպեցի:

Այդ մի անգամ լսելը եղաւ մի հաւաքոյթի ժամանակ, որին ներկայ էր մի երիտասարդ բժիշկ: Պարզուեց՝ «շտապ օգնությունում» է աշխատում: Ինչպէս առհասարակ բժիշկները, նա էլ ամենայն *հաւէտով* պատմում էր իր մասնագիտական կեանքի ծիծաղելի ու յիշարժան դէպքերից: Ու սկսեց պատմել Սամուէլինա անունով մի կնոջ մասին, որը յաճախակի ահաբեկչութեան է ենթարկում իրենց: Անուան հազուադիւտ լինելու եւ ահաբեկչութեան պահով ես հասկացայ, որ

խօսքը հօրքուր Սամոյի մասին է: Երբ հարցրի տարիքն ու բնական թաղամասը՝ արդեն համոզուեցի, որ նա է...

– Էդ Սամուէլինայի ճնշումը հենց բարձրանում է՝ անմիջապէս «շտապ» է կանչում,– Շիրակի խօսուածքով պատմում էր բժիշկը: – Ասա՛ ա՛յ կնիկ, դեղերդ խմի՛, տեղդ վե՛ր ընկի, որ մենք գալիս ենք՝ ի՞նչ... Գալիս ենք, կողքը նստում ենք, սկսում է ծխել ու իրա սաղ կեանքը պատմել, որ մենակ է մնացել, միակ աղջկանից է մի գլուխ բողոքում... Հաշուել ենք, մի տարի 270-ից ավել անգամ կանչ է տուել, պետութեանը մի միլիոն դրամից ավել վնաս է տուել խելառ անտէրը...

Աւելորդ է ասել, որ ես չբարձրաձայնեցի, որ այդ խելառ անտէրը հարազատ հորաքոյրս է...

Իսկ միակ հանդիպումը եղաւ կենտրոնում, զբօսայգում: Առաջին պահ չճանաչեցի. մեր հայեացքները հանդիպեցին, չհասցրի փախցնել:

– Ժորե՛ս, էս դու ե՛ս...

Որքան էլ զարմանալի է՝ կանչեց մօտը:

– Հը ա՛րի մի հատ...

Նստած էր զբօսայգու նստարանին: Արդէն եօթանասուն տարեկան պիտի լինէր, բայց շատ մեծ էր երեւում: Աչքերի մեղրականաչագոյն փայլը խամրել էր, մազերը ներկուած չէին, հազի շորերը թարմ չէին... Յիշեցի տատի խօսքերից մէկը՝ «Ա՛հ տարին ինչ էր, որ մա՛հ տարին ինչ լինի»...

Մի քիչ շփոթուած մօտեցայ նրան, բայց գրկելու ցանկութիւն չունէինք ո՛չ ես, ո՛չ նա:

– Վռագ ե՛ս... նստի՛...

– Եիշտն ասած՝ վռագ եմ...– ստեցի ես ու մնացի կանգնած:

Նա չհետաքրքրուեց, թե ո՛ր եմ վռագում, չասաց, թե ինչքան եմ մեծացել, ի՛նչ հասուն ողամարդ եմ այժմ, չհետաքրքրուեց՝ ամուսնացա՞ծ եմ, քանի՛ երեխայ ունենմ... փոխարէնը իրեն բնորոշ *մու՛ննայթ* տոնով հարցրեց.

– Մի հատ ասա՛ ո՛վ ա սաղ, ո՛վ՝ մեռած...

– Բոլորս էլ սաղ ենք,– ասացի՝ իր հարցման ձեւից վրդովուած: Մի քիչ թարախ լինէի, կ'ասէի՝ ինչի՞ պիտի մեզնից մէկը մեռած լինի, հէջ որ չլինի՝ բոլորն էլ քեզնից տարիքով փոքր են... բայց չասացի:

Պատասխանս իրեն չգոհացրեց: Կամ, ավելի ճիշդ, սպասում էր, որ ես էլ պիտի հարցնէի, թե՛ բա դո՛ւ ոնց ես... բայց քանի որ չհարցրի, նա ինքն աչքերիս մէջ նայելով՝ նոյն *մու՛ննայթ*ով ասաց.

– Դուռս բացող չկայ...

«Բայց ո՛վ ա մեղաւոր»,– մտածեցի, իսկ բարձրաձայն ասացի.

– Բա էլմիրայե՞նք...

– Գնացին Ռուսաստան... տարին մէկ էլ չի զանգում, հարցնի՛ ո՞նց ես... Իրանց տունն էլ վարձով են տուել, վարձը ես եմ ստանում, կարծում են՝ Էդքանով իրանց պարտքը կատարել են...

Ահա, հիմա արդեն երկու բնակարանի վարձ է ստանում, պիտի որ նիւթական խնդիր չունենայ... բայց էդ դէպքում հագի շորերն ինչի՞ են էսքան հնոտ...

– Հարեւաններս էլ՝ մէկը մէկից անկապ...

Յօրքուր Սամոն խօսելու կարիք ունի: Բայց ես մի գրամ էլ չեմ ուզում խօսել նրա հետ: Նա արդեն չափից շատ է հեռացել ինձնից: Ես իրականում չեմ էլ ճանաչում սպիտակած մազերով, սմբած դիմագծերով, քիթը մեծ սպիով շրջանակած էս կնոջը, միայն ձայնի *մու՛ննաթ*ն է մատնում, որ սա մի ժամանակուայ հօրքուր Սամոն է, որը ո՛չ մեզ էր սիրում, ո՛չ էլ մենք էինք իրեն սիրում...

– Ես պիտի գնամ, սպասում են,– ասացի: – Յա՛ջող, լա՛ւ մնա...

– Ձերոնց կը բարեւես,– ձայնեց յետեւիցս:

Երեւի ուզում էր հաշտուել, եթէ մնայի՝ հաստատ կ'ուզէր մեր հեռախօսահամարը կամ կը տար իրենը: Բայց չուզեցի ընթացք տալ: Մոռանամ, թէ ոնց նրա պատճառով գրկուեցինք կենտրոնի մեր բնակարանից, մեր թաղից, ինչ դժուարութեամբ համակերպուեցինք մեզ էնքան խորթ նոր միջավայրին, ամեն օր տըրանսպորտով գնալ-գալուն... մոռանամ, թէ ոնց բանի տեղ չէր դնում մօրս, համարեա ամեն օր փչացնում էր մերոնց տրամադրութիւնը... Արածս երեւի խոզութիւն էր, միզուցէ կեանքում էլ չհանդիպեմ նրան, բայց դէ ես էլ յիշաչար եմ, չէ՞...

մերօրեայ «հայր եւ հայր»

ՌՈՒԲԷՆ ԽԱԺԱԿ

«կ'ուզէի տեսնել այս աշխարհի վրայ որեւէ ուժ,
որ բնաջնջէ այս ցեղը,
անկարելոր մարդոց այս փոքր ցեղախումբը»
որուն պատմութիւնը վերջ պիտի գտնէ իր իսկ ձեռքով,
պատերազմները՝ բարոյականով բաւարարուած,
կառոյցները՝ դառնացած,
գրականութիւնը՝ աղաւաղուած,
երաժշտութիւնը՝ օտարացած,
աղօթքները՝ թատրոն դարձած:
«դեհ, համարձակեցէք կործանել այս ցեղը»:
չէ որ մեզի համար միշտ 1915 է,
պատերազմը՝ չաւարտած,
դեռ կործանման մէջ է Հայաստանը:
«տեսէք թէ կրնաք»:
չէ որ աքսորուեցանք մեր տուներէն դէպի անապատ,
չէ որ մնացինք առանց հացի եւ ջուրի,
չէ որ այրեցին մեր տուններն ու եկեղեցիները:
«պայքար» կոչելով արդեօք վերածնամբ.
կրկին շինդացինք... տակաւին կու լանք:
այո՛ր, հարկան ցեղը կրկին ապրեցաւ երբ բոլորս հանդիպեցանք՝
գարեջրատան մէջ
(այս անգամ՝ Հայաստան)
եւ խնդացինք ու չխօսեցանք մեր լեզուով

ու մեր ստամոքսներով եղանք լաւ հայրենասէրներ:

«տեսէք թէ բան մը կրնաք ընել»:

արդէն ըրինք

ու միշտ կ'ընենք,

որովհետեւ մենք ենք շան լակոտները,

որոնք աշխարհի մեծ գաղափարները ծաղրելու տեղ,

կատակը դարձած ենք աշխարհի:

«փորձեցէք կործանել զանոնք...»

մի մտահոգուիր, պարոն սարոյեան,

ընթացքի մէջ է.

(մեր իսկ ձեռքով...)

Թորոնթօ

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ, ԿՈՍՏԱՆ ՉԱՐԵԱՆ ԵՒ ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Մեծավաստակ գրական քննադատ, բանասեր ու հանրային գործիչ Նիկոլ Աղբալեանի (1875-1947) կեանքի վերջին քառորդ դարը բնորոշելով, Գառնիկ Բանեան՝ անոր մահուան առիթով շարադրած կեանքի ու գործի ուրուագիծին մեջ կը հաստատեր, թե «Սփիւռքի մեջ Ն. Աղբալեանի մտաւորական կեանքը կը հոսի՝ գրական ստեղծագործութեամբ, հանրային եւ մանկավարժական գործունէութեամբ»¹: Միայն առաջնորդուելով այդ տարիներու գործունէութեան եւ արտադրութեան՝ Բանեանի տուած աւելի քան երկու էջ ամփոփումով, կարելի է ուղղում մը մուծել այդ նախադասութեան մեջ, ըսելու համար, թէ Աղբալեանի մտաւորական կեանքը ո՛չ միայն հոսած է, այլ *յորդա* է զանազան ուղղութիւններով՝ բանասիրութենէն ու լեզուաբանութենէն մինչեւ գրական-քննադատական ու քաղաքական վերլուծումը:

Աղբալեան ընդարձակօրէն աշխատակցած է Սփիւռքի հայագիտական, գրական ու ընթացիկ մամուլին, չզլանալով նոր հրատարակութիւններու իր մասնակցութիւնը: Գրեթէ զուգադիպութեամբ, 1945ին այդ նպատակով անոր դիմած են աւագ եւ երիտասարդ սերունդներէն երկու դէմքեր՝ Կոստան Չարեան (1885-1969) եւ Սիմոն Սիմոնեան (1914-1986):

1945ին, Կոստան Չարեան ստանձնած էր Յ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ Նիւ Եորքի մեջ նախորդ տարուան վերջերուն հիմնուած Հայ Դատի Յանձնախումբի (Armenian National Committee) գործավարութիւնը², զոր պիտի վարէր մինչեւ Եւրոպա մեկնումը՝ 1947ին: Յանձնախումբի նախաձեռնութեամբ նոյն տարին հիմնուած Ամերիկա-Հայկական Մշակութային Ընկերակցութիւնը (American-Armenian Cultural Association), որուն հիմնադիր անդամներէն մէկը, ինչպէս եւ ատենադպիրը Չարեանն էր, իր մշակութային գործունէութեան ծիրին մեջ որոշած է հրատարակել եռամսեայ պարբերական մը՝ *Armenian Quarterly*,

¹ Գառնիկ Բանեան, «Նիկոլ Աղբալեան (1873-1947) (ուրուագծեր կեանքի եւ գործի մասին)», *Այլու*, ԻԱ-ԻԲ., 1947, էջ 120:

² Armenian National Committee-ն կազմալուծուած է 1940ական թուականներու վերջերուն: 1950-ականներուն զայն փոխարինող American Committee for the Independence of Armenia-ն (Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Յանձնախումբ) իր անունը փոխ առած է երբեմնի համանուն կազմակերպութենէն, զոր առաջին անկախութեան շրջանին հիմնած ու գլխավորած էր Վահան Գարտաշեանը (1882-1934): 1965ին վերանուանուած է, դառնալով այժմու Armenian National Committee of America-ն (հայերէն՝ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ):

որ պիտի հանդիսանար անգլերեն լեզուով առաջին հայագիտական պարբերաթերթը: Յրատարակութիւնը ձգձգուած է եւ վերջապէս հանդէսին առաջին թիւը՝ Չարեանի խմբագրութեամբ, լոյս տեսած է 1946ի գարնան: Երկրորդ թիւը լոյս տեսած է նոյն տարուան ամրան, որմէ ետք *Armenian Quarterly*ն դադրած է³: Չարեան աշխատակցութեան հրաւերներ յղած է բազմաթիւ օտար եւ հայ հայագետներու, ինչպէս եւ արեւելագիտական նիւթերով զբաղող մասնագետներու: Յրատարակութիւնը հիմնականին անգլերեն պիտի ըլլար (թէեւ նաեւ լոյս տեսած են ֆրանսերէն նիւթեր), սակայն, պէտք է ենթադրել, որ այլ լեզուներով աշխատակիցներու գործերը պիտի թարգմանուէին: Այդ ծիրին մէջ պէտք է գետնդել Աղբալեանին ուղղուած դիմումը, որուն ետին թերեւս նաեւ պէտք է տեսնել Յայ Դատի Յանձնախումբի մոլիչ ուժերէն մէկուն՝ Սիմոն Վրացեանի յանձնարարականը:

Աղբալեանի պատասխանը յայտնի չէ: Անունը նշուած չէ ապագայ աշխատակիցներու ցանկին մէջ⁴: Եթէ պատասխան մը գրած է, թերեւս մնացած ըլլայ Չարեանի անձնական արխիւին մէջ, որ վերջերս յանձնուած է Մաշտոցի անուան Մատենադարանին եւ մշակման ընթացքի մէջ կը գտնուի:

Սիմոն Սիմոնեանի նամակի պարագային, աւելի հանգամանայից տեղեկութիւններ ունինք, քանի որ անոր դիմումը ստուգապէս դրական պատասխանի արժանացած է: 1935ին Անթիլիասի դպրեվանքէն շրջանաւարտ ըլլալէ ետք, *Սիփիւսքի* ապագայ հիմնադիրը նոյն տարին վերադարձած էր Յալէպ, ուր 1935-1946ին ուսուցչական պաշտօններ վարած է «Յայկագեան» եւ «Կիւլպէնկեան» ազգային վարժարաններուն մէջ: Միաժամանակ, հիմնադիր անդամներէն ու մոլիչ ուժերէն եղած է Յալէպահայ Ուսուցչական Միութեան, որ 1944ին ձեռք բերած էր իր սեփական տպագրական մեքենան եւ կ'առաջադրէր, ի շարս այլ հրատարակչական նպատակներու, «կանոնաւոր պարբերականութեամբ հրատարակել ուսումնասիրական եւ գեղարուեստասիրական բովանդակութեամբ տարեգիրք մը, ուր քով-քովի գան հայ Գիրին հին ու նոր աշխատաւորները»⁵: Ընկերութեան յառաջացուցած Յրատարակչական Մարմինը տարի մը յատկացուցած է «տպարանի մը ամբողջական կազմաւորումը, մանաւանդ այլազան տառերու փնտռտուքով» ապահովելու համար, եւ արդէն Սեպտեմբեր 1945ին վճռած էր, ինչպէս պիտի տեսնենք Աղբալեանին ուղղուած նամակին մէջ, որ անոր ծրագրած հրատարակութիւնը իր «յապաղումին մեղքը քաւելու համար» պիտի խոստանար «փոխանակ տարին անգամ մը հրապարակ գալու, երեք ամիսը անգամ մը երե-

³ *Armenian Quarterly*ի հրատարակութեան եւ Չարեանի դերակատարութեան մասին, տես Վարդան Մատթէոսեան, «Կոստան Չարեանի շուրջ», Անթիլիաս, 1998, էջ 401-427: Վերամշակուած անգլերէն տարբերակին համար, տես Vartan Matiossian, “The Beginnings of Armenian Studies in the United States”, *The Armenian Quarterly*; in Barlow Der Mugrdachian, “Between Paris and Fresno”, *Armenian Studies in Honor of Dickran Kouymjian*, Costa Mesa (California), 2008, էջ 617-642:

⁴ Տե՛ս “Announcements,” *Armenian Quarterly*, Spring 1946, ետեւի կողքի ներսի կողմ:

⁵ «Յալէպի Ուսուցչ. Միութեան առաջադրութիւնները», *Արշարար*, 26 Օգոստոս 1944:

ւիլ»⁶: 1946ի սկիզբը լոյս տեսած է *Սեւան* գրականության եւ արուեստի եռամսեայ պարբերագիրքը⁷: Ան ալ միայն երկու թիւ լոյս տեսած է՝ Սիմոնեանի խմբագրութեամբ: Արդարեւ, տպարանն ու հրատարակչականը իրենց գործունէութիւնը շարունակած են մինչեւ 1946ի ամառը, երբ Սիմոնեանի Անթիլիաս փոխադրութիւնը՝ իբրեւ դպրեվանքի դասատու եւ Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր Գարեգին Ա. կաթողիկոսի գիտական քարտուղար, պատճառ կը դառնայ անոնց դադրեցումին⁸:

Պարբերագիրքի խմբագրական աշխատանքներուն ընթացքին, Սիմոնեան դիմած էր բազմաթիւ գրողներու եւ մտաւորականներու՝ անոնց աշխատակցութիւնը ապահովելու համար: Անոնց շարքին էր Նիկոլ Աղբալեանը, որ առաջին թիւին տրամադրած է կարճ, սակայն հետաքրքրական ուսումնասիրութիւն մը Գրիգոր Նարեկացիի եւ Կորիւնի գրական աղբյուրներուն շուրջ⁹: Ուսումնասիրութեան տակ, լոյս տեսած է Աղբալեանի պատասխանը՝ որոշ յապաւումով¹⁰:

Ստորեւ կը հրատարակենք Կ. Չարեանի եւ Ս. Սիմոնեանի նամակները (Յամագգայինի արխիւ, Մելանքթոն եւ Յայկ Արսլանեան ճեմարան, Պէյրութ), ինչպէս եւ Նիկոլ Աղբալեանի՝ Ս. Սիմոնեանին ուղղուած պատասխանը, եւ վերոյիշեալ յօդուածի ձեռագրէն նմոյշ մը՝ Սիմոնեանի նշումով (Սիմոն Սիմոնեանի արխիւ, Պէյրութ):

Այս առիթով, շնորհակալութիւն կը յայտնենք թէ՛ Յամագգայինի Կեդր. Վարչութեան եւ թէ՛ Սիմոն Սիմոնեանի ընտանիքին՝ այս յօդուածին հիմք կազմող նիւթերը մեզի մատչելի դարձնելուն համար:

⁶ «Մուտք», *Սեւան*, թիւ Ա., 1946, էջ 1:

⁷ Տե՛ս «Ստացանք», *Աղբալար*, 12 Յունուար 1946: Յետաքրքրական է նշել, որ *Սեւան*ի լոյս ընծալումը ընդգրկուած է միութեան վարչութեան 1944-1945ի հրատարակչական գործունէութեան մէջ («Յայլեպահայ Ուսուցչ. Միութիւնը կը զեկուցէ 1944-1945ի գործունէութեան շուրջ», *Աղբալար*, 2 Փետրուար 1946):

⁸ Տե՛ս Ժիրայր Դանիելեան, *Բանասիրութեան բախողներուն մէջ*, Երեւան, 2011, էջ 474-475:

⁹ Ն. Աղբալեան, «Գրիգոր Նարեկացիի եւ Կորիւն», *Սեւան*, թիւ Ա., 1946, էջ 75-77: Յօդուածը վերատպուած է Աղբալեանի երկերու չորրորդ հատորին մէջ, իբրեւ յաւելուած (Նիկոլ Աղբալեան, *Ամբողջական երկեր*, հատոր Դ., Պէյրութ, 1970, էջ 496-498):

¹⁰ Այս նամակին հետքը չկայ Աղբալեանի նամակներու հատորին մէջ (Նիկոլ Աղբալեան, *Նամակներ. պաշտօնական գրութիւններ*, կազմեց, ծանօթագրեց եւ առաջաբանը հեղինակեց՝ Գառնիկ Անանեան, Երեւան, 2003):

22-VII-45
11 West 42nd St.
Room 326
New York.

Madame M. Vertmanian,

Stamenian, est un homme d'Etat -
militaire, un homme de guerre, et par conséquent
son rôle est de défendre son pays. C'est son devoir
national. C'est pourquoi il a été nommé à la tête de
l'armée arménienne. Il a été élu par le peuple et
il a le droit de gouverner. Il a le droit de
prendre les décisions qui sont nécessaires pour
la défense de son pays. Il a le droit de
faire ce qu'il croit bon pour son pays.
Il a le droit de gouverner.

avec respect:

Yves Vertmanian

Imprimerie et Maison d'Édition
DE L'UNION DES INSTITUTEURS
ARMÉNIENS D'ALEP
B. P. 285
Alep (Syrie)

مطبعة و دار نشر
اتحاد المعلمين الأرمن - حلب
D B D E
مقرها في شارع الجمهورية، حلب
الهاتف رقم 285

Halep, 22 Aout 1945

Mme M. Vertmanian,

Cher Monsieur, j'ai l'honneur de vous adresser
par la présente le journal "L'Union des Instituteurs
Arméniens" que vous avez demandé. Ce journal
est publié par l'Union des Instituteurs Arméniens
d'Alep. Il contient des articles sur l'éducation
et sur les intérêts de nos compatriotes.
Je vous prie d'agréer, Monsieur, l'assurance
de ma haute estime et de mon respectueux
salut.

Je vous prie d'agréer:

Respectueusement
Yves Vertmanian

Ա.

22-VIII-45¹¹
 11 West 42th Street
 Room 326
 New York

Յարգելի Պ. Աղբալեան,

Ձեռնարկել ենք այստեղ հրատարակելու անգլերեն լեզուով, մի երեքամսեայ հանդես¹² նւիրւած հայ մշակոյթին. նման ժամանակին Պարիսում հրատարակւող «La Revue des Etudes armeniens»-ին¹³: Շատ պիտի ուզէի որ դուք էլ աշխատակցէք մեր այս հանդեսին: «Սասունցի Դաւիթը» օրինակի համար եւրոպացիների կողմից ծանօթ չէ եւ ի՛նչ լաւ կ[ը] լինէր, եթէ դուք խտացած կերպով այդ մեր ազգային պօեմը ներկայացնէիք նրանց:

Ձեր աշխատակցութիւնը անշուշտ պիտի վճարւի:

Պիտի խնդրէի որ ձեր գրւածքը հասցնէիք ինչքան կարելի է շուտ, որպէս զի հասնի առաջի թուին, որ լոյս պիտի տեսնի ամենաուշը մի երկու ամսից¹⁴:

Սպասելով ձեր պատասխանին
 մնամ յարգանօք
Կ. ՉԱՐԵԱՆ

Բ.¹⁵

Հալէպ, 22 Սեպտեմբեր 1945

Սիրելի Պրն. Ն. Աղբալեան,

Հալէպահայ Ուսուցչական Միութեան Հրատարակչական Մարմինը իր յառաջադրած *Սեւան* եռամսեայ պարբերականը յանձնած է մամուլի: Գրական եւ բանասիրական լուրջ ձեռնարկ մըն է: Արդէն կ'եսը տպուած է: Ձեր մասնակ-

¹¹ Նոյն օրը, Կոստան Չարեան նաեւ գրած է Արշակ Չօպանեանին՝ իր աշխատակցութիւնը խնդրելու: Նամակը, սակայն, պատռուած է եւ կարելի չէ լրիւ վերականգնել (տե՛ս Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Արշակ Չօպանեանի ֆոնտ, I բաժին, թ. 2165):

¹² Կ'ականարկէ *Armenian Quarterly*ին:

¹³ *Revue des études arméniens* հայագիտական հանդէսը լոյս տեսած է Փարիզ, 1920-1933ին: Վերահրատարակուած է 1964ին եւ մինչեւ օրս լոյս կը տեսնէ:

¹⁴ Հոկտեմբերին մամուլի մէջ լոյս տեսած թղթակցութիւն մը կը յայտնէր, թէ հանդէսին առաջին թիւը պատրաստութեան մէջ էր եւ լոյս պիտի տեսնէր դեկտեմբերին (Տեղեկատու, «Ամերիկա-Հայկական Մշակութային Ընկերակցութիւն», *Հայաստանի Կոչակ*, 27 հոկտեմբեր 1945, էջ 1026):

¹⁵ Նամակը գրուած է Սեւան տպարանի եւ հրատարակչական մարմնի նամակաթուղթին վրայ:

ցութիւնը անհրաժեշտ է: Ատոր համար է որ թերեւս *հինգերորդ* անգամ ըլլալով կը դիմենք Ձեզի¹⁶: Եւ դուք Սայեաթ Նովայի «գոգալ»ին նման անգուլք էք եւ լուռ:

Կը մաղթենք Ձեզի առողջութիւն, եռանդ եւ արեւշատութիւն որպէսզի Ձեր պրպտումներէն մեզի ալ բաժին հանէք:

Կը սպասենք անհամբեր:

Յարգանքով՝
Ձերդ
Ս. ՍԻՄՈՆԵԱՆ

Գ.

1945, Յոկտ. 24
Պէյրուք

Յարգելի բարեկամ Ս. Սիմոնեան,

Ահաւասիկ իմ պրպտումներից մի բաժին *Սեւան*ին, եթէ հաւանք եւ գոհանաք: Անհնարին է ինձ համար տեւապէս աշխատել, շնչատութիւն եկած է վրաս, իսկ նախ քան այդ արեան խուժում ունէի դէպի գլուխս¹⁷: Մի կարծէք, թէ կամքն է, որ պակասում է ինձ. հնար չունեմ աշխատելու: Մեծ բան չէ գրածս, բայց «մի բան» է կարծում եմ: Այս մասին պիտի խօսէի բանասերների այն հաւաքոյթներից մեկի մէջ, որին ձեռնարկած է Յ. Մարեան¹⁸, բայց *Սեւան*ին բաժին ընկաւ¹⁹: Յոյս ունեմ թէ այս փոքրիկ վաստակով պիտի ազատուեմ կշտամբանքից եւ պիտի համոզեմ բարեկամներիս թէ երբ կարենամ, չեմ մերժի նրանց հրաւերին պատասխանելու: Յաջողութիւն:

Սիրով՝ **Ն. ԱՂԲԱԼԵԱՆ**

¹⁶ Աղբալեանի արխիւին մէջ այդ նախընթաց դիմումներէն որեւէ հետք չկայ:

¹⁷ Գ. Բանեան գրած է. «Որքան ալ բեղուն, սակայն եւ այնպէս, իր կեանքին վերջին տասը տարիները Ն. Աղբալեան ապրած է վատառողջ վիճակ մը: Աւելի քան տասը տարի արնախոնու մը լուրջ մտահոգութիւն կը պատճառէ իրեն եւ մինչեւ մահ անկէ ազատուիլ չի կրնար. աւելի ուշ՝ շնչատութիւն մը՝ ա՛լ աւելի մտահոգիչ կը դարձնէ իր դրութիւնը, որու հետեւանքով ոչ երկար քալել կրնայ, ոչ ալ լուրջ աշխատիլ» (Գ. Բ., *Նիկոյ Աղբալեան*, էջ 123): Մարտ 1946ին, Աղբալեան շնչարգելութեան ծանր տագնապ անցուցած եւ հազիւ մահէն խուսափած է:

¹⁸ Յիսուսեան միաբանութեան անդամ եւ հայագետ Յայր Յովհաննէս Մարեան (1888-1965) Պէյրուքի Սէն-ժոզէֆ համալսարանի Արեւելեան Դպրութեանց հիմնարկի հայագիտական ամպիոնի հիմնադիր ու վարիչն էր (1933-1965): 1945ի կէսերուն ձեռնարկած էր «բանասիրական ասուլիս»ներու շարքի մը: Առաջին ծանուցման համար, տե՛ս *Ապրարար*, 2 յունիս 1945:

¹⁹ Այս նախադասութիւնը կրճատուած է տպուած բնագիրէն, ներածականին եւ ստորագրութեան կողքին (տե՛ս Աղբալեան, *Գրիգոր Նարեկացի եւ Կորիւն*, էջ 77):

1945, Copy 24

Handwritten notes

Handwritten title

Handwritten body text, appearing to be a list or series of notes.

Handwritten signature or name

«ՏՂԱՍԱՐԴՈՒ» ԵՒ «ԿՆՈՋ» «ՍԵՐԵՐ»Ը

ՎԻՈԼԷԹ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԻ ԴԱՐԵՎԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Մ օտ հարիւր տարի առաջ՝ 1919թ. օգոստոսին, գերմանական «Der Sturm» հանդէսում տպագրուած բանաստեղծութիւնը մի գիշերուայ մէջ հանրայայտ դարձրեց հեղինակին՝ Կուրտ Շուլիթերսին: Եւ ոչ միայն Շուլիթերսին, այլեւ վերնագրում նշուած Աննա Բլումին:


Դադա-էքսպրեսիոնիստա-կոնստրուկտիւիստական ամենայայտնի բանաստեղծութիւնը, սակայն, բեւեռացրեց կարծիքները՝ սկսած խմբագրութիւնը հեղեղող նամակներից, որ հարցնում էին՝ ով է Աննա Բլումը, մինչեւ յաջորդ տարի կայացած Բեռլինի առաջին միջազգային դադայիստական փառատօնում ցուցադրուած «Աննա Բլումի մահը» խրտուիլակը: Բանաստեղծութիւնը նմանակուում ու ծաղրանմանակուում էր տարբեր թերթերում ու ծայրայեղ հակադիր վերաբերմունքների արժանանում:

Եւ չնայած բանաստեղծութիւնը մըշակոյթի պատմութեան մէջ մտաւ որպէս սիրային *սոնետի* պարոդիա, «ժամանակաշրջանի քառուսի ու խելագարութեան խորհրդանիշ եւ բանաստեղծութեան նոր լեզուի նախակարապետ», որոշ դադայիստներ դա համարում էին այնքան *սենսիմենտալ* ու *ռոմանտիկ*,



որ յայտարարում էին, թէ դադան մերժում է «Աննա Ծաղկունք»ը:

Շուլիթերսի ու դադայիստների փոխյարաբերութիւնները սիրոյ ու թշնամանքի հերթագայման պատմութիւն են: 1918ին առաջին համաշխարհային պատերազմից վերադարձած Շուլիթերսը սկսեց իր *սոնետի* հրատարակել «Der Sturm» (Փոթորիկ) հանդէսում եւ համագործակցել հանդէսի ու համա-




նուն պատկերասրահի շուրջ հալաբլաժ *արտիստների* հետ: Շուկիթերսի «Die Kathedrale» գրքի վերնագիրն արտացոլում էր արուեստի՝ որպես տաճարի մեջ նուկիրումով համախմբուելու *էքսպրեսիոնիստների* խորհրդանշանը: Իսկ կազմի ճերմակ քառակուսու մեջ հեղինակը դրել էր «Չգուշացէք. հակադադա» գրութիւնը որպէս կնիք: Այդ օրերին *դադայիստները* Շուկիթերսի դէմ էին տրամադրուած, նրան համարում էին *բուրժուական* եւ ոչ բաւարար չափով քաղաքական: Իսկ յետագայում «Աննայ Ճաղկունք» գրքի շապիկին արդէն չկար «հակա» նախածանցը, այլ միայն՝ *դադա*:

Կուրտ Շուկիթերսը (1887-1948)՝ գերմանացի նշանաւոր նկարիչ, բա-

նաստեղծ, *դիպայներ*, ճարտարապետ եւ *էստիստը*, «բազմարտիստ» էր, որ ստեղծագործում էր ամենատարբեր *ժանրերով*՝ սկզբունքօրէն խախտելով դրանց սահմանները: Ինքը Շուկիթերսը բացատրում էր տարբեր *մեղիստներով* ու ձեւերով աշխատելու իր նախասիրութիւնը. «Պատճառը ոչ թէ իմ աշխատանքների շրջանակն ու հորիզոնը ընդլայնելու, այլ *արտիստ* լինելու ցանկութիւնն է, *արտիստ*, ոչ թէ մէկ *ժանրի* մասնագետ»:

Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ «ամէն ինչ աւերակների էր վերածուել, եւ անհրաժեշտ էր այդ փշրանքներից ինչ-որ նոր բան յօրինել», – գրում էր Շուկիթերսը, բայց «նոր բան յօրինողները» նրան առանձնապէս չէին ընդունում, *դադայիստների* համար նա *ռոմանտիկ* էր, *բուրժուական*, սիրուն բաներ էր սիրում: Սակայն մինչեւ իր կեանքի վերջը՝ 1974ը, դադային ամենահաւատարիմ բանաստեղծ Ռիչարդ Յիւսենբէկը, որ երագում էր «գրականութիւն անել զէնքը ձեռքին» եւ իր համախոհների հետ դաւանում էր «դադան Գերմանիայի բուլշեւիզմն է» գաղափարը, յետագայում Շուկիթերսին պիտի այլ կերպ գնահատեր. «Նա շատ հեզմական էր՝ *ռոմանտիկ*, չափազանց վերացական՝ *պուրոնէալիստ*, եւ շատ անիշխանական՝ *կոնստրուկտիւիստ* լինելու համար»:

Եւ այսպէս, *աւանգարդիստական* սալոններից դուրս Շուկիթերսը ստեղծեց իր «նոր բանը»՝ Merz մեթոդ-ոճը՝ գերմաներէն «առեւտուր» (*komerz*) եւ «ausmerzen»՝ «քոքահան անել, շարքտել» իմաստների բառախաղով՝ քան-



ղելու ամեն ինչ ու ամեն ինչ իրար խառնելու համար: 1923թ. Շուլիթերսը հիմնեց նաև «Merz» անունով հանդես ել մինչև 1932թ. հրատարակեց 24 համար:

Իր «Արտիստների ինքնորոշման իրավունքը» էսսեում Շուլիթերսը գրում է, որ Merz *սոնետի* վերացական է եւ Merz նկարչության պես օգտագործում է ամբողջական հատուածներ թերթերից, վահանակներից, կատալոգներից, խօսակցութիւններից եւ այլն՝ փոփոխելով կամ անփոփոխ: Եւ այդ Merz բառը Շուլիթերսին տուեց կատարեալ արդարացում՝ անել, ինչ ուզում է, որպէս արուեստ: Նրա բազմաժանր ու բազմատեսակ գործերը հաւաքուել են pppppp (Poems, Performance, Pieces, Proses, Plays, Poetics)

հաւաքածուի մէջ, որի հրատարակիչները հեղինակին համեմատում էին Ջոյսի հետ. «Շուլիթերսը *սոնետի* հընչեցրեց այնպէս, ինչպէս «Ուլիս»ը՝ վէպը»:

Շուլիթերսը Բեռլինի դադայի պաշտօնական անդամ չէր, բայց կապուած էր *արտիստների* շատերի հետ: *Սոնետի* մասին ասում էր. «Բանաստեղծութեան տարրերը տառերն են, վանկերը, բառերը, նախադասութիւնները: *Սոնետի* ստեղծում է այս տարրերի փոխադրեցութիւնից: Իմաստը կարելու է միայն այն դէպքում, եթէ ծառայում է որպէս նման տարրերից մէկը: Ես նախընտրում եմ անիմաստութիւնը»:

Նրան անուանում էին «աղբի մեծագոյն գիտակ». *սոնետի* մէջ, նոյնիսկ պաշտօնապէս *դադայիստների* շատ աւելի, իմաստի անտեսումը առիթ էր տալիս, որ նրա աշխատանքները բնութագրուեն իբրեւ «հիանալի անիմաստ աղբ»:

Արտանետման, արտաթորման եւ թափօնի (ejecta, disjecta, detritus) վարպետի մոլուցքը ծայրայեղ էր. «Նա բառերը կողք-կողքի շարելով՝ նկարում էր, պատկերներն օգտագործում էր նախադասութիւններ գրելու համար եւ քանդակում էր բառացիօրէն ամեն ինչից»:

Թէ ինչ իմաստ ունէր անիմաստութեան այս դաւանանքը *դադայիստների* համար՝ վերլուծում է Վահան Իշխանեանը իր «Չուգահեռ. Բակունցի «Միրհաւը» եւ Ուոլլերի «Մեդիսոնի շրջանի կամուրջները» յօդուածում («Ինքնագիր» <https://inknagir.org/?p=1937>):

«*Դադայիստ*ը յեղաշրջում էր անուստ արուեստում եւ հռչակում էր ... գաղա-

փարներ, գեղագիտություն ու ազատություններ... *սեփս*, յեղափոխություն, *սկանդալ*, հասարակությունը *շոկի* մեջ գցել, հակաարուեստ, *կոլաժ*, կրօնի մերժողականություն, *պսիխոանալիզ* եւ այլն: *Դադայիստ* բանաստեղծները գրում էին յաճախ միայն ձեռով պայմանաւորւած բանաստեղծություններ, անիմաստ թուերի ու հնչիւնների *պոէզիա* (ձայնային բանաստեղծություններ), առանց կետադրութեան արձակ, ձեւախեղում բառերի իմաստները:

Դադայիստներն ասում էին. «Դադայիզմը «ստեղծուած» շարժում էր, այն օրգանական արտադրանք էր՝ որպէս *ռեալիզմ* երկնքում ճախրող, այսպէս կոչուած, «սուրբ» արուեստի, որի ներկայացուցիչները խորհրդածում էին խորանարդների ու *գոթիկայի* մասին... Դեռ քսանական թուերից գերմանական իշխանութիւնները սկսել էին ճնշել *դադայիստներին*, իսկ Երրորդ ռեյխը եւ անձամբ Յիտլերը *մոդեռնիզմի* ուղղությունները՝ դադա, *սիրոռէալիզմ*, *էքսպրեսիոնիզմ* եւ այլն, հռչակեցին «*դեգեներատիւ* արուեստ» ու արդէն 30ականների սկզբներից *մոդեռնիստներին* սկսեցին հալածել, հաւաքեցին նրանց ըստեղծագործությունները եւ մեծ մասը վառեցին:

Մոդեռնիզմը սկսեց հալածուել Սովետում՝ արդէն յեղափոխութիւնից շատ չանցած, գրականութիւնն ու արուեստը վերցուեցին պետութեան հսկողութեան տակ... 32 թուին Կոմկուսը որոշում ընդունեց *լիկուիդացնել* տարբեր գրական խմբաւորումները՝ համարելով, որ դրանք խանգարում են գրականութեան զարգացմանը, եւ տեղը ստեղ-

ծել միասնական գրական կազմակերպություն:

Բռնապետություններին՝ լինի միապետութիւն, թէ ամբողջատիրութիւն, իմաստ է անհրաժեշտ, քանի որ, երբ իմաստը վերանում է, *ռեպրեսիաներն* անիմաստ են դառնում, իսկ երբ *ռեպրեսիաներն* անիմաստ են դառնում, ապա իշխանութիւնն էլ է անիմաստ դառնում, երբ իշխանութիւնն է անիմաստ դառնում, իշխողները կորցնում են այն»:

Շուկիթերսը նոյնպէս ենթարկուել է *նացիստներ*ի հալածանքներին, «*դեգեներատ* արուեստ»ի ցուցահանդէսին ներկայացուած նրա 16 գործերը ոչընչացուեցին, իսկ լուսանկարիչ որդին *նացիստներ*ի հետապնդումից մազապուրծ փախաւ երկրից. նրան հետեւեց եւ հայրը՝ նախ Նորվեգիա, ապա, *նացիստներ*ի ներխուժումից յետոյ՝ Անգլիա: Անգլիայում եւս նրա կեանքն ու ստեղծագործութիւնը դժուար էին՝ քաղաքից քաղաք՝ որպէս թշնամական երկրի ներգաղթեալ, իսկ պահպանողական *ջենթլմէն*ների համար այնքան անընդունելի, որ վերջապէս 1944ին արդի արուեստի ցուցահանդէսին տարած իր *կոլլաժ*ը ծաղրի ենթարկուեց, իսկ Ursonate հնչուն *պոէզիայի* իր *պերֆորմանս*ի ժամանակ BBCի երկու ներկայացուցիչներ ցուցադրաբար լքեցին դահլիճը:

Մէկ օրուայ մէջ Շուկիթերսին յայտնի դարձրած բանաստեղծութիւնը, բարեբախտաբար, թարգմանուած է հայերէն: Թարգմանութիւնն արել է Սամուէլ Մկրտչեանը՝ Գերմանիայում 170 տարբեր լեզուներով «Աննա Բլում»ի հրատարակութեան առիթով: Գրքից հայե-

րեն թարգմանութեան լուսապատկերն ինձ է տրամադրել գերմանացի *արտիստ* Կատարինա Ռոթերսը:

Յաւօր, հնարաւոր չէ այլեւս Սամւել Մկրտչեանից ճշդել, թէ ինչ լեզուից է նա կատարել թարգմանութիւնը, ենթադրաբար՝ անգլերէնից: Թարգմանիչը չի հրապարակել այս աշխատանքը Հայաստանում, գուցէ որովհետեւ պիտի խմբագրէր: Յամենայնդէպս, նրա «Աննա Ճաղկունքը մի թռչուն է» տողը, որ նաեւ անգլերէն տարածուած ձեւն է, ունի նաեւ այլ թարգմանութիւն՝ Anna Bloom has a screw loose, իսկ «Ինչ գոյն ունի Աննա Ճաղկունքը»՝ What colour is the screw?: Ակնյայտ է, որ անգլերէն այս տարբերակները ակելի անհետեթ ու անիմաստ են դարձնում հատուածը՝ Շուիթերսի սկզբունքներին հաւատարիմ:

Յօգուտ երկրորդ տարբերակի է խօսում նաեւ այն փաստը, որ հէնց հեղինակը՝ Շուիթերսը, թարգմանել է իր բանաստեղծութիւնն անգլերէն, որտեղ ոչ թէ «թռչուն» է գրել, այլ՝ «screw» (անիւ, պտուտակ): Դա կարող է լինել կամ գերմաներէն «vogel» բառի բազմիմաստության պատճառով, կամ «vo-gel» և «vögel» բառերի «թռչուն» եւ «անիւ» կամ «պտուտակ» իմաստների բառախաղ կամ անգլերէն թարգմանչի պարզ անգիտութիւն, որ օ-ի գլխի գոյգ կէտիկը զանց է առել՝ յանուն իր պատկերացրած բանաստեղծականի: Այնպէս որ, ինչպէս Չարենցի յայտնի «բառ» եւ «բար»ի դէպքում հեղինակի ռուսերէն թարգմանութիւնն է «բառ»ի տարբերակը ընդունելի դարձնում, այնպէս էլ Շուիթերսի «անիւ»ն ու «պտու-



տակ»ն են նախընտրելի՝ մանաւանդ եթէ ուշադրութիւն դարձնենք նաեւ գրքի շապիկի հեղինակային ձեւաւորման մէջ տեղ գտած անիւի պատկերներին եւ իր խոստովանութեանը, թէ ինքը շատ է սիրում անիւներ եւ պատերազմի տարիներին ռազմական մեքենայաշինութեան գործարանում աշխատելիս յայտնաբերել է, որ «մեքենաները մարդկային հոգու վերացարկումն են»: Իսկ եթէ նկատի ունենանք նաեւ Աննայի՝ «թուլացած պտուտակ» ունենալու ակնարկը, որ համահունչ է բանաստեղծութեան մէջ կնոջ սեռականացուած կերպարին, կարմիրի ու ճերմակի համադրութեամբ մատչելի եւ «մաքուր» կնոջ համաձուլուածքին, նրան առջեւից ու յետեւից նոյնութեամբ «կարդայլու» հէնց բուն անուան ընտրութեանը՝ Ա-Ն-Ն-Ա, եւ այլ սեռական ենթատեքստերը, կը տեսնենք կանացի ինքնութեան ու սեռականութեան մի տղամարդկային ընթերցում, որ խոստովանում է կնոջ անհասկանալիութիւնը, «անհաշուելիութիւնն» ու առեղծուածայնութիւնը՝ որպէս ուրիշի:

Մի խօսքով՝ ահա Սամուել Մկրտչեանի թարգմանած «Աննա»ն.

Աննա Ծաղկունքին

Ով դու, սիրելիդ իմ 27 պայարաններին, ես սիրում եմ քեզ:
 Քեզ, քո, քոնը, քեզնով, ես քոնը, դու իմը... Մե՛նք:
 Սա, ի դեպ ասած, ասածին չվերագրենք:
 Ո՛վ ես դու, անհաշուելի կին, դու կաս, կան՞ դու:
 Ասում են, թե կայիր դու:
 Թող ասեն, թե ինչպէս է եկեղեցու աշտարակը կանգնում:
 Դու գլխարկդ ոտքերիդ ես հագնում եմ քայլում ես ձեռքերիդ վրայ,
 Ձեռքերիդ վրայ ես քայլում դու:
 Հէյ, քո կարմիր պեշառը, սպիտակ ծայքերով, պարուրուած...
 Կարմիր եմ սիրում Աննա Ծաղկունքին, կարմիր եմ սիրում ես քեզ:
 Քեզ, քո, քոնը, քեզնով, ես քոնը, դու իմը... Մե՛նք:
 Սա, ի դեպ ասած, սառը կրակի մէջ թափենք:
 Կարմիր Ծաղկունք, կարմիր Աննա Ծաղկունք, ինչ են ասում մարդիկ:
 Մրցանակի հարց.
 1) Աննա Ծաղկունքը մի թռչուն է
 2) Աննա Ծաղկունքը կարմիր է
 3) Ինչ գոյն ունի Աննա Ծաղկունքը:
 Կապոյտ է գոյնը քո դեղին վարսերի,
 Կարմիր է գոյնը քո կանաչ թռչունների,
 Դու՝ հասարակ աղջնակ՝ տնային շորերով,
 Դու քաղցր կանաչ գապան ես, ես սիրում եմ քեզ:
 Քեզ, քո, քոնը, քեզնով, ես քոնը, դու իմը... Մե՛նք:
 Սա, ի դեպ ասած, իստոնարանը գցենք:
 Աննա Ծաղկունք, Աննա, Ա..... Ն.....Ն.....Ա:
 Ես թափում եմ քո անունը:
 Անունդ թափում է հալած մոմի պէս:
 Դու գիտես, Աննա, գիտես դու արդէն,
 Քեզ կարող են յետելից կարդալ:
 Եւ դու, դու բարձրեալդ ամենքից,
 Որքան յետելից ես՝ նոյնքան առջելից:
 Ա..... Ն..... Ն..... Ա:
 Հալած մոմը կաթում է՝ ՇՈՅԵԼՈՎ իմ մէջքը:
 Աննա Ծաղկունք,
 դու թափուող գապան ես,
 Ես..... սիրում..... եմ..... Քեզ:

Կարճ ԶԿրթում (1987-1948)

Անձն Ծաղկունքի

Ով դու, սիրելի ի՞նչ 27 չքայրաբաններու, եւ սիրում ե՞ս քեզի
Քեզ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, եւ ի՞նչ, դու ի՞նչ..... շեշտի:

Աս, ի թե՛ սաստ, սաստի՛ն շեշտաբանի:

Ով եւ դու, սեփականելի կի, դու ես, կու՞ս դու:
Ասում ե՛ս, ի՞նչ կարի դու:
Ի՞նչ սաստ, ի՞նչ ի՞նչ եւ ի՞նչ ի՞նչ սոցալիստական:
Դու զիստի՞ն ոչ ի՞նչ եւ կարճում, և կարճում եւ ի՞նչ ի՞նչ դու,
Զիստի՞ն դու եւ կարճում դու:

Ի՞նչ ի՞նչ կարճի չեղար, սպառնալ ի՞նչ կարճում սպառնալ...
Կարճի եւ սիրում Անձն Ծաղկունքի, կարճի եւ սիրում եւ քեզի:

Քեզ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, եւ ի՞նչ, դու ի՞նչ..... շեշտի:

Աս, ի թե՛ սաստ, սաստի՛ն կարճ ի՞նչ ի՞նչ:

Կարճի Ծաղկունքի, կարճի Անձն Ծաղկունքի, եւ սաստ Կարճի:

Չքայրաբանի կարճ

1) Անձն Ծաղկունքի ի՞նչ ի՞նչ 5

2) Անձն Ծաղկունքի կարճի 5

3) Ի՞նչ ի՞նչ ու՛րի Անձն Ծաղկունքի

Կարճի եւ կարճի ի՞նչ ի՞նչ կարճի,
Կարճի եւ կարճի ի՞նչ ի՞նչ ի՞նչ ու՛րի,
Դու սաստի՛ն սոցալիստական ի՞նչ ի՞նչ,
Դու կարճի կարճի կարճում եւ, եւ սիրում եւ քեզի:
Քեզ, ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ, եւ ի՞նչ, դու ի՞նչ..... շեշտի:
Աս, ի թե՛ սաստ ի՞նչ..... կարճի կարճի:

Անձն Ծաղկունքի Անձն, Ա.....Ը.....Յ.....Ա:

Եւ կարճում եւ ի՞նչ ու՛րի:

Անձնի՛ն կարճում եւ կարճում ի՞նչ կարճի:

Դու ի՞նչ, Անձն, ի՞նչ, դու կարճում,
Ի՞նչ կարճում եւ կարճում կարճում:

Եւ դու, դու կարճում ու՛րի,

Ի՞նչ ի՞նչ ի՞նչ եւ կարճում սոցալիստական:

Ա.....Ը.....Յ.....Ա:

Կարճում ի՞նչ կարճում եւ ԶԿրթում ի՞նչ ի՞նչ:

Անձն Ծաղկունքի,

Դու կարճում կարճում եւ,

Եւ..... սիրում..... եւ..... քեզի:

Կարճ. Անձնի՛ն Սոցալիստական

Ի հարկե, ակնյայտ է սիրային *պոե-
պիայի պարոդիան*, սիրային գեղումնե-
րի եւ թուերով համարակալած մրցա-
նակային հարցերի, բանաստեղծակա-
նի ու հակաբանաստեղծականի *տրանս-
կոնտեքստուալ* խաղով վերասլաց տը-
րամադրութիւնը ջարդելու, ապառո-
մանտիպացնելու միտումը:

Սակայն կարելոր է յիշել, որ *պարո-
դիան* տարբեր տեսակների է լինում, եւ
ծաղրանմանութիւնը այդ տեսակներից
ընդամենը մէկն է: Նմանակման այլ տե-
սակներում *ժանրի* կամ որեւէ *տեքստի*
որոշ յատկանիշների կրկնութիւնը բնօ-
րինակի արժեզրկման միտում չունի.
յաճախ դա պարզապէս քննադատա-
կան *դիստանցիա* է ապահովում՝ որոշ
տարբերութիւններ ընդգծելու սիրոյն:
Տուեալ դէպքում այդ քննադատութիւ-
նը գործում է իբրեւ ինքնալեզիտի-
մացման *ժեստ*. *ռոմանտիկ* սիրոյ չար-
չըրկուած կարծրատիպերից ու արտա-
յայտչաձեւերից ազատագրելով, մաք-
րելով *ժանր*ում կուտակուած մշակու-
թային փառք՝ վեր հանել նախնականը՝
ինչպէս առաջին անգամ, արուեստի
պատմութեան մէջ վրայ-վրայի դարսը-
լած ու ինչ-որ թեմա պարուրած, իրե-
նով արած վարագոյրները յետ տանել
ու տեսնել՝ տակը ինչ կայ իրականում:

Եւ բնաւ պատահական չէ, որ Շուի-
թերսի ժամանակակից որոշ *դադա-
յիստ*ներ «Աննա Ծաղկունք»ը հէնց չա-
փազանց զգացական բանաստեղծու-
թիւն են համարել, որովհետեւ այն, *պա-
րոդիայի* ենթարկելով սիրային բանաս-
տեղծութեան «վաշ-վուշ-անուշ»ը, ձըգ-
տում է ցոյց տալ, թէ ինչպէս է սերը
քանդում-աւերում լեզուն, որը փորձում

է նկարագրել իրեն, այսինքն՝ այն լե-
զուն, որը «իմաստ» է արտայայտում:

«ՏՂԱՍԱՐԴՈՒ» ԵՒ «ԿՆՈՋ» «ՍԵՐԵՐԸ»

«Աննա Ծաղկունքը» տղամարդու սի-
րոյ մասին է, իսկ տղամարդու սերը
տարբեր է կնոջ զգացումից, այնքան
տարբեր, որ արժէր նաեւ տարբեր բա-
ռերով անուանել դրանք:

Համեմատութեան համար կար-
դանք կնոջ գրած մի բանաստեղծու-
թիւն սիրոյ մասին, ահա Արփի Ոսկան-
եանինը.

Հեռու
*Որպէսպի դու ապրես, ես պիտի մեռնեմ:
Եւ էլի խորուեց սերը կոկորդում...
Ինչ ահաւոր ծանօթ է ամէն բան:
Կեանքս՝ հին յունական ողբերգութիւն՝
վաղուց գրուած ու խաղացուած,
եւ հեղինակն է մեռած, եւ հերոսները:
Ես՝ անհաղորդ հանդիսատես,
կը դիտեմ իմ մահը առանց կարեկցանքի.
այնքան հին են կրքերն այդ:
Այն ամէնից, ինչ կատարում է այստեղ ու հիմա,
այն ամէնից, ինչ կատարում է ինձ հետ,
հեռու եմ միլիարդաւոր լուսային տարիներ...
Ես վարմանում եմ, որ դեռ խօսում եմ այս լեզուով,
որ խօսում եմ ընդհանրապէս,
որ ասում եմ՝ ես եւ նկատի ունենում ինձ:*

Ինչպէս տեսնում ենք, այստեղ նոյն-
պէս խօսում է սիրոյ՝ լեզուն քանդելու
յատկանշի մասին, թէ ինչպէս է խախ-
տըւում նշանակեալի եւ նշանակչի

միջեւ կապը, ընդ որում՝ նշանակեալը «ես»ն է, այսինքն՝ սերը քանդում-աւերում է նաեւ կնոջ ինքնութիւնը, միայն թէ այս դեպքում դա ոչ թէ ցուցադրում է, այլ պատմում, ընդ որում՝ ամբողջութեամբ իմաստալից:

Ըստ կարծրատիպի՝ պիտի որ հակառակը լինէր. տղամարդը պիտի նկարագրէր, վերլուծէր իմաստալից, իսկ կինը «անյօդաբաշխ» արտայայտէր զգացումները:

Բայց սերը «համրացրել» է կնոջը, իսկ լեզուն տղամարդկանց է պատկանում. «համր»ը կարող է խօսել «ուրիշ»ի հետ նրա լեզուով, կարող է խօսել, եթէ միայն օգտագործի տրուած լեզուն, արդէն եղածը, որով հնարաւոր կը լինի նկարագրել այնպէս, որ ուրիշները՝ տղամարդիկ, հասկանան, թէ ինչ է սիրուց քանդուելը:

Այդպէս կին դառնալու ընթացքն է նկարագրում Անի Ասատրեանը իր «Խեղդուած մարմիններ» պատմուածքում.

«Մի տեղ, որտեղ իրերի անունները անջատուած էին այն առարկաներից, որ նշանակում էին, մի տեղ, որտեղ առարկաները չունէին տեղեր, որտեղ առարկաներն ու անուանումները տարանջատուած էին իրարից, ու ամէն մէկն իր ինքնուրոյն կեանքն ուներ» (<https://inknagir.org/?p=7471>):

Տղամարդու «սեր»ը հանրայնօրէն ընկալելի բաղձանքն է մարմնաւորում, նա տենչում է այն կնոջը, ում ուզում են ուրիշ տղամարդիկ կամ ուրիշ մի տղամարդ: Նրա ցանկութեան *օրիելտը* ոչ թէ *կոնկրետ* կինն է, այլ սեփական ցանկութիւնը, իղձը, տենչանքը, նա ցանկա-



նում է ցանկանալը: Իսկ ցանկանալը *լեզուիմ* ու արժեքաւոր է, երբ ճանաչուում-ընկալում է, հասկանալի է, թէ ինչու է ցանկացում, դրա համար էլ ցանկալին, ուրիշի աչքին այդպէս ընկալողն է, ուրիշի ցանկութիւնն է, որ հրահրում է իր ցանկանալը եւ վարկաւորում այն: Ի հարկէ, ցանկալին անփոփոխ ու մէկընդմիջ տրուած չէ, այն ստեղծւում ու վերստեղծւում է պարբերաբար, եւ ամէն անգամ, երբ մշակոյթը զանգուածայնացնում ու մաշէցնում է որեւէ պատկերացում, արուեստը վերստեղծում է այն: «Աննա Ծաղկունք»ը այդպիսի վերստեղծում է՝ մշակոյթում իշխող՝ կնոջ *Ֆետիշացման* հերթական *Ֆանտասիա*:

Յենց այդ պատճառով է, որ «Աննա Ծաղկունք»ը խօսում է ոչ թէ կնոջ հետ,

ոչ էլ կնոջ մասին, այլ՝ ուրիշ բանաստեղծութիւնների հետ, արուեստի պատմութեան եւ դա ստեղծող տղամարդկանց հետ, որպէսզի ցուցադրելով իր բաղձանքը՝ ստեղծի ուրիշների համար բաղձանքի առարկայ, այսինքն՝ ինքը՝ բանաստեղծութիւնը դառնայ այդ առարկան:

ԺԺԺԵԿ իր մի հարցազրոյցում *Ֆանտաստիկայի* կառոյցը վերլուծելիս խօսում է Բեռլինի պատի փլուզումից յետոյ առաջացած՝ Արեւմուտքի հմայուած հայեացքի մասին՝ առ արեւելեան Եւրոպան՝ որպէս բացառիկ ուրիշի:

«Այն, ինչ Արեւմուտքին կախարդեց իսկական *դեմոկրատիայի* շատրուանումը չէր, այլ Արեւելքի հայեացքն առ Արեւմուտք: Միտքն այս է՝ չնայած մենք գիտենք, որ մեր *դեմոկրատիան* այլասերուել է, ու այլեւս *դեմոկրատիայի* հանդէպ խանդավառութիւն չունենք, բայց դրսում դեռ մարդիկ կան, որ նայում են մեզ, փառաբանում են մեզ եւ ուզում մեզ նման դառնալ: Չնայած մենք մեզ էլ չենք հաւատում, բայց դրսում մարդիկ կան, որ դեռ հաւատում են մեզ: Այն, ինչ ոչ միայն քաղաքական շերտերում, այլ շատ աւելի լայն ոլորտներում հմայեց Արեւմուտքին, Արեւելքի հմայուած հայեացքն էր Արեւմուտքի հանդէպ, եւ *Ֆանտաստիկայի* կառոյցը հենց դա է՝ այդ հայեացքը»:

ԺԺԺԵԿն ասում է, որ երեւակայութեան *օրիէկտը* ինքը հայեացքն է, եւ նկարագրում է դրա գործումը նաեւ *սեքսի* դէպքում: Ասում է, որ *սեքսը* սկզբնապէս արդէն *սոռնոգրաֆիկ* է այն իմաստով, որ դրանով զբաղուողները, երկուսով լինեն, թէ աւելին, միշտ

ենթադրում են մի երրորդ հայեացք, որի համար է դա կատարում: Եւ ամօթի հիմնական *ստրուկտուրան* էլ է դա. երբ սեռական գործողութեան մէջ էք, միշտ առկա է վախը, որ դա **ուրիշի** հայեացքով ինչպէս կը դիտուի: Այդ երրորդ հայեացքը, երեւակայումը, որ ինչ-որ մէկը նայում է ինձ, սկզբնապէս սեռականութեան մէջ կայ: Ու սեռական *Ֆանտաստիկան* այնքան էլ կապուած չէ ուրիշների *ակտը* դիտելու հետ, այլ հակառակը՝ *Ֆանտաստիկայի* ամենանախնական կառուցուածքն այն է, որ երբ սեռական *ակտի* մէջ եմ, խթանում եմ երեւակայութիւնս, թէ ինչ-որ մէկը նայում է ինձ:

Այդպէս է հեղինակը սիրում Աննա-յին՝ ընթերցողի հայեացքի սիրոյն:

Ի տարբերութիւն տղամարդու բանաստեղծութեան, որտեղ «ես»ը պինդ ու անխախտ է, իսկ կինը թափուած-քանդուած-հոսումն՝ դու, քո, քեզնով, ձեռքերի վրա քայլող, թարս ու շիտակ նոյնացրած՝ Ա-Ն-Ն-Ա, ում անունը տղամարդը թափում է հալած մոմի պէս՝ կինը խօսում է իր քայքայման մասին եւ խոսում է սիրեցեայի հետ: Կինը չի խօսում արուեստի պատմութեան հետ, եւ ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ տղամարդիկ որոշել ու արել են արդէն ամէն ինչ՝ սկսած «հին յունական ողբերգութիւններ»ից, ոչ թէ «բայի շուրթերով իմ հեքիաթը»* չկրկնելու համար, այլ այն պատճառով, որ ինքը խօսում է սիրոյ մասին, ոչ թէ ստեղծում ցանկալին: Եւ խօսում է ոչ թէ հեղինակ լինելու, այլ սիրոյ սիրոյն:

Այսպէս, տղամարդը քանդում է լեզուն եւ կնոջը, որպէսզի ապրի ինքը,

իսկ կինը պիտի «մեռնի» ինքը, ջնջի թի սերը: Հեղինակի մահն է, որ կեանք իրեն ու հեռանայ «միլիարդաւոր լու- է տալիս սիրուն:
սային տարիներ» հեռու, որպէսզի ապ-

** «Տղամարդ» եւ «կին» բառերը օգտագործուած են պայմանականօրէն:*

** Շահէն Թաթիկեանի «Բալենի» վէպում եւ դրա հիման վրայ Ֆրունզէ Դովլաթեանի՝ 1979թ. նկարահանած «Ապրեցէք երկար» ֆիլմում մայրը յուսահարւում է, որ որդին սիրած աղջկան դիմել է նոյն բառերով, ինչ իր ամուսինը՝ իրեն՝ «գողանալով» դա հօր սիրային նամակներից:*